բերին առ կատարածն աշխարհի .

Օրոք ընտրեաց աՂՁ , և սահմանեաց երթալ յաւքայուԹիւն երկնից , նՁ ոչ կարեն կորնչիլ ի դժոխս , քանզի անվրէպ են և անխափան սահմանուԹիւնք աՂՅ . ՈւրեմՆ զի արդ ասէ ՔՆ ԹԷ կարճեսցին աւուրք այնոքիկ նեղուԹեՆ և հալածանաց , վՈ ընտրելոց , զի և նՁ մի մոլորեցին , և մի կորնչեցին ?

ԳատասխաՆ . ԲանՁ ՔՆ այնոքիկ զայլ ինչ ոչ նշանակեն , բայց միայն ԹԷ խստագոյնք եղիցին , և անհնարին նեղուԹիՆ և հալածանք , որովք Նեռն խնդրեսցէ զարդարսն շրջել ի պաշտամանէն աՂՅ . Բայց կարճեսցին աւուրք այնոքիկ , քանզի Նեռին բռնուԹիՆ , և ԹագաւորուԹիՆ ոչ կացցէ , բայց միայն զերիս ամս , և ամիսս վեց , որոց զկնի , ասէ ԳՈ- ԹԷսաղ
րոս աՂոաքեալ , սատակեսցէ զՆա ՅՈ հոգւով բե- երկիՂ.
րանոյ եւրոյ . գլ Բ·Ը·

ՀԱՄԱՐ . ԽԴ.

ԼՈայնն նշանս մեծամեծս , և արուեստս .

ՀրաշՔ և նշան ՃշմարիտՔ է գործ ինչ որ ըստ էուԹԷ իւրոյ , կամ և ըստ կերպի գործելոյ զինա , ի վեր է քան զբնական զօրուԹիՆ հրեշտակաց և մարդկան ; զոր օրինակ յարուցանել զմեռեալն ; բանալ զաչս կուրաց ի ծնէ ; և այլք սոցին նմանՔ , զորս եԹԷ առնէ երբեք ոք ի մարդկանէ , զայն առնէ , ոչ յանձնէ իւրմէ , կամ բնական զօրուԹիՔ ինչ ; բայց անուՃամբն , և ամենակարողուԹիՔ աՂՅ . ինչ ԹէպԷտ ըստ սովորական կարգին , այն կարողուԹիՆ զինչնա առնելոյ ոչ տուՃն յաՂՅ , բայց միայն

ար-

արդարոց ; սակայն և ամբարշտաց տայ երբեմն աշխ առնել զնշանս , զոր օրինակ եթե Կայիափայ քահանայապետին մարգարէանալ ևս Յն , թէ մեռանելոց էր ևս ի վերուստ ազգն մարդկան . բայց զդոյշ լեր թէ ոչ կարէ աշխ , զիշխանութեն սքանչելիս առնելոյ տալ ամբարշտաց , և չարն , և ի հաստատուածս սուրբ , բայց միայն ի բարն ; ապա թէ ոչ , լինէր աշխ ինքեան հակառակ , և ներսով ամենակարողութիւն քանդէր , փոխանակ շինելոյ ; որ անհնարին նակ է .

Գ՚Հել լինին բազում անգամ նշանք , և արուեստ սուտք , որք հրաշք երևին , բայց հրաշք չեն , այլ պատրանք , խաբեութիք , և հրապուրանք Սատանայի , և համախոհից նր , որք կախարդութիք , և Թովչութիք ներքինոյ , ասղեցուցանեն զադեմս , որ պնոնք էին նշանք գիտաց Եգիպտացւոց ; և զայսպիսիս սուտ նշանս տացէ Ներոն ի կատարած . ուստի ասէ Պօղոս աշակերտել , թէ Ներոնն գալուստն իւր ի մէ գործութիք , և նշանօք , և արուեստիւք սուտ , Բ. առ Թեսաղ. Բ. Թ.

Ելից. Է. ը.

ՀԱՄԱՌՕՏ. ԻԸ.

Ուր գիշն , անդր ժողովեսցին արծուիք .

Աշխ սովորական առակ էր ի մէջ հրէից , որով կամէին ասել , թէ որք այնոքիկ դիւրաւ ժողովին ի միասին , որք ունին զբնական յօժարութիք առ միմեանս , զոր օրինակ , արծիւ , և գիշն . Նոյն առակաւ ծանուցանէ քրս , թէ յաւուրն յետնում , մեռեալքն յարուցեալք , դիւրաւ , և ի միում վայրկենին ժողովեսցին առ քրս դատաւորս երբեմն .

րեմն

ընծա դնէր նշանակէ ղատը Յն, յորժամ նկնեցէ դա-
ռել զաշխարհ. աղթուիք են մարդիկ առնել զնաւ Թ-նաւաղ
առ հասարակ, և մանաւանդ արդարքն, և ընտրեալքն Ք. զլ. Դ.
աղՅ, զորոց ասէ Պօղոս, Թէ և մեք նոքօք հանդերձ
յաիշատակութիւն առնօք ընդ առաջ ատՅն յօտս. ու-
րնեմն զոր օրինակ աթթուիք, և նոցին նմանք դի-
շակեր Թուշունք անդր ժողովին, ուր դէշն և դիա-
կունք նցին; նոյնպէս և ի կատարած ժողովեցին
սմ ազգք մարդկան, յանդիման լինել առաջի աստ-
նին Քի, և ընկալնուլ ի նմանէ հատուցանչիւր ըստ
գործոց նրոց.

ԱՔՆ Հելարնոս ասէ, Թէ Քն զաստեանն դա-
ատաստանին նրոյ անդ կացուսցէ, ուր առաջադոյն
կան եղէ մարմնի նր ի խաչափայտէ, մերձ ի Հոյն
ՏօսափաԹու, ուր եղեցի ընդ-հանրական դատաս-
տան; ըստ մարգարէուԹեն Տովելնայ. զլ. Գ. Բ.

ՀԱՄԱՐ. ԻԹ.

Եւ աստեղք անկեցին յերկինս.

Իսկոյն զկնի հալածմանց Հեռնն, եղեցին յեր-
կինս, և յերկրի զարհուրելի նշանք, Թէ ահաւա-
սիկ հասեալ է ժամանակ դարստեան ատՅն, և աւե-
րածոյն աշխարհի: Իւաւարնացն արեգական, և լու-
սնն; անկեցին աստեղք, և լուսատուք, ահագին
շարժմամբն սլացեալք երեւեցան ԹօԹափիլ յերկինս;
և ահադնաստեսիլ գնացուածս աստեղք, հրեղէն օդա-
ցուցմունք, վերամբարձ զբօսանք անկեցն ի վր եր-
կրի, և Թռչնեցն զօրուԹիք երկնից, և ծփանք հա-
տատուԹե խախտեալ ելանել և ասել ի տեղւոջէն

ներեսից. Յայնժամ խաչիանեցին հոսմոնք զառեղծ, և լուեցին ծովուանք և ալդուածի երկնից; ուստի վըդովեալ քակտեցին ամ ոլոքա տիեզերաց; և ապա երևեցին նշան որդւոյ մարդոյ, այսինքն քի փրկարար խաչն, նոյն ինքնին յորմէ կախեցաւ յաւուրն մահուան իւրոյ.

ՀԱՄԱՐ. ԼՕ.

Քէ աւուրն այնորիկ ոչ ոք գիտէ, ոչ հրեշտակք երկնից, և ոչ որդի, բայց միայն հայր.

Բանք այնոքիկ (և ոչ Լուկ) ոչ են համաձեռոյ, այլ համարիոն. ժդ. լբ. բայց թէ համարիոն նոցա, թէ համաձեռոյն, խնամք են յոյժ: քանզի քէ արդ ուղիղ է, եթէ զօրն կատարածդն ոչ գիտէ? Եւ քէ արդ Քրիստոս է, եթէ ժամն դատաստանին ծածկեալ է ի նմանէ?

Պատասխան. Ի լուծումն դժուարութեանն այնորիկ, կալ բնչ դիմեկնութեանն կրկին.

Ազուանին. ազգ աստնանեաց երկու կերպիւ մարդիկ, կամ առտրոգելիք. ազգք են մակաց իւրք անձնականք և առընչականք: այլք են մարդիկ քրոջակիք և հակառակ. համակարգ անձնական այն է որ առընկեալ ազգ, ոչ քան որում ազգ է, բայց քան որում անձն է; որպիսիք են, ծնօղ; ծնեալ; բղխօղ; բղխեալ; և վն այնորիկ զի այլ է անձն հօր; և այլ անձն որդւոյ; և այլ անձն հոգւոյն սրբոյ; վն այնորիկ անձնական մակարդն որ առընկեալ ունի անձին, ոչ կարէ առընկեալ միւսում.

սում. Օր օրինակ զհօրէ ասի Թէ ծնօղ է, որ ոչ կարէ ասել զորդւոյ ; և զՈրդւոյ ասի Թէ է ծնեալ, որ ոչ կարէ ասել զհոգւոյն սրբոյ. Ուստի յորժամ անձնական մակադիրն առընձեռի մեզ, և միայնում յերից անձանց, այս նոյն բառն, (մի) (միայն) բացառական է, և որոշական այլոց անձանց. Օր օրինակ յորժամ ասեմք Թէ, հայր միայն ծնօղ է; բառն այն (միայն) ի բաց առնէ զՈրդին, որ ոչ է ծնօղ, այլ ծնեալ: ի բաց առնէ և զհոգին սբ, որ ոչ է ծնօղ, և ոչ ծնեալ, բայց ի ծնողէ, և ի ծնելոյ բղխեալ.

Մակադիրն ընդարձակ, կամ հնական, այն է որ առընձեռի ազգ, ոչ ըստ որում անձն է, բայց ըստ որում ազգ է; որպէսի է կարողութիւն, նախանձումն Թէ; գիտութիւն; և այլք: և վն այսոցիկ զի երից անձանց մի և նոյն է ազգութիւն, մի և նոյն է գութիւն; հնական մակադիրն, որ առընձեռի միւմ անձին, առընձեռի և այլոց երկուց. Իսկ գիտել զօրն կատարածոյն, հնական մակադիր է; ուրեմն առընձեռի հաւասարապէս երից անձանց; և եԹէ ասի հայր միայն գիտել զօրն զայն, բառն այն (միայն) ոչ է բացառական երկուց այլոց անձանց; բայց բացառական է միայն առեղծուածոյ, որոց գութիւն այլ է քան զգութիւն ազգ. Նոյնպէս պարտ է ասել յաղագս այլ ամ հնական, և ընդարձակ մակադրաց ազգ. Ուրեմն, ասել Թէ ոչ ոք գիտէ զօրն կատարածոյն, բայց միայն հայր, է ասել Թէ զայն օրն ոչ գիտէ առեղծուած ոք, այլ միայն և եԹ ազգ.

Առարկեն. Ազգեսարանիչն ոչ միայն ասէ, Թէ զօրն կատարածոյն գիտէ միայն հայր, բայց պարզ ասէ Թէ Որդին ոչ գիտէ = ապա բառն այն (միայն) բացառական է և սորա. ապա սորա զօրն այն ոչ գիտէ.

Պատասխանեաց Երկիր . Օրըն կատարածոյն դիտէր Տէր , ոչ միայն ըստ որում ձեռն է ; այլ եւս ըստ որում մարդ է . քանզի որով հետեւ հայր ոչ դատէ

Յօհան. ոք , այլ զամենայն քան ընդունի , բայց զիւր դատաստան
Ե.ԽԲ. ետ որդուոյն , զի ամենեքեան պատուիցեն զորդին որպէս պատուեն զհայր . Ո՞վ անտեղեակ լինի աստուածն դատաստանին որոյ ընդունի առնելոյ է ի կատարած ? Բայց ըստ որում քան առաքեալ էր ի հօրէ , ծանուցանել մարդկան զնորհուրդս և Օրէնս ձեր , ոչ դիտէր զօրն և ժամն կատարածոյն ; այլ ընդ քան դիտէր զնա ամենեցուն , բայց այնպէս դիտէր , զի Թէ ոչ դիտէր ; քանզի ոչ ուներ ի հօրէ հրամանս զայն օրն ծանուցանել մարդկան . Օրը օրինակ յոյժ առ այլ Թադաւոր , այսու հրամանաւ , զի զպատճառս հրեշտակութեանն ետուն մի ծանուցանիցէ այլում ուրեք , բայց միւսն ևս Թադաւորին ; եթէ այլ ոք խնդրեսցէ ի նմանէ , Թէ մի՞ն ինչ իրին առաքեցար դու , և որպիսիք են համբ և խնդրուածք եղիանին որ առաքեաց զքեզ ? Նա պատասխանի տայ , և ասէ , ոչ դիտեմ ; այսինքն , դիտեմ ատեօք , բայց այնպէս դիտեմ , զի Թէ ոչ դիտէի , քանզի հրաման ունիմ ի Տեառնէ իմմէ , զայն ոչ ծանուցանել ուրեք .

Մատթ. ըստ նմին օրինակի ասէ Քր՝ յայլ ուրեք , Թէ ոչ ոք
Ժա. ԽԷ. ճանաչէ զհայր , բայց միայն որդի . Եւ դէմ Յօհաննու . ԺԵ. ասէ դեղեալս նմա , Օրըս լուսոյ է հօրէ ծանուցին ձեզ . լուեալ էր Տեն բազում ինչ ի հօրէ , զոր ծանուցեալ չէր աշակերտացն , քանզի ոչ ուներ ի հօրէ հրաման ծանուցանել նոցա . նոքա զոր ինչ լուեալ էր նոքա ի հօրէ , և առեալ էր հրաման ծանուցանել աշակերտացն , զայն նոքա ծանուցին նոցա .

Յայնժամ թէ կոչեն երկու յաղագսակն, մին առջի, և միւսն թողլն.

ԱՅն ինքն յաւուրս կատարածոյն աշխարհին, քո՛ զընկերն ունկնեսցէ յընկերէ, և ղդրկեցին ի դրկէ; և զորս գտանիցէ զարդարս, առցէ զնո՛ր ընդ նմա ի փառս արքայութե՛ան: Եսկ զորս գտանիցէ ամբարիշտս, թողցէ զնո՛ս ի մեղս նորին, քանզի այլ ևս ոչ էղիցի ժամանակ ապաշխարութե՛ան, և դատապարտեսցէ զնո՛ս ի դժոխս. Ուրեմն օրինակաւ միոյ որ առցի, և միւսոյ որ թողցի, ծանուցանէ մեզ Տէր, թէ անխտիր լինիցի և անխնայ դատաստան նո՛ր, յորում առանց ակնառութե՛ան հատուցանիցէ ի բաքանչիւրում ըստ գործոց ի՛րեանց, ոչ տալով ումեք այսու հետև ժամանակ ինչ ապաշխարութե՛ան.

ԳԼՈՒԽ. ԽԵ.

ՀԱՄԱՌՕ. Ա.

Նմանեսցի արքայութիւն երկնից տասն կուսանաց.

ԱՌԱԿԵՔ տասն կուսանաց, և առնն ի տար աշխարհ գնացելոց, խրատեէ զմեզ Տէր Յս, զարթուն կալ և պատրաստ; քան զի յորում ժամու ակն ոչ ունիմք, եկեսցէ որդի մարդոյ գաւառել զմեզ.

Արքայութիւն երկնից, է՝ որ նկատեցին, որ անհանդիստ պատեցաղմի ի վր երկրի. Առասն կուսանք նշանակեն զբովանդակութիւն հաւատացելոց; և ի մէջ նց հինգ են յիմարք, և հինգ խոհականք, քանզի ի մէջ հաւատացելոց, ոչ արդարք են ամենեքեան, և ոչ ամենեքեան չարք; այլ ադրարք են ընդ չարս խառնեալք. լապտեր է հաւատն. Զէթ է սէրն, և գործք բարիք. Յիմարք կուսանք որք զէթ ոչ բառնան ընդ իւրեանս, են քրիստոնեայք Թոյլ, պղերդ, որք այլ պէս հանդուրժեն, Թէ ինքեանց բաւական է ունել զքրիստոնէական հաւատսն, մինչ ունայն են և Թափուր ի գործոց բարեաց. Կուսանք խոհականք որք զէթ առնուն ընդ լապտերս իւրեանց, են արդարք, որոց գնահատել զի հաւատք առանց գործոց մեռեալ են, ձիթով սիրոյն, և բարւոք գործոց զարդարեն զլապտերն հաւատոյ. Ընդ ոմն յորում ունին զէթ, սիրոյն

է.

է. Տաճկն վենայինն, է ժամանակ ապաշխարութիւն
դու տայ մեզ աշխ, մինչդեռ կենդանի եմք. Ներհել,
և է քուն մտանել, է հեւանդանալ և մեռանիլ,
ի մէջ գիշերին, այսինքն անկարգապակի, և յորում.
ժամու մարդին ակն ոչ ուներն, լինի բարբառ, և
ահագնագոչ ձայն փողահարութիւն հրեշտակին, որ
աղաղակէ, յարիք մեռեալը, և եկայք ի դատաստան.
Տորտաքն մեծայնէլեան փողոյն յառնեն հուսանք,
այսինքն մեռեալքն ամենեքեան, և կազմեն զլսա-
տերս իւրեանց, այսինքն փորձեն զիւրեանց հա-
ւատն և գործն, զի արդ կարասցեն զհամարս տալ
արդարադատին Յի. Յիմարք հուսանք աղաչեն զի-
մաստունս, և ասեն, տուք մեզ ձեր ձէթէ, զի
չիջանեն լապտերքս մեր. բանք այնոքիկ, և որք
հեւանեն, ոչ պատկանին առ ՀուԹն առաքին, բայց
են միայն զարդարանք նոր, և նշանակեն, Թէ Թոյլ
և անպողպատ քրիստոնեայք որք յայնժամ գտանիցին
անապաշխարութեամբ, և ի բուն գործոց Թափուրք, աղ-
աղակեսցեն, և կոչեսցեն զօգնութիւն արդարոց, զի
մի չիջանիցեն լապտերք նոցա, և մի անարգիցին ան-
պատուղ հաւատք նոցա; բայց տարաժամ, և ի գուր
եղիցին աղաղակք նոցա. Պատասխանեն տան նմաստու-
նքն, և ասեն, գուցէ ոչ իցէ մեզ և ձեզ բաւական;
որ նշանակէ Թէ յաւուրն դատաստանին ոչ ապաւ-
ինեսցին արդարքն ի գործս ներքինս, բայց յողոր-
մութիւն աշխ եղիցին ապաւինութիւն նոցա: և դարձեալ
նշանակէ, Թէ յաւուրն յետնում արդարութիւն միմեանց
ոչ արդարասցին միմեանս, այլ դատեսցին ներքինքնին-
րք, ըստ գործոց իւրոց. աշխեն ներսումն ընդ
մարեն, երթայք ի վաճառականս, և գնեսջիք ձեզ.
որ ոչ կարի ասել Թէ որք յաւուրն դատաստանին

ու

ունայն պատմեցին ի բարն գործոց, ասելով նոյն ընդ ժամանակ գործելոյ զբարն; բայց նշանակէ թէ համեցին արդեօք յայնժամ մեղաւորք պատմել զպարսաւ ինչ ժամանակ ապաշխարելոյ, բայց ոչ գտան նոքունք; և վասն եցի նոյ դուռն ողորմութեանն ընդ, մինչև ցյաւիտեան.

ՀԱՄԱՐ. Ի՛Զ.

Ոչ այր մի գնացեալ ի տար աշխարհ,
կոչեաց զծառայս իւր .....

Օնոյն առակին ընթերնումբ ղուկասու. ԺԹ. և առ ոչ ինչ հատարելի է տարտանայնութեն որ թուի լինել ի մէջ երկու աշխատարանչաց, մինչ ասէ ղուկաս, թէ իւրաքանչիւրումն ծառայիցն տուաւ մի ճատան; նոյն մատթէոս ասէ, թէ ումեմն տուաւ քանքարք հինգ; և ումեմն, երկու; և ումեմն, մի. թէ-նէն այն քանքարացն, և ճատանց, թէ հինգ, թէ երկու, թէ մի, ոչ պատկանի առ էութեն առակին, որով կամի Տէր ծանուցանել մեզ, թէ զառեալն մեր յԱստուծոյ հաւատան և շնորհն պարտիմբ արկանել ի գործ, և շահիլ նոքօք; քանզի իւրաքանչիւր ոք, ըստ գործակցութեն իւրոյ առցէ վհատութիւնն.

Ուրեմն աշխարհ է Տէր Յս. քս. հատարակեալ յերկինս, ուստի գինն երկար ժամանակաց գալոյ է առնուլ ի մէնջ զհատարս. Ծառայքն նր են մարդիկ ամենեքեան, և մանաւանդ քրիստոնեայք. քանքարք են շնորհքն զոր աշխարհ մարդկան, ուստի շատ, և ուստի սակաւ; բայց իւրաքանչիւրում բաւական, զի կարենք, եթէ

կա-

կամիցի շահիլ նոքօք զարբայութիւն երկնից. Օր
ասէ Քն, Թէ իւրաքանչիւրում եա զբանբաւոն ըստ
իւրում կարի, ոչ կամի ասել Թէ ամէն զչնորհս իւր
տայցէ մարդկան ըստ արժանաւորութիւն նոց, կամ ըստ
կարի բնութիւն, ոյք հայհոյէր դեւաշունչ փիլաժիոս;
բայց կամի ասել, Թէ ամէն ողորմութիւն իւրով, և
ոչ վն բնական արժանեաց մերոց, սովորէ զչնորհս
իւր հաւիտեան այլ և այլ պաշտաման և կարգի իւ
րաքանչիւրոց ի մինչ. ամենաողորդաց տայ զչնորհս
խոստումն և հանճարոց, ի կառավարութիւն. փոք
րաւորաց տայ զչնորհս խոնարհութիւն, ի հնազան
դութիւն. կանանձեաց տայ զչնորհս սիրոյն առ մի
մեանս, ի կենցաղակցութիւն. ամենկին արանց, և ան
այր կանանց տայ զչնորհս ողջախոհութիւն, ի ժուժ
կալութիւն. Թշուառացելոց տայ զչնորհս երկայնամ
տութիւն, ի համբերութիւն. Քանքարօք դործել, և
շահիլ զայլ քանքարսն, Թէ հինգ, Թէ երկու, է
դործակից լինել չնորհացն ամ, և արժանի լինել
առատագոյն չնորհաց, ըստ չափոյ հաւատարմութիւն,
և դործակցութիւն մերոյ. Թաքուցանել զարծաթն,
է Թուլութիւն և կարճատեսութիւն խափանել զչնորհս
ամ, և ոչ դործել նոքօք. Յետ բազում ժամա
նակի դալ Տէն, և առնել հնամարս ի մէջ ծառայ
ից իւրոց, է ինչ կենցաղոյս այսորիկ դալ Քի, և
քննել զդործս իւրաքանչիւրոյ, ի յատուկ և առան
ձնական դատաստանին. Օր ասէ ծառայ չար և
վատ դուր նեա, դիտէն դի այր մի խիստ եմ, հնձես
զոր ոչ սերմանեցեր, նշանակէ զդժդոհութիւնս և զա
տաումնայն Թոյլ մեղաւորաց, որք յանդգնին բամբա
սել զամէն նեա. Ստուխոսօք պահանջել զարծաթն և ծա-

ասէ, է առնուլ ի նմանէ զհատասս, Թէ տուէալ նմա քանքարոցն և չսպրհօքն զի արդ գործեաց, և զոչչափ շահեցաւ նովաւ, Թէ անձին իւրում, կամ Թէ այլոց. Է վաղճանն զոր ասէ Տէր, առէք ի նմանէ զքանքարն և տուք այնմ որ ունիցի զտասն քանքարս; այն ոչ պատահական առ էութէն առակին, քանզի անդէղք են պարգևքն ՀՈՒ, և զտուէալ միւմ շնորհն յետ ոչ առնու ի նմանէ, տալ գնա միւսում; այլ զարդ ինչ է առակին որով ցուցանի Թէ չար ծառայ պատիժն առցէ վասնուզԹէ իւրոյ; և ծառայ ապնիւ զհատուցումն հաւատարմուԹէ իւրոյ ընդունիցի.

ՀՈՎՄԱՆ. ԼԱ.

Եւ յորժամ եկեսցէ որդի մարդոյ փառօք իւրովք, և ամենայն հրեշտակք ընդ նմա, յայնժամ նստցի յաԹոռն.....

Ամենէն ցայժմ Տէր մեր Յն քս, առակաւ զոմն ոչ անկարծանելի պայ ի դիջերն ակն հատանել զտուն առակաւ ծառային զոր եկեալ Տէրն դատեսցէ պատշաճաւոր; առակաւ կուսանացն որք ակն ունէին գալ առեանն փեսային; և առակաւ քանքարացն զորս տացն տուեալ ծառայից իւրոց, գործել և շահիլ նոքօք; այն ամ առակօք խրատեաց զմեզ Տէր զգոյ կալ և զարԹուն, զի յորում ժամու գայցէ դատել զմեզ, դատանիցէ զմեզ պատրաստս: Եակ այսու հետև ծանուցանէ, Թէ ինչ կերպիւ կատարեսցի այն զարհուրելի յետին դատաստան.

Է հատանելն կատարածոյն աշխարհին, եկեսցէ քս

քո հրեշտակօք իւրովք, և նստցի ի գերափայլ աթոռն լուսազարդ ամպոյն, և ժողովեսցին յանդիման նր ամ ազգք ի հորն Յօսափաթու. Յայնժամ սուր Տր երբն և հնուիլ քաջ, զոչխարս իւր, այսինքն զարդարսն մեհենեցւոյ յայծեաց, այս ինքն յամբարշտացդ, և վերացուցեալ զնս յօդս, կացուսցէ զնս ընդ աջմէ իւրմէ, ի վր լուսաւոր ամպոյ; և զայծեանս այսինքն զչարսն Թողցէ ի խոնարհ ի վր երկրի; և քննեալ զնա քանչիւրոյ գործն, հատուսցէ ամենեցունն զհատուցումն իւրեանց; արդարոց, զփառս արքայութե; և ամբարշտաց, զտանջանս յաւիտենական.

Եւ զդոյշ լեր Թէ ի հատանել արդարադատ Տէր զվճիռ դատապարտութե ի վր ամբարշտացդ, զինչ պատճառ առնէր կորստեանն նց: ոչ գողութի, ոչ չնութի, ոչ սուտ երդնուլ, ոչ զայլ ինչ ներգործական մեղքն զոր արարեալ նցէ նց; (Թէպէտ և վր այնպիսի մեղաց արժանն եղեցին անշէջ հրոյն) բայց դատապարտութե նց պատճառն է, զի ոչ արարին զբարն, զոր կարէին, և պարտէին առնել. Քաղցելոց ոչ եհատուն ուտել; ոչ արբուցին զծարաւեալսն; զօտարս ոչ ժողովեցին; ոչ զգեցուցին զմերկս; զհիւանդս, և զդոս ի բանտի, ոչ եհսին. Լուծեցին անօրէնս մեծատունք, զուծեցին, և զահիհարսիցին ածելով զնոսա զդրքանս չարչարանս կրեսցին վր անօրէնութե իւրեանց. Հաւատիցն որոտայ ի վր նց Տեառն Հաւաքեալ, Թէ Հնոդորմ դատաստան լիցի նելոց և ի վր այնմ որ զողորմութի ոչ առնիցէ. մղ. ե.Յե.

ԳԼՈՒԽ. ԽՕ.

ՀԱՄԱՐ. Գ.

Տայնժամ ժողովեցան քահանայապետքն ...

Ապժամ ղբուռն արկանեմ կարդել զպատմութիւն չարչարանաց և մահուընն Տեառն մերոյ Յի Քի, սաղմոսիմ, սիրելի ընթերցող, ապշեալ, տարակուսեալ, շինարեալ խառնիմ ի հոգի իմ, ածելով զմտաւն թէ ձեռ յաւետեանական, և անմահ զի արդ վաղճանի, զի արդ մեռանի? ձառագնորդեմ դու ինձ Տէր Տ՚ն, և լեր ինձ օգնական, զի խաղացեալ ի խորս անհանդիստ ծովուն չարչարանաց քոց, անդադարելի մի կորնչեցայց ի տատակութիւն մրրկի.

Տաղաչափ երկու բնութեց
ի Քէ Տէ.

Օրդղափառ վարդապետութիւն երկու բնութեց ի Քէ Տէ անշփոթապէս միաւորելոց ի մի դէմ, և ի մի անձն բանին ձայ, կամիմ ես հաստատել հեղաբար, առանց դառնութեան սրտի, և թարց խոստութեան բանից; ոչ բամբասելով, ոչ զրպարտելով, ոչ չիշտոյ տալով, ոչ վայրաբար կարգելով, այլ առնեն ումանք; բայց եղբայրաբար, միամտութեբ, և պարզ մեկնութեբ ածելով զջշմարտութիւն ի լոյս. Եւ քանզի մի աբեանակբ անտեղեակ են լեզուաց գառանկաց, և

զիսըս

զինս մեր ոչ կարեն ընթեռնուլ, կամ թէ և ընթեռնուցուն, ոչ կարեն նմանալ ըզնշեցեալսն; վասն այսորիկ լսելին ոչ հարցն և վարդապետացդ զինըն թողում ես ի բաց, և զչմարտութեն երկու բնութեց ի քէն հաստատեմ նախ պատճառօք, և բնականն բանիւ որ է հաստատակ ամենեցուն, ոչ եղ կաբնակաց, նոյնպէս և միաբնակաց. Յետոյ զնոյն չմարտութեն հաստատեմ պարզ և յայտնի վկայութեբք լուսահեղ հայ դրոց, զորոց վարդապետութեն ընդունել պարտեն հայք ամենեքեան. Հռաչարկեն սկիզբունք ոմանք, զորս եթէ չմարտայոյզ ընթերցօղ լաւ առցէ ի միտս, դիւրաւ և առժամայն ամ դժուարութեն պարզեսցի.

Սկիզբն առաջին.

Ամ փիլիսոփայից ստոյգ և հաւաստի վարդապետութեն է, թէ մի և նոյն ենթակայ ոչ կարէ ըստ միոյ և նոյնոյ նրբին ընդունել զտարորդելիս և զհակիրս ներհակս միմեանց, որպիսիք են սէր և սպառնալիք: անլոյս և լուսաւոր: ջերմ և ցուրտ: մահկանացու և անմահ, և այլք նոցին նմանք.

Ղէղ ստոյգ ինչ է, թէ Մարմնոյն Յի քէն առընկեռնին մակապնդք և տարորդելիք ներհակ միմեանց; քանզի ասեմք զքէ թէ յաւիտենական ծնաւ և ժամանակի: Թէ անսկիզբն սկիզբնաւորեցաւ: Թէ անչարչարելի չարչարեցաւ: Թէ անմահն մեռաւ. Եւ քանզի այնպիսի ներհակք տարորդելիք ոչ կարեն առընկեռնել միւմ և նոյն քէն, ըստ միոյ և նոյնոյ նրբին; պարտ է մեզ ասել, Թէ գոյ ի քէն այլ և այլ: նակ ի քէն ոչ գոյ այլ և այլ ըստ անձին, ոչ ընդդէմ դիւաշունչ Նէստորի սահմանեցին երկու հարբունբ հայրապետք Եփեսոսի ընդհանուր ժողովն;

վոյն ; ուրեմն պատրաստ է ասել Թէ գոյ ի քո այլ և այլ ըստ բնութեան ; այսինքն բնութեան աշխարհին , ըստ որում քո ասի , և նոյնպէս է յաւիտենական , անսկիզբն , անչարչարելի , անմահ ։ և բնութեան մարդկայինն , ըստ որում նոյն քո ասի , և նոյնպէս է ժամանակաւոր , սկիզբնաւորեալ , չարչարեալ , մեռեալ .

ԱՍԿՂԲՆ ԵՐԿՈՒ .

ԱՀԱՒ ինչ է բնութեան , և այլ ինչ է անձն . Ահա ասել Թէ ունի քո երկու բնութեիս , ոչ է ասել Թէ ունիցի երկու անձինս . Օրը օրինակ ասել Թէ որ երբորդութեան ունի մի միայն բնութեան , ոչ է ասել Թէ ունիցի մի միայն անձն . Կրկին ասել Թէ որ երբորդութեան ունի զանձինս երիս , ոչ է ասել Թէ ունիցի զերիս բնութեիս .

ԱՍԿՂԲՆ ԵՐՐՈՐԴ .

ԱՀԱՒ ինչ է միութեան , և միացեալ ; և այլ ինչ է միաւորութեան և միաւորեալ . Միութեան , և միացեալ նշանակէ զմի ինչ էութեան ապարշ և զուտ . Միաւորութեան , և միաւորեալ նշանակէ զերկուս որք ընդ միմեանս միաւորին , և երբեմն զուգաբաժինք բազկապրին զամբողջն . Միացեալքն , բազումք են արդեօք նախ քան զմիանալն ; բայց զինն միանալոյ , մի ինչ դառնան . Իսկ միաւորեալքն բազումք են , ոչ միայն նախ քան զմիաւորիլ , այլ և զինն միաւորութեան ; և անչափութապէս պահեն զյատուկ հատանց բնութեան և էութեան . Կրկնել օրինակ զհոգի և զմարմին , որք միաւորեալք ընդ միմեանս , երբեմն զուգամասունք երկու բաղկապրին զմի ինչ , այսինքն , զմարդ ; ապա յայն զինն միաւորութեան են երկու , և անչափութապէս պահեն զյատուկ հատանց էութեան և բնութեան ; ուստի և վաղճանին միոյն , անվաղճան ճայ

մու-

միւսն. Ընթերցիր զնոսա ըստ տրամաբանութեան մեծի և մեզ հայոց Ոսկան վարդապետին, յաղագս միութե, և միաւորութե, և վերջ պատմագրքին աղաւաքել վարդապետին.

Սկիզբն չորրորդ.

Մարդկային բնութիւն բաբառ առհասարակ, Մարմին, և բանական հոգի ընդ միմեանս միաւորեալք.

Սկիզբն հինգերորդ.

Տէր մեր Յս քս է կատարեալ Աստուած, և կատարեալ մարդ.

Սկիզբն վեցերորդ.

Աստուած Աստուածային վարդապետացդ ասելոցն է, թէ բանն Աստուած մարդացեալ զոր բնութիւն մի անդամ հառաջայն ոչ եթող երբեք.

Սկիզբն եօթներորդ.

Բանն Աստուած Տէր մեր Յս քս, ճշմարտապէս մարդացաւ; ծնաւ; մեռաւ; յարեաւ; համբարձաւ յերկինս.

Օրինակբունս զայնոսիկ է մի բերան ընդունին Աստուածաբանք ամենեքեան յոտմէ ազգէ և հոգին. Տեսցուք այժմ թէ զին արդ է պատիւ, և յայտնի, և հաստատակ սկզբանց յայնցանէ ծնանիլն զօրաւորք, և բնաւորապատճառք, որովք յայտնապէս, և առանց պատասխանի տալոյ ցուցանին, թէ ունի Տէր մեր Յս քս զերկուս բնութիւնս, զաստուածայինս, և զմարդկայինս, անխառնապէս և անշփոթաբար միաւորեալս ի մի դէմ, և ի մի անձն բանին Աստուծոյ.

Յուցանի պատճառօք.

Պատճառ աղաւաղին.

Քանի առընդհանուր աստուածելիք հակառակի միմեանց, որք ոչ կարեն ասել զնմանէ, ըստ միոյ և ըստ

նոյ

նոյնոյ ; ապա ըստ այլոյ ։ և այլոյ ; եթէ ի քո ոչ է այլ և այլ ըստ անձին ; ապա է ի քո այլ և այլ ըստ բնութեան , կամ այլ և այլ բնութիւն ; ապա բնութիւնք երկու . տես զսկիզբն առաջնոյն ի վեր .

Պատճառ երկրդ .

Անհաբնակք տարապարտուց զրպարտեն զերկուսեան , կոչելով զնա , բաժանօղք . բաժանօղ էր արդեօք Նեստոր , նախ զի բաժանէր զքո յերկու դէմս , յերկու անձինս , և յորդիս . զի բաժանօղ էր զի բաժանէր զքո յերկու բնութիւնս ոչ միաւորեալս ընդ միմեանս . Եթէ երկաբնակք ոչ բաժանին զքո յերկու դէմս , բայց զաւանին ի նա զմի դէմ , մի անձն , մի որդի . զի ոչ բաժանին զքո ի բնութիւնս երկուս ոչ միաւորեալս ընդ միմեանս , քանզի նոքա խոստովանին Թէ երկու բնութիւնք ի քո ընդ երեսաց միաւորեալք են անբաժանելի միաւորութեամբ , ուստի երբեք պարտին կոչել միաւորօղք , և ոչ բաժանօղք , քանզի միաւորութիւն զբաժանութիւն ոչ առնէ , բայց յաւէտ ի բաց բառնայ . տես զսկիզբն երկրդ .

Պատճառ երրորդ .

Ո՞ւ ի քո , երկու բնութեանց ոչ միացուն , այլ միաւորութեամբ ։ կամ երկու բնութիւնք ի քո միաւորեալք են , ոչ միացեալք . Հայիւ դաւանին հայք ի դէպս եւթեանց . Հայտնութեան , Մահուան . Ե. զմարճացուն բանին Հայ կոչէ զանձառ միաւորութիւն . զի Հայք զմիաւորութիւն բանին Հայ ընդ նիւթաւոր մարմնոյն նմանեցուցանեն միաւորութեամբ անմիւթ լուսոյն արեգական , որ եղև յերրորդում աւուր արարչութեանն , և ասեն Թէ ոչ է հնար բաժանիլ երկու բնութեանց ի միմեանց , յետ անձառ և անբաժանելի միաւորութեան . զի Հայ

կն .

կն. Ֆ. ասէ նոյն ՀԱյտաւուր թէ Յովհաննէս Օհնեցին Մանաճկերտի ժողովոյն հաստատեաց, թէ ոմք ՂՔՒ ՀՀՃ խոստովանին միաւորութեբ բանին և մարմնոյ, այնպիսիսք հարք եմ են, և մարք ; միաւորութեբ ասէ, ոչ միացմամբ. Ձաշու գիրքն ի ձառին յաղագս չարչարանացն ՏՐՆ, ասէ; հոգի քն միաւորեալ ընդ ՀՀՃութեբ. Ներսէս Կլայեցի առ Լ-ունանուէլ Կայսր ասէ, զանբաժանելի միաւորութեի երկուբնութեբ ՀՀՅ, և մարդոյ, եդին ընդ դէմ Նեստորի, և որոց ընդ նմա բաժանողացն որք երկուս բնութիս ասացին, բայց բաժանեալս, և ոչ միաւորեալ ի մի քն. Նոյնպէս ի հազար տեղիս ուսուցանեն հայոց վրբ գիրքն, հայրապետքն, ժողովքն, թէ եղև ի քն երկուբնութեբ ոչ միացումն, այլ միաւորութի ; նոկ ուր միաւորութի, անդ և ս է երկուբնութի միաւորելոց, և զինն միաւորութե; ուրեմն է ի քն երկուբնութի բնութեբ, ոչ բաժանելոց ի մտեանց, այլ հայհոյէր Նեստոր ; բայց միաւորելոց ընդ միմեանս. Տես սկիզբն երրդ.

Պատճառ չորրդ.

Մարդկայինն բնութի ոչ այլ ինչ է, եթէ ոչ մարմնի և բանական հոգի ընդ միմեանս միաւորեալք. նոկ ունի քն զմարմին և զհոգի ընդ միմեանս միաւորեալ. ապա ունի քն զմարդկայինն բնութի.

Պատճառ հինգերրդ.

Եթէ չունի քն զմարդկայինն բնութի, հետևի թէ քն ոչ է մարդ կատարեալ. Յուցանեմ. քն ոչ է մարդ կատարեալ, եթէ զմարդկայինն ինչ ոչ ունի : նոկ եթէ քն չունի զմարդկայինն բնութի, մարդկայինն ինչ բնաւ ոչ ունի ; քանզի ոչ ունի զմարդկայինն բնութի, ոչ ինդեն միհաբնակ ; ոչ ունի

զմարդկային անձն, ոչ ի մի բերան դաւանին քրիստոնեայք ամենեքեան. ուրեմն զինչ մարդկային ունիցի քո? ոչ անձն, ոչ բնութիւն, ապա ոչ ինչ: ապա զի արդ ոչի մարդ կատարեալ.

Պատճառ զեղերդ.

Բանն աշխ եաո զմարդկային բնութիւն; եսկ ըստ վարդապետութեանն սմ աշխարհից, բանն աշխ, զոր բնութիւն մի անդամ եաո, զայն ոչ ենթող երեք; ապա ոչ ենթող զմարդկային բնութիւն, ապա ունի զնա, և ունիցի մինչև յյաւիտեան.

Պատճառ ենթեղերդ.

Աշխ խորհուրդք անօրինութիւն կենաց և մահուան էին մերոյ Յն քն կատարեցան ըստ բնութիւն մարդկայնոյ. ուրեմն ասել թէ չունի քո զմարդկային բնութիւն, է ասել թէ սուտ են սմ խորհուրդք կենաց և մահուանն էին. ցուցանի.

Բանն աշխ մարդացաւ, առնլով արդեօք զիր ինչ մարդկային: ոչ զանձն; ապա զբնութիւն; և ասել թէ ոչ եաո զմարդկային բնութիւն, է ասել թէ ոչ եաո ինչ մարդկային, և թէ սուտ է մարդացումն նր.

Քո ծնաւ. աշխ ծնունդ եղեր ի առ բնութիւն ինչ որ ծնանի. քանզի ի ծնանիլն քո ի սմարիամայ կուսէն, ոչ ծնաւ աշխային բնութիւն, զի աշխային բնութիւն յաւիտենական է, և անծին և ինոզէ. ուրեմն ծնաւ մարդկային բնութիւն; և ասել թէ չունի քո զմարդկային բնութիւն, է ասել թէ ի սմարիամայ կուսէն ոչ ինչ ծնաւ, և թէ սուտ է ծնունդն քո, և սուտ մեղրամայրութիւն աշխածնին.

Քո մեռաւ. ոչ աշխային բնութիւն, որ է անչար չարչարել և անմահ; ապա մարդկային բնութիւն, որ է չարչարել և մահկանացու. ուրեմն ասել թէ չունի

նա

նի քո դմարդկային բնութիւն, և ասել թէ սուտ է մահ և չարչարանք նը.

քո յարեաւ. աշխն նոկ յարեաւ, որ էր մեռեալ: ոչ բնութիւն աշճային; ապա մարդկային. աշապա ասել թէ չունէր քո դմարդկային բնութիւն ըստ որում մեռանէր, և ասել թէ չունէր ինչ ըստ որում յարնէր, և թէ սուտ է յարութիւն նը.

քո հաստբարձաւ յերկինս. աշխն նոկ հաստբարձաւ յերկինս, որ յառաջագոյն յերկինս չէր. ոչ աշճային բնութիւն, որ է յաւիտենական, և ղերկինս և զերկիր լցուցանէ; ապա հաստբարձաւ մարդկային բնութիւն; և ասել թէ քո մարդկային բնութիւն չունի, և ասել թէ սուտ է հաստբարձումն նը.

քո ի նը հաղորդութիւն եմ մեզ դմարմին իւր և դհոգի. իսոկ մարմին և հոգի, է ինքնին նոկ մարդկային բնութիւն. աշապա ասել թէ չունի քո դմարդկային բնութիւն, և ասել թէ չունի դմարմին և դհոգի զոր մեզ տայցէ, և թէ նը հաղորդութիւն սուտ է.

քո հանապատ օր աղօթէր առ հայր իւր վն մեր: նոկ աղօթել է միջնորդանոն առ մեծադոյնն; ուրեմն քո միտք էր քան դհայր = ոչ փոքր անձամբ, ապա բնութիւբ: ոչ բնութիւբ աշճայնիւ, ապա մարդկայնիւ; և ասել թէ չունէր քո դմարդկային բնութիւն, է ասել թէ սուտ ևն ամ աղօթք նը.

Նոյնպն պատասխանք ասել վն ասի ինչ զոր ասը Տն ասաւ, կամ կրեաց ըստ բնական կարեաց բնութիբ մարդկայնոյ; որպիսոնք են ուտել, ըմպել, զարդնալ, վաստակիլ, քնել, տրտմիլ, հնազանդիլ, և այլ սոցին նմանք գործք կամ կիրք մերոյ բնութիբ, որոց ընդունակ չէր քո, բայց միայն ըստ բնութիբ մարդկայնոյ.

Բարուք առ ուրեմն և միտս, Սիրելի ընթերցող, Թէ ով որ ոչ ընդունի և քո զբնութիս երկուս, նա խախտէ և հնմանի, աւերէ, քանդէ, կործանէ զամ հաւատոյն քրիստոնէից.

Մինչև ցայժմ ցուցաք պատճառօք, Թէ ունի քո երկու բնութիս անշփոթապէս միաւորեալս և մի անձն բանին Աստ; ինոյն ճշմարտութիւն ցուցցուք և հարձ և հարցոյ, վկայութիւբ հայ ոբ դրոց և հալ բազմատոց.

Յուդանի վկայութիբք հայ դրոց.

Աղյսանէ ուրն.

Լսահմի. Է. ասի Թէ յեսիեսոսի տիեզերադումար Ժողովոյն, ոբ Կիւրեղ, և այլ ոբ հայրապետք խոստովանեցան զքո Աստ և մարդ կատարեալ յերկուց բնութիբեց. Էհ և նոյն տեղւոջ առբերի սահմանադրութիբն Կիւրեղի որ ասէ, Եթէ ոբ ոչ խոստովանի զՅո քո Աստ և մարդ կատարեալ յերկուց բնութիբեց, նզովեալ եղիցի.

Աղոյց. Բ. ասի, ոչ է հնար բաժանել երկուբնութիբեց և միանոյ, յետ անձառ և անխցադրելի միաւորութիբ.

Յոռոյ. Ոբ. առբերէ միաւսանգամ և վերոյ յիշեալ սահմանութիբն Եսիեսոսի ոբ Ժողովոյն որ ասէ, Եթէ ոչ խոստովանեսցի ոբ զքո Աստ և մարդ կատարեալ երկուբնութիբեց, նզովեալ եղիցի.

Յամապիրք.

Է. Ջ. 67. հայք ասեն զքո.

Աստուածդ փառաց էին,
որ ըստ բնութեանս մարդկային
տապնասպեցար և դիշերին.

Եւ

Եւ դէմ. էջ 74.

Աչք մարմնով վա՛ն եմ խաչեալ,
Մերով բնութիւ՛ն մեռանիմ
Աչք անմահ խոստովանիմ.

Եւ դէմ. էջ. 330.

Սոսկալիդ Աստուածէից
Եւ ահաւորդ քրօբէից
Խոնարհեցար ի չարչարանս
Չարչարելի բնութիւ՛ն մարդկան.

Եւ դէմ. էջ. 393. Որ ինքեր յերկնից վա՛ն մեր, զառաջինն առեր զանցանս Ադամայ; Մերով բնութիւ՛ն բար ներ ի վա՛ն խաչին.

Շարականոց.

Էջ. 281. Յերդս Աբէոն Նեբսէսի, յաղագս հակման մեծ ուրբաթու դիշերին, ասի ղբէ.

Նառադայի փառաց էին ....

Եւ այլ; ոսկ ի վերոյ Ժամագրքի. 67. Եւ դէմ. էջ. 285.

Աչք մարմնով վա՛ն եմ խաչեալ .....

Եւ այլ, ոսկ ի վերոյ, Ժամագրքի. 74. Ոդէմ. էջ. 422. ասի, Համբարձման դերագոյն, ով՛ որ Տօհան նէս, յորովայնէ, յորովայն երկնապատօղ քէն, որ գիտուն աչք մերով բնութիւ՛ն սկսաներ յորդանան.

Ոդէմ. էջ. 593. ասի

Սոսկալիդ Աստուածէից ....

Եւ այլ, ոսկ ի վերոյ, Ժամագրքի. 330.

Եւ դէմ. էջ. 693. ասի ցքա՛ն

Մերով բնութիւ՛ն զոր ըզգեցար
Ի փայտ խաչին բեւեռեցար.

Ձաշու գիրք.

Ի քարոզին զոր ասացեալ է Յովհաննէս Գլուզ վարդապետ Ծործորեցի. էջ. 28. առն Հայոնւ զքէ; Ի փորձութեի մեռը յանապատին ընդ դէմ փորձողին: և մերով բնութեբ յաղթեցեալ հակառակողին.

Ղ՟Լ յանուշ տաղն, ի սորենակ կոստանդեայ, էջ. 29. առն; քո բանդ հօր կացեալ ի բնութեին մէր երևնատեայ. Երևնատեայ առն, քանզի ըստ հայոց Ժամակարգութեբ ապրեցաւ քո զամս մեռոյն. Լ. ոյ առն ի կտակն մեծ ուրբաթի սղոյն, էջ. 375. երկ ծեր մեռանն, ոչ կարե՛ լան: այլ ի աղայութեբ հա առնն, առաւել լան: իսկ ատրն մեր երևնատեայ էր յորժամ մեռաւ. Հայտ սղալին հայբ, քանզի եր երևնատեայ էր արդեօք քո յորժամ մկրտեցաւ; և մեռեալ էր յերևնանեդ չորդ, յորժամ մեռաւ. Բայց ներեմ ես սրտի մտօք հայոց զսղալուածն զայն, միայն թէ նբ միամտաբար խոստովանեցին, թէ ցորբան ժամանակ ատր Տն եկաց կենդանի, ունէր զմարդկայինս բնութեի մէր, զոր այժմ և ունի, և մինչև յաւիտեան ունելոց անշփոթապես, և անբաց դրաբար միաւորեալ ընդ անձին բանին Աղ՟.

Ներսէս Լամբրօնացի.

Աղե. ոչ ասեմք ի մի բանին մարմնացելոյ զմի բնութեի, զյատկութիս երութեց չփոթելով, այլ ըստ անձառ միաւորութբ երկուցն ի մի անձնաւորութեի.

Ղ՟Լ ի ձառն զոր ասաց ի Ստեփաննէ Ժողովոյն. ոչ ասեմք միբնութեի ի քո, չփոթմամբ ըստ եր անբնայ, և այլ.

Ղ՟Լ

ԴԱՆ. Նոյն է ղէՇճ և մարդ ասել զՔՆ , և զերկու բնութիւնս ..... յայտ է թէ որ զՔՆ ՀՇճ և մարդ դաւանեաց , զայլ և այլ բնութիւն ի վր միոյ անձինն սատուդիաց .

Ներսէս Կլայեցի .

ՀՀ ևս համառօտել կայսր , ասէ . ոչ ըստ ԵՒտիքեայ ի մի բնութիւն ժողովեմք զիմոթէոսեամբ , և այլայլութիւն .

ԴԱՆ. Օտնկորուստ ճանչն երկաքանչիւրոցն ի միաւորութիւն , ոՀ այնոյ և մարդկայնոյ բնութիւնեցն ընդ դէմ ԵՒտիքեայ , և որոց նախ քան զնա , կամ յետ նր մի բնութիւն ասողացն չտրաչտ .

ԴԱՆ. Նոքովեմք զայնոսիկ որք վ յերկուս , և այլայլութիւն զմի բնութիւն ասեն բանին մարմնացելոյ .

ԴԱՆ. Հաւատամք եթէ բանն ՀՇճ զմեր բնութիւն էառ , և միացոյց ընդ ինք ՀՇճային բնութիւն , անշփոթ , և անբաժանելի միաւորութիւն . Երկն ան առեսանելին ըստ ՀՇճութիւն , առեսանելի ըստ մանդկային բնութիւն .

ԴԱՆ. ՈՒղղասլ ասեմք երկու , ընդ ՀՇճաբանին զբնիկորն , ըստ անկորուստ և անյեղլի դոլոյ բնութեց ՀՇճային , և մարդկային .

ԴԱՆ. Տս ոտն . 255. Նոյն Կլայեցի ասէ

Երկու ասել զարհնալ բնութի
վ երկուց գոլ միութի
չէ այս օտար ճշմարտութի
Թէ չբաժանեն յերկուսպիճն .

ՀՀ յս ինքն , Թէ զմի և զնոյն Քս չբաժանեն յերկուս գիտս , յերկուս ոտիս .

Տասանելոյ մինչև ցայժմ հնաւանի, թէ երեք կերպիւ ասի երկու բնութիւնք ի քրս.

Առաջին. ասելով թէ ունի քրս զերկու բնութիւնս ոչ միաւորեալս ի մի անձն բանին, այլ բաժանեալս ի միմեանց. ասյն նակ էր Նեստորի, և համախոհից նր բաժանողաց սուրբ աղանդն, զոր ոչ ընդունիմք, նզովեալ եղիցի.

Երկրդ. ասելով թէ ունի քրս զերկու բնութիւնս միաւորեալս ադիեօք ի մի անձն բանին, բայց չեղմամբ, այլայլութիւբ, շփոթմամբ; մինչ զի ի նեստորականսն միաւորութիւն էրնեաւ մարդկային բնութիւն խառնմամբն ընդ աստուածոյ. ասյն է եւտաքեայ հերձուածողին, զոր ոչ ընդունիմք, նզովեալ եղիցի.

Երրրդ. ասելով թէ ունի քրս զերկուս բնութիւնս, որ բաժանեալս ի միմեանց, այլ միաւորեալս ի մի անձն բանին, առանց խառնման, առանց շփոթման, առանց փոփոխման միով ի միւսն. ասյն է բուն և ստոյգ վարդապետութիւն հայոց սբ դրոց և հայրապետաց; և համօրէն ուղղափառաց, և որ այնպէս դաւանիցի, ի քէ օրհնեսցի.

Առարկեա. մբն կիւրեղ ասէ մի է բնութիւն բանին մարմնացելոյ.

Պատասխ. Հապա քան զկիւրեղ եղեալ էին հերձուածողք բազումք զոր օրինակ, Արիոս, Պաղինաս, և այլք սոցին նմանք, որք զայլ ասէին բնութիւն հօր քան զորդւոյ, և զայլ բնութիւն Հոգւոյն; ընդ դէմ նց ասէ կիւրեղ, թէ մի է բնութիւն բանին մարմնացելոյ, որ կասի ասել, թէ բանն աստ բնութենական է հօր, թէ մի է և նոյն բնութիւն նց, որ նակ շնորհեալ է.

ղՀՀ. Պատասխանեմ թէ, մինչ չէ հաստատել էր վէրս ինչ սբոյ Եկեղեցւոյ ի վր երկու բնութեց ի քս յս, սովորական ինչ էր հարց սբոց, և աղաչանս վարդապետաց խառնել զանձն ընդ բնութե, և բնութի ընդ անձին, և զբառս երկուս զայնոսիկ դնել անխառնիւ, զինն փոխանակ մեռանոյն, երբեմն զբնութի փոխանակ անձին; և երբեմն զանձն փոխանակ բնութե. զուրեմն որժամ ասէ սբն Կիւրեղ, թէ մի է բնութի բանին մարմնացելոյ, զբառն այն բնութի պարտ է նմանել փոխանակ անձին; նբ թէ ասիցէ Կիւրեղ, թէ մի է անձն բանին մարմնացելոյ, ոչ նսկ դաւանին ամ ուղղափառք քրիստոնեայք. Եւ զայն ասէր Կիւրեղ ընդ դէմ չար աղանդին պղծաշուրթ Նեստորի Կոստանդնուպօլսի պատրիարքին, որ և ինքն ոչ խորհելով ի մէջ բնութե, և ի մէջ անձին, հայհոյէր թէ էին ի քս ոչ բնութիք երկու, նոյնպէս և երկու դէմք, եակու որդիք, երկու անձինք: զոր չար վարդապետութենոյն դաւանապարտեաց Եփեսոսի ընդ հանուր ոբ ժողովն, յորում վերջացուս կայր սբն Կիւրեղ, փոխանակ քէղէստոնոսի, Հռոմայ ոբարշաւ փախին. Տես ստն. ն. շ. ա.

Զայն վարդապետութի ևթէ հայք լաւ առնէին ի միտս, դիւրաւ խոստովանէին թէ իւրնմոյ ոբ եկեղեցւոյն բուն վարդապետութի այս միշտ եղև, թէ են ի քս երկու բնութիք անշփոթապէս և անփոխանապէս միաւորեալք ի մի անձն բանին աշխ; և փոխանակ այն աշխարհաւեր բաժանման որ զայնքան ժամանակ հած ի վր նց զբարկութի աշխ, առնէին առժամայն, ընդ հռոմայ ոբ աշխութեան հաստատ, և

անքակ մնաբանութեն, որ լինիւր եւրեանց ապրին անսպառ եւ անհատահոս աղբիւր հոգեւոր եւ մարմնաւոր բարեաց. ալյսպէս եղիցի.

ՀԱՄԱՐ. Ը.

Իբրեւ եկն Յի ի բեթանիայ ի տունն Սիմոնի բորոտի, մատեաւ առ նա կինն .....

Ի վր այն օծմանն մարիամու Մադդաղենացւոյ, յուղին վարդապետք դիմեցին ըստս? ալ. Կոչնատէր Սիմոն ոմն էր, կամ եթէ երկու? բ. եթէ Սիմոն մի էր, քանի անգամ արար ընթրիս Յի? գ. Իւղաբեր Մարիամն մի էր, կամ եթէ երկու? դ. եթէ իւղաբեր Մարիամն մի էր, քանի անգամ էօծ նա զՅի.

Պատասխ. ալռ առաչին. մի է եւ նոյն Սիմոն կոչնատէր, որ ղուկասու: է. ասի ոմն ի փարիսեցւոց; եւ մարկոսի: ժդ. կոչի բորոտ.

ալռ եւիդ. Երկոցա անգամ կոչեաց Սիմոն զքրիստոս ի ճաշ. ալռաչին անգամ յորժամ էօծ Մարիամ զոտս քրիստոսի, եւ ջնջեաց զնա հերովք գլխոյն իւրոյ, եւ գայթագղեցաւ Սիմոն, եւ ասէր ի միտս իւր, եթէ մարգարէ ոք էր, գիտէր թէ ով եւ որպիսի ոք կին մեղաւոր է սա. Երկիր անգամ յորժամ առեալ մարիամ լիտր մի նարդոսի, վեց աւուրբք առաջ քան զզատիկ, որ էր ծաղկազարդին կիւրակէի, կրկին անգամ էօծ զոտս Տեն. Երրորդ անգամ երկու աւուրբք առաջ քան զզատիկ, կամ յաւուրն աւադ չորեքշաբթի, յորժամ գնեցին Թաւիեաց, ոչ յոտս, այլ ի գլուխ

Տեն

ղուկ. է. լէ.

Յօհան. ժբ. ա.

ՏՐՆ. մարկ. ԺԲ. Ը. Բայց այլ ևս բազում անգամ Սիմօն բորոտն զկոչունս արար Տեի, զորս աշխատանէջ ոչ յիշեցին. Քանզի յօրէ յորմէ հետէ յառաջին ընթերման ծանեաւ Սիմօն զՏՐՈՒ Տ՚ն, սկսաւ սիրել զնա, և զհետ երթալ վարդապետութեանն։ և որքանիցս անգամ դայր Տ՚ն ի բեթանիայ, ածէր զնա Սիմօն ի տուն իւր, և մեծ պատուով ընդունէր զնա.

ՂՈՒ ԵՐԻՔ. Մի ե և նոյն Մարիամ որ էօծ զՏ՚ն, և յաշխատասանչայ կոչի Մադդաղինացի; կինն մեղաւոր; Մարթային, և Ղազարոսի քոյրն, յորմէ էհան ՏՐՈՒ զդեւս էր.

ՂՈՒ ՀՐԻՔ. Երկոցս անգամ Մարիամ Մադդաղինացին էօծ զՏ՚ն. Նախ յառաջնում խրախուեցեալ զոր Սիմօն բորոտ արար Տեի, յորժամ էօծ Մարիամ զոտս ՏՐՆ; և վասն յոյժ սիրելոյ նր, եթող նմա Տ՚ն զմեղս բազումս, և զդեւս էր. էհան ի նմանէ. Երկիր անգամ էօծ զՏ՚ն յերկրորդում խրախուեցեալ զոր Սիմօն արար Տեի, և ծառաստացդինն կենդանէն, յորժամ միւսանգամ էօծ Մարիամ զոտս ՏՐՆ. Եւ քանզի զոտս օծել արտաքս ինչ էր քան զգովորութեն հրեից, և Թանհուբ անկարգ ինչ վարիկասիրութեն; վասն այսորիկ դայթադղեցաւ Յուդայ մատնիչ, և ասէ զնկեցս զմարիամայ, ասելով, ընդէր նւղդ այդ ոչ վաճառեցաւ երիք հարիւր դենարի, և առաւ աղքատաց. Երկիր օծուածն եղև յաւուրն աւուրց չորիք շաբթի, և նոյն ատեն Սիմօնի, յորժամ Մարիամ էօծ ոչ զոտս ՏՐՆ, այլ զգլուխ նր, զի յուդայի մի լինիցի առիթ ինչ արտանջելոյ. Սակայն արտանջեաց անիծեալն, և զկորհուրդ արարեալ ընդ Քհանայիսն քի, յանձն էառ մատնել զնա նց.

Յօհան. ԺԲ. Է.

ՀՌՈՒԱՐԿԵՍ. Տէր, մեք Յուդայ միայն; ուրանդեցինն եւս այլ առաքեալք; ուստի Թոմա ասէ, Թէ երբեք տեսանեմ զքեզ եւ կարենամ գիտել ճանապարհ քո, բարեացան, եւ ասես; ընդ որ է ե կորուստ այդ ճանապարհ?

ՊԱՏԱՍԽ. Ես եմ ճանապարհ եւ ճշմարտութիւն եւ կեանք. Օր օրինակ անէ նոյն Ես, Թէ ասաղակէ որք կախեալ էին ի խաչին ընդ Տէր, նախատէին զնա: ոչ եթէ նախատէին զՏէր ասաղակէ երկրքեան; այլ նախատէր զնա մի միայն հակառակութեան ասաղակն, ոյք պարզ ասէ Ղուկաս, Թէ մի ոմն ի կախելոց չարագործացն հայհոյէր զնա:

ՀՌՈՒԱՐԿԵՍ. Ցոյց Յայր զայդ մեզ ընդ Ձեզ ունիք; բայց զիս ոչ հանապազ ընդ Ձեզ ունիք.

ՀՌՈՒԱՐԿԵՍ; եթէ Հռաքեալքն ոչ հանապազ ունին զՔէ ընդ իւրեանս, զի արդ Քէ յայլ ուրեք ասէ, Հանապազ եմ ընդ Ձեզ եմ զամ աւուրս մինչեւ ի կատարած աշխարհի?

ՊԱՏԱՍԽ. Հռաքեալքն ոչ հանապազ ունին ընդ իւրեանս, եւ մեք ոչ հանապազ ունիմք ընդ մեզ զՔէ առեսանելի աչօք, չօշափելի ձեռօք, այլ զի կարիցեմք Հաղիւսայիւ օծանել զնա, եւ բերան առ բերան խօսիլ ընդ նմա; բայց Քէ ընդ մեզ է հանապազ, ոչ միայն Հնծութեամբ իւրով, եւ հայրական խնամութեամբ որով կառավարէ զմեզ եւ պահէ; այլ եւ ընդ

դէ. ՆԷ. ԼՊ.

ընդ մեզ է հոգւով, և մարմնով ներով, ի սէր հաղորդութեանէ; և այս պատասխանեաւ խոստացեալ զհայհոյաբոյբոք բերան հերձուածողաց, որք զբանս քո զայսոսիկ թիւրելով ըստ թիւրութեանէ մտաց իւրեանց, պնդեն թէ մարմին ՏՐՈՋ է ոչ հաղորդութեանէ, երապա՛ւ, և ճշմարտապա՛ւ ոչ գոյանի.

ՀԱՄԱՐ Ը. ԺԲ.

Յայնժամ գնաց մի յերկոտասանեցն անուանեալ Յուդայ .....

Մինչդեռ ժողովեալ էին քահանայապետքն, և ծերք ժողովրդեան ի սրահ Կայափայ քահանայապետին, խորհուրդ առնել զի նենգութեամբ կալցեն զՅի՛ս, և սպանցեն; եմուտ Սատանայ ի Յուդայ Իսկարիովտացի, ոչ հաւրելով գնա մարմնով արտաքսապա՛ւ, այլ ներքինապէս աղդմամբ հրապուրելով գնա մատնել զՏԻՐՈՋ նոր, զոր նոսկ Յուդայ յանձն էառ, առեալ ի քահանայիցն ՚Լ. արծաթս, որ է ՚Ի. դրա՛մ. լուծեցին արծաթասէրքն, Թէ յորպիսիս խորս անօրէնութեանէ անկանիցն այնոքիկ որք լինեալ ի դիւէն ագահութեանէ, վա՛ր դոյզ ինչ արծաթոյ, և կորուսանելոյն ընչից մատնեն Սատանայի զհոգիս ներքնոյց, այնու նոսկ չարագործեալ և քան զՅուդայ, զի Յուդայ յետոյ զղջացաւ, մեղայ ետ ասէ՝, և դառնացաւ արծաթն յետ դարձոյց, և ընկէց ի քաց՝ նոսկ ա՛ր, զարծաթն զոր անիրաւութեա՛ստացան, անիրաւապա՛ւ պահեն առ ներքնայն; անխնդիր սրտիւ վատնեն զնա ի ցանկութիւնս, և ի նոյն անիրաւութեա՛ մեռանին. վա՛յ նոյ;

նց ; Յուդայի դիւրագոյն լինի յաւուրն դատաստանի, քան նց.

ԳԼՈՒԽ. ԺԷ.

Ուր կամիս զի պատրաստեսցուք քեզ ուտել զզատիկ ?

Պարտ է ինձ այժմ գալ ի մեկնութիւն խրթնագոյն դիւրաւորութեանէ, յաղագս ժօնին Օատկի, և յաղագս ժամանակի յորում պարտ է զզատիկ կատարել, ըստ կանոնադրութեանէ նր հայրապետացդ, և ըստ սահմանադրութեանէ եկեղեցւոյ.

Երբեմն լցան աւուրք յորս հաստատեալ էր ձեզ հրէից ձեռամբ հանել յԵգիպտոսէ զորդիսն Իսրայէլի ; զի մի մոռասցին երբեք ի մտաց նց այնչափ մեծ չնորհքն ձեր, եւ նց ձեզ հրամայեր յամի զենուլ զՊասեքդ, և ուտել զգառն զատկական, ոչ գրեալ է ելից. ժբ. ի գիշեր ղևւտականաս, ներ. էտ. ի գիշեր Թուոց, ներ.

Բայց զկին ոմանք ելեն ժօնն զատկի այլ մի ժօնն էր, քան զժօնն Բաղարջակերացդ ? Օինչ և իցէ, զայս գիտեմք առաւել, զի ժօնք երկու այսոցիկ հանապատղ հանդիպէին ի նոյն ժամանակի, այս ինքն յօրէ չորեքտասաներորդէ առաջինն ամսոյ (որ էր ամին կանխագոյ, կամ առաջաւոր պատգոյ, յորում ելեալ էին հրէայք յԵգիպտոսէ ; և էր ամիսն այն Մարտի ամիս) մինչև ցօրն քսան և մի երկ նոյն ամսոյն, ոչ առն ի գիշեր ելից : լբ.

զԱՌաջն բաղարջակերացդ պահեցեալ ; ցեօթն օր բաղարջ կերիցես .....

Էտ. դՀ : գլ. ժբ. ի սկսանիլ չորեքտասաներորդի

աւուր

աւուր ամսոյն առաջնոյ, յերեկորեայ բաղարջ ուտի-
ցէք, մինչեւ ցքսան եւ մի օր ամսոյն ցերեկոյ ; ղեօթն
օր մի գտցի խմոր ի տունս ձեր .

Եւ զի՞նչ զլ ժբ. ի տանտերտուտ ամենան այ-
սորիկ , առցին իւրեանց իւրաքանչիւր ոչխար , և
ելցին ձեզ պահել մինչեւ ի չորս և տասն աւուր
ամսոյն այսորիկ , և զենցին զնա ընդ երեկս , և կե-
րիցեն .

Ազաւել ոտուդիս դնեամբ թէ յամի յորում մե-
ռաւ քս , առաջին օրն բաղարջակերաց եղեւ յերե-
կոյ աւադ հինդ շաբթի ; իսկ հրամանն ունէին հրէ-
այք յաշ ժօնել զզառիկ , ի սկսանելն աւուրց բա-
ղարջակերաց : ուստի հետեւի թէ ժօնն զառին սկաւ
յերեկոյ աւադ հինդ շաբթի , որ էր ուրբաթաւուտ .
Ուստի դէզ հետեւի թէ ստր մեր Յս քս մեռաւ
յաւուր յայնմիկ յորում հրէայք կատարէին զզառիկ ,
որ էր ուրբաթ , զի ի նոյն յաւուրն , որ ինչ նշա-
նակէին օրէնքն զենուամբ զառիկաւն գառնին , զայն
կատարէր գառն աշ Յս քս , զանձն իւր դնելով ի
վր խաչին , վս ի թողութիւն աղտի մարդկան .

Գ՚արձեալ , թէ յաւուրն ուրբաթու յորում քս
մեռաւ , ժօնէին հրէայք զզառիկ իւրեանց , ցուցա-
նի եւս վկայութիւն Յոհաննու որ ասէ , թէ ոչ գտե-
ալ պիղատոսն ի քս զմի ինչ պատճառ մեռանելոյ ,
յօժարեցաւ ապրեցուցանել զնա ի հեռաց հրէից , և
ասէ ցնս ; ե՛ն ձեր սովորութի՛ն զի զմի ոք արձակեցից զլ. ժբ.
ձեզ ի զատիկս ; ուրեմն այսօր որ ձեզ զատիկ է , ար-
ձակեցից զՅս .

Ընթերցեալ զտուանաւուտ բարեպաշտ Թադեաւսին
հելմոյ որ ասէ .

Եւ զայս կիւրեղ ասէ յայտնի .

ընդ այլ բազմաց հարցըն խնդրէ,
զի խաչելոյն օր Քրիստոսին.
չորեքտասան ի նոյա Լուսնի.
Եւսկ Չորեքտասան օր Լուսնի, զատիկն օրն էր.

ղԼ ԺԲ. Լա. Աղաւարիկեա. Յօհաննէս ասէ, Թէ զկնի աւանդելոյ Տէր զհոգին նոր, հրեայք, քանզի ուրբաթ էր, զի մի անուքն ի խաչին ազանիցին մարմինքն, մնային շաբաթն, զի օր էր մեծ շաբաթուն այնորիկ, աղաչէին զՊիղատոս զի խորտակեսցեն զբարձն նց. եմեծ կոչէ օրն այն շաբաթու, զի օր էր զատկին հրէից; ուրեմն զատիկն օրն ոչ էր ուրբաթ յորում մեռաւ Քս.

Պատասխ. Մեծ ասի օրն Շաբաթուն այնորիկ, ոչ Թէ օրն էր Զատկին, բայց զի հանդիպէր յաւուրս զատկականն, և ի ժամանակի բազաքին կիրակի.

Աղաւարիկեա. Տորժամ քահանայք և դպիրք ատարին զխորհուրդ, զի կալցեն զՅն, և սպանցեն, առնէին, մի ի տօնի աստ. ուրեմն օրն ուրբաթու յորում սպանին զՅն, ոչ էր օր տօնին.

Պատասխ. ոչ կամէին արդեօք հրէայք սպանանել զՅն յաւուրն տօնին, զի մի խռովութիւն լինիցի ի ժողովրդեանն; սակայն յորժամ առեին զՅուդայ, զի առեալ էր յանձն մատնել զնա նց, մոխեցին զմիտս նորա նց, և հաստատեցին առանց դանդաղելոյ կալնուլ զՅն և սպանանել յուրբաթու; մի գուցէ ի յայտնել նմ մինչև զկնի զատկին, յայտնեսցի քրիստոսութիւն Յուդայի, և խոյս տուեալ ապրեսցի ի ձեռաց նց. աղաւաւել հաձոյ Թուխեցաւ հրէից զքրիստոսանալ ի զատկին, զի առօթագոյն մահուամբ մեռանիցին առաջի հրէից բազմութիւն անթիւ, որ

յայտ

յայմ կողմանց խոբեալ էին յերուսաղէմ վա հանդէ սութե ծօնին .

Մինչև ցայժմ ցուցի Թէ օրն մահուե ան քի , օրն էր զատկին հրէից ; քննեացուք այժմ Թէ յորում աւուրն պարտ է քրիստոնէից կատարել զզատիկ .

1. Գիտեն առնելքեան զի հրէայք զզատիկ ծո նէին անխոտորնակ յաւուր չորեքտասանեորդում , կամ յաւուր լման լուսնին առաջին ասոյ , յորում աւուր և հանդիպէր լրումն այն , Թէ յուրբաթու , Թէ ի շաբաթու , Թէ և յայլում ; և կոչիւր այն լրումն , լուսնն , կամ լրումն զատիկան ; աւագ լրումն .

2. Հրէայք զլուսնին զատիկան ոչ հաւատային զայն , որոյ լրումն հանդիպէր առաջ քան զգարնանայինն հասարակած = բայց լուսնին որոյ լրումն պատահէր յաւուրն դարձանաւտին ; կամ անմիջապա զկնի նը , այն ևսկ էր լուսնն զատկական .

3. Քի ոբ աշակերտքն որք ի յաւետեանական յիշատակ մահուե ան և յարուԹե Տրն , սահմանեցին ծօնել զզատիկ ընդ միոյ միոյ աւր , մեծաւ զգուշուԹբ զգուշացան և սկզբանէ , զի քրիստոնեայք զատիկ մի ծօնիցեն և նոյն աւուրն , յորում հրէայք ծօնեն զնա ; նա և սբն Իրինաոս , որ տեսեալ էր զԱՏրն Յն մարմնով , խրատէ զվիկտորիոնն , Թէ հրէական անօրէնուԹե , և տիրասպանուԹե հաղորդք եղիցեն այնոքիկ , որք ի միասին ընդ հրէայս զզատիկ ծօնիցեն .

4. Եթէ և ևս ի ոբ աշակերտից կանոն անվրէպ , Թէ բուն և սեպհական օրն ծօնելոյ զզատիկ քրիստոնէից մինչև ցյաւետեան , եղիցի օրն կիրակէ , զի ի նմին աւուրն յարեաւ ԱՏր Յն ի մեռելոց .

5. Տեսոյ աշխարհս հաւատացեալքն սակաւ առ սակաւ Թուլացան ի սովորութէ անտի առնելոյ զզաւակն ի կնդակէն; և քանզի բազումք ի նմին մնալք էին, և ի մանկութէ դնացեալ ի հրէայութէ; խնամ Թոյլեցաւ նոցա խափանել զմօսխասաւանդ արարողութէն, և սկսան զզաւակ ծծնել, ոչ քրիստոնէաբար ի կնդակէն, բայց հրէայբար ի չորեքտասաներորդում աւուրն լուսանին, Թէ կնդակն նոյ օրն այն, կամ Թէ ոչ.

6. Ուրեմն յայսմ ամ. 159. Հաւանեալ ընդ հայրապետս անուանեալ փիռս առաջնին, առ ի բառնալ զչարն ի միջոյ, սահմանեաց լինել այսուհետև, ոյք եղեալ էր ի սկզբանէ զաւակին ծծնախմբութէն յաւադ կնդակէն որ է գինն զաւակական լման լուսանին. այլ նայն զի յաղագս բանին որ ոչ էր բանն հաւատոյ, այլ միայն բանն արարողութէ, մի խառնիցին աշխարհանք հաւատացեալք, հայրապետական հեղութէ զի զանելով առ սակաւութէն նոյ, Թոյլ եառ նոյ զզաւակ հռչակել, ոյք նոքա սովորութէն էր նոյ, ի չորեքտասաներորդում լուսանին.

7. Օրինն սակաւ ինչ ամացն, ի ծնանել կրկին անգամ վիճակ, և խնդրոց ի մէջ աշխարհական քրիստոնէից յաղագս ծծնանն զաւակի, սբ Պօլիկարպոս, իղմիւռ առաջնորդ, որ աշակերտեալ էր սբոյն Յօհաննու աւետարանչին, գնաց ի հռոմ, առ աշխատ առս սբեալան Պապն, որոյ լուեալ զինդիրս Պօլիկարպոսի յաղագս աշխարհականաց, շնորհեաց նոցա զաւակն առնել ի չորեքտասաներորդ աւուրն լուսանին.

յամի 167.

8. Աշնեին ամք երիս: Ժդ. և ահա յամի ՃՀ. 180. վիճաւնակ, և հռոմանուէ ոմն անուանեալ Պլաստոս, յարեաւ ի վէր պլեոյն եկեղեցւոյ, պնդելով

լով թէ ոչ միայն ուղիղ էր արարողութեն ազնիւ քրիստոնէից ծնանելոյ զզաւակ և չորեքտասանեցոց դում լուսնին ; բայց և , որք յայլում աւուրն ծնեալքն գնա , դատապարտէր գնա եբրև զհերձուածողս , և հակառակորդս աղաքելական կանոնաց . Եղեթերիոս հռօմայ ՚ի Պապն քաղցրութիւ յանդիմանեաց զՊլաստոս դարձուցանել գնա ի մոլորութենէ նր անտի ; բայց Պլաստոս խստացոյց զսիրտ նր ոչ անսալ հայրական խրատուց փոխանորդին Ձի քրի , և ապստամբութեն արարեալ յեկեղեցւոյ , սիրոյն արար հերձուածոյն որ կոչեցաւ հերձուած չորեքտասանականաց .

9. Ձեռոյ ի հանդիպելն կրկին անգամ խռովութեց ի մէջ ազնիւանաց , ի վերայ աւուրն ծնանելոյ զզաւակ , սբն ալէքսօս , որ Թարգմանն յաղթօղ , Պապն Հռօմայ , առ ի յաղթել հակառակին , և խլել արմատաբի զայմ պատճառ խռովութեց , զոր մարեաց ի հռօմ զիմողն հայրապետացդ բազմաց , և յետ բազմօրեայ քննութե , սահմանեցին ամենքեան ի մի բերան , ծնանել այսու հետև զզաւակ ըստ աղաքելական կանոնաց , ի միում և եթ աւուրն կիրակէի ; և որք ապստամբեացն չհնազանդէին , յորմէ ազգէ և իցեն , նզովեցին գնա , և եբրև զհոտեալ անդամս ի բաց կտրեցին ի մարմնոյ եկեղեցւոյ .

յամի 198.

Մինչև յայժմ սահմանադրութե աղաքելոց , և հռօմայ ՚ի Հայրապետաց , հաստատեալ էր զզաւակ ծնանել ի կիրակէի ; բայց չէս էր սահմանեցեալ թէ յորում կիրակէի պարտ էր ծնանել գնա .

10. Ռուբեմ յամի սմհ. 325. ընդհանրական ՚ի ժողովէ , որ հրամանաւ սբոյն Սեղբեստրոսի Պապին հռօմայ , դատապեցաւ ի Նիկիոյ բաղաքին , զինի

դատապարտելոյ զպղծաշուրթ ազնուս, սահմանեալ
աց, Թէ ընդ երկնիր ընդ սմ ծննեցին այսու հետե
Օրանին յայնմ կենդանին, որ անմիջապէս հետեւի ա-
ստ լսման լուանելն հաստատականն դարձնանայնոյ : սահ-
մանելով եւս Թէ լուանն հաստատականն դարձնայնոյ
այն է որոյ լսումն հանդիպի յինքեանն նակ աւուրն
գարձնանամանն, որ է Մատթ. ամենեան : ետ. կամ ան-
միջապէս զկնի նր . ուրեմն զի ուղիղ ծննեցես զա
նիկ, լինի նախ գարձնանամուտ ; լինի եւս լսումն
լուանելն ; եւ ապա, ի հետեւեալ կենդանին զանիկ ծ-
նեցին .

II. ուրեմն եթէ հանդիպիցի լսումն լուանելն,
նախ քան զգարձնանամուտ, լսումն այն ոչ է զանկա-
կան, եւ պարտ է զանց առնել մինչեւ յետիւս լսումն
հետեւեալ լուանելն, եւ ապա ի կենդանին ծննել զա-
նիկ . իսկ եթէ պատահիցի լսումն ի նոյն նակ աւ-
ուրն գարձնանամանի, Մատթ : ետ. եւ եղիր օրն այն
օրն կենդանին, ոչ է օրէն զանիկ ծննել ընդ հրեայն
յայն կենդանին, բայց պարտ է զանց առնել մինչ
յետիւս կենդանին, որ է Մատթ : ետ. զգ. եթէ հան-
դիպիցի լսումն յաւուրն Մատթ : ետ. եւ եղիր օրն
այն, օրն շաբաթու, ի նմին աւուր հրեայք զանիկ
առնեն ; բայց մեք առնեմք ի վաղիւնան աւուրն որ
է կենդանին, եւ Մատթ : ետ. ուստի հետեւի Թէ ոչ
կարէ երբեք համապատահել ի միում եւ նոյն աւուրն
զանիկ հրէից, եւ զանիկ քրիստոնէից .

I2. Սղալին որք զանիկ առնեն առաջ քան զա-
ստ լսումն լուանելն ; որ սղալումն պատահեցաւ հա-
յոց յամի Տեառն 1668. որոյ յաղագաւ Ռոսկան վար
դապետ, զկնի ուսանասուրին Հռոմոյ ազգային ասէ ;
Լսումն լուանն զկնի գարձնանամանին պարտ է լինել ;
զի

զի մեք չեմ լսեան, յաւուր կնքակէն զպատեքն տօ-
նիցեմք: զի նախ քան զհատարարածն, լսումն լու-
ան, ոչ է աւադ լսումն, այլ չեմին լսումն: եսկ աւ-
ադ լսումն է որ զինն դարմանատեղին լինին, որ է
զինն հատարարածին. Եսկ յայսմ ամուս, լսումն
լուանին նախ քան զդարմանատուս պատահեցաւ, և
զինն լսեան, դարմանատուս, և ապա զատիկ, որ
է արտաքոյ կանօնաց. Օայսքան Ռսկան; որ յաւե-
լէ, և ասէ Թէ նոյն սղալումն հանդիպի հայոց, յոր-
ժամ դնդ տարուոյն ՀՀՅԲՆ է, կամ բնին. Բայց զդոյշ
լինի ընթերցօղ, Թէ Ռսկան ուղղելով մին սղալումն,
անկանի ինքնին յայլ սղալումն, մինչ ասէ Թէ, լսե-
ումն լուանն զինն դարմանատեղին պարտ է լինել;
պարտ էր նմա ասել, զինն դարմանատեղին, կամ է
նոյն եսկ աւուրն դարմանատեղի; քանզի լսումն որ
պատահի յաւուրն դարմանատեղի, աւադ լսումն է,
և զատիկ յօնն յաւուր կնքակէն որ է չեմ լսեան.

13. Սղալին դէլ այնօքիկ որք զինն դարմանատե-
ղին, և զինն աւադ լսեան, զզատիկ ոչ կատա-
րեն ի հետեւեալ կնքակէն, բայց զանց առնեն և միւս
կնքակէ, ոյք երբեմն հանդիպի հայոց. Ռւսան
նոյն Ռսկան ասէ; Թադաւորն աստուածալ սղալումն
բազում անգամ պատահի մեզ; զի որքան լսումն
լուանն, հինգ շաբաթի, ուրբաթի, և շաբաթի հան-
դիպին, ի կնքակէօղ զզատիկ ոչ առնեմք, և անցու-
ցանեմք ի միւս կնքակէն. ՀՀՅԲՅԱՆ ԱՍՈՒԱԾԱԼ ՍՂԱ-
ԼՈՒՄՆ ԱՅՍ Է, ՈՐ ԱՅԺՄ ՅԱՐԼԻՆԱՆ. Օայսքան Ռսկան.

14. Բայց այսուհետեւ զատիկն հրկեց, և զատիկն
քրիստոնէից, ոչ կարէ լինել առաւել քան ՀԵ. աւուրց,
յորժամ յաւուրն դարմանատեղին հանդիպին և միասին
օր կնքակէն, և լսումն լուանին; քանզի յայնժամ հրկ-

այլ

այք և նմին կերակրէ զպատեհ կատարին ; նակ մեք անցուցանեմք և միւս կերակրէ .

15. Լուսինն զատկական, և լրումն նր, ոչ պատահի միշտ և նոյն աւուրս, բայց պատահի երբեմն և մատուռ, և երբեմն յաջորդել, և լուսնի լրումն զատկական եաղոյ և քան և մինդրէ մատուռ ամսոյն, մինչև ցօրն աջորդել = ԺԲ. ՌԱստի հետեւի թէ կարէ զատիկ զամիս մի ողջոյն առաջանալ, կամ և զամիս մի ողջոյն յետս ձգել . սակայն ոչ կարէ երբեք առաջ լինել քան ցօրն : ԽԲ. մատուռ ամսոյ ; և ոչ կարէ երբեք յետս ձգել քան մինչև ցօրն : ԽԵ. աջորդել, այլ նակ հանդիպի յորժամ լրումն լուսնին լինի ի քառանեւորդում մատուռ ամսոյն = քանզի որով հետև զատկական չէ լրումն այն որ եղև նախ քան զկաւագաբաժ , պարտ է մեզ ճշալ լուսնին միւսում որ եղիցի զատկական ; և լինիցի ծնունդ նր, ի չորեքորդում աջորդել ; և լրումն նր յուր և առաջին քորդում նոյն ամսոյն ; յորում աւուրն եթէ պատահիցի օր կիրակէի , յայնմ կիրակէի ուրեք արդեօք զպատեհ զատիկ ի բնաւից , նակ մեք պարտիմք անցուցանել մինչև ցմիւս կիրակի որ լինիցի աջորդել ԽԵ. Եւ յայնմ աւուրն զատիկ առնել .

16. Լատինացիքն ոչ կարեն երբեք ծռազատիկ առնել ; քանզի միշտ և անփոփոխապէս զատիկ առնեն յայնմ կիրակէիՁ որ հուպ հետևի աւագ լման, ըստ կանոնադրութեանն Նիկիոյ . ՌԱյլ հետևի թէ գուանիք և հայք զպատեհ միշտ առնէին հաւասար և ի միասին , եթէ հաւասար և ի միասին ունէին զհատուածական , յաւուրքն նա. մատուռ ամսոյ . ՌԱյլ ուրով հետև հայք զհատուածական գարնանային հաշուին յաւուրն : ԽԲ. աղբեկն , որ է մատուռ : Ը. եթէ

այն

պատահեցի լրութիւն լուանին առաջ քան զօրն այն մարտի երթանելդ, ոչ կարեն զղաւթիկ ծօնել զինի լման այնորիկ; քանզի եղիւ լրութիւն այն առաջ քան զիւրեանց դարմանամուտ, այլ պարտ է նոյ ճնալ լման մեւսում.

17. Աչքան եղիցի բաւականն առ ի նմանել Թէ յորում աւուր պարտ իցէ քրիստոնէից կատարել զղաւթիկ. Մնայ ինձ այժմ մեկնել զայլ մի դժուարութիւն երեւնագոյն և քան զառաջինն, յաղագս նորոգմանն Լուսաւորչին, և հաստարակ ողջմանն որ պատահեալ էր, յաւուրսն Նիկիայ ժողովոյն ի վեր; և տեսանել Թէ հաստարակած դարձնանայինն, զի արդ ի բուն տեղւոջէ եւրմէ յառաջ էր խաղացեալ զաւուրս. Ք. ի ժամանակէ անտի Նիկիոյ, մինչև ցամին ՏՓ. 1582. յորում Գրիգորս երեքտասաներորդ հռոմէական Պապն, զԼուսաւորչն նորոգեաց, ողջունն եբարձ ի միջոյ, և զդարձնանայինն հաստարակածն յետս դարձոյց ի բուն տեղի եւր, յորմէ ոչ կարասցէ այլ ևս խաղալ մինչև ի կատարած աշխարհի.

հանապատալոյ, եթէ ոչ արձակէր զկին նորա, և զայլ կին ածէր ի դստերացն նմին. Հաճանեցաւ մանասէ, և յանձն էառ հրաժարիլ ի կնոջէ նորմէ, և ոչ լուծանել ի կարգէն քահանայութեան. Այս գիտեալ Սանաբաղատայ, ամ ջանիւ հնարեաց շրջել զմանասէ ի խորհրդոյ նր անտի, և երդուաւ նմա, ոչ միայն չթողուլ զնր հրէայք լուծցեն զնա ի քահանայութենէ, բայց և յանձն էառ կացուցանել զնա քահանայապետ, և ի վր դարձուցին լերինն կառուցանել զտաճար հանդերձ տաճարին երուսաղէմի, յորում կարասցեն այսու հեռւ Սամարացիքն երկիր պագանել ստին աղի. Քաջալերեցաւ մանասէ խոստմամբ Սանաբաղատայ, և խստացաւ մի արձակել զկին նորա. Եւ երբև անցին ամք Ե. տեսեալ Սանաբաղատայ զի կոտորեցան զօրք դարեհին յերեսաց ամենայաղթ աղեքսանդրի; ապստամբեցաւ ի դարեհէ, և յարեցաւ յաղեքսանդր, և խնդրեաց ի նմանէ զհրամանն ի վր դարձուցին լերինն կառուցանել զտաճար, և զիեսայն նր մանասէ կացուցանել քահանայապետն ի վր նլին, ոմն եղև նոսկ. Եւ ի ժամանակէ յայնմանէ բազբոքեցան նա քան զառաջ հրէայք, և Սամարացիք ոխուեցան և տանջանս առ միմեանս: քանզի Սամարացիք զտաճարն նորեանց նախասնծարէին, քան զտաճարն երուսաղէմի, և ասէին թէ առ մեզ է աշխարհս, և ընդունելի պաշտօնս աղ, և տեղի ուր արժան է երկիւղածանալ. Եւ սաստկացաւ խռովութիւն ի մէջ երկու ազգաց զամս բազումս, մինչև ցաւուրս Պտղոմէոսի փիլոմետորայ Եգիպտացւոց արքայի, յորժամ հրէայք բազբոքեցին առ դատաստան նր, և խնդրել

դրեցին զի վճռեսցէ, յերկուս տաճարաց անտի ո՞ւր եցէ աւագ տաճար։ Ելոյծ զվէճն Պետրոսիոս, և սահմանեաց թէ Երուսաղէմի տաճարն, աւագ տաճար հռչակեսցի.

Պատասխանի ետ Տ՚ն կնոջ Սամարացւոյ, և ասէ; Եկեսցէ ժամանակ յորմէ, ոչ ի լերինս յայսմիկ, և ոչ յԵրուսաղէմ երկիրպագանիցեն հօր։ այս ինքն, աշխատասիրք հասեալ են աւուրք նոր օրինացն, յորժամ ի Սամարացւոց, և ի հրէից բարձցի սրբալուծիք, և պաշտօնեայ աշխ; քանզի հաստատեսցի օրէնքն նոր, և քահանայութիւն նոր կատարեալ յոյժ քան զառաջինն; և եղիցի զի, ոչ միայն Սամարացիք, և ոչ միայն հրէայք, և ոչ ի միում և ևթ տեղւոջ; Բայց ամ ազգք երկրի, և յամ ուրեք զամենահարազատ պաշտօնեայ մատուսցեն աշխ.

Տաւելու Տ՚ն և ասէ; Դ՚ուք երկիրպագանէք որում ոչ գիտէք; մեք երկիրպագանեմք որում գիտեմք, զի փրկութիւն ի հրէից է. Սամարացիք ի սկզբանէ երկիրպագանէին արդեօք աշխ; սակայն ուր նէին զկուռս բազում զորս պաշտէին աշխ հաւատաւոր; և այնու նոքա ոչ գիտէին զաշխ; և ապա երկիրպագանէին որում ոչ գիտէին. Իսկ հրէայք երկիրպագանէին որում գիտէին, զի երկիրպագանէին միւմ և ևթ աշխ, և երկիրպագանէին ի տեղւոջ զոր ընտրեալ էր ինքնին աշխ ի պաշտօնեայ նէր; և երկիրպագանէին նմա արարողութիւք զորս ի վերուստ ուսանէին, և ոչ ի մարդկանէ; ապա ուրեմն ի հրէից էր փրկութիւն, այսինքն Քրիստոս Յանօթութիւն, և պաշտօնեայ, աշխ, առանց որոյ ոչ գոյ փրկութիւն. Դ՚ն ի հրէից է փրկութիւն, քանզի Քս, որ հրէայ էր ազգաւ, փրկիչ է ամ աշխարհի.

Դաշ-

ՀԱՄԱՌ. ԽՏ.

Եկեսցէ ժամանակ, և այժմ իսկ է, յորժամ ճշմարիտքն երկրպագուս երկրպագա-ցեն հոգւով և ճշմարտութեամբ.

Հերձուածողք, ըստ Թէոդորէտոսի մատաղ իւրեանց Թէոդոն զբանս քրիստոսական, և ասեն Թէ մեզ պարտ է պաշտել զաշճ միով և եթ հոգւով; ուստի և բնաւ զպաշտուածս սուտ մերժեն և բաց զամենայն արտաքինս արարողութիւնս, որովք ուղղափառք քրիստոնեայք երկրպագանեն աշճ. իսկ մեք, և ի միտս ոչ առնուն զինչ ինչ երկրպագու հոգւով.

Երկրպագու հոգւով այն է որ զպաշտուածն մատուցանէ աշճ, ոչ մարմնով միայն արտաքսապէս, բայց առաւել հոգւով ներքսապէս: ոչ շրթամբք միայն, բայց յաւէտ մաքուր, և ջերմեռանդ սրտիւ: ոչ միայն ձայնիւ բերանոյ, բայց և Թախանձանօք մտաց: ոչ միայն արտաքին պատուարգօք, բայց յաւէտ ներքին գենմամբ անձին իւրոյ. ի հնումն այնպիսիք երկրպագուք էին սակաւք յոյժ: քանզի էարհարացիք լի էին սուտիւք, և տգիտութեամբ; հաւատային զիաւարն ընդ լուսոյ, և զիւրուն ընդ աշճ: նոքա հրէայք պաշտէին արդեօք զաշճ, բայց արտաքսապէս մանաւանդ քան Թէ հոգւով, և ճշմարտութեամբ: բաւական համարէին զոհել զցուլս, և զխոխաղս, որոց արիւն ոչ կարէր բառնալ զմեղս: շրթամբք աղաղակէին առ էլոհ; և աներաւութիւնք նոցա բողբոջէին

ՎԼ ՆԹ. յերկինս. ուստի յանդիմանէ զնոսա աշճ և ձեռն էսայի մարգարէի ասելով, մերձ է առ նա ժողովուրդս այս;
ԺՂ.

այս; բերանով խօսով, և շրթամբք խօսեանց պա-
տճէն զիս, և սիրտք խօսեանց հեռացեալք մեկ-
ուսն ևս յինէն. ապա՝ նաև էր ի հնուամբ: բայց
ահաւասիկ հասեալ է ժամանակ յորժամ զչարիսն
երկիրպագուս, ընդունօղք նոր օրինաց հոգւոյն ա-
վարեալք մատուսցեն նմա արտաքսական՝ առնահաճոյ
պատարագ, ոչ անպիտան անասնոց, բայց պատուա-
կան մարմնոյն, և արեան փրկչին; և հաստատեալք
ներքսապէ անխախտ հաւատով, քաջալերեալք ան-
սասան յուսով, բորբոքեալք ջերմեռանդ սիրով ստա-
ցեան զպատուոյն արժանիս արքայութէ, և ուղղեսցին
ի գործս բարիս համեմատս հաւատոյ խօսեանց.

ՀԱՄԱՐ. ԼԲ.

Ընկալարէք զաչս ձեր, և տեսէք զար-
տօրայսն ....

Ընդհակառակ հասեալ հնդոյն Ծանուցանէ Տէր աշա-
կերտաց խօսոց թէ որ ինչ կերակուր զոր ուտիցէ ու-
տել, այսինքն, հոգեւոց փրկութէն. Եթէ ասէ ցնո-
դուք ասէք թէ այլ ևս չորք ամիս, և հունձք գան:
ընդ որ ասէ թէ ես ձեզ ասեմ կորստական հնդոյն, և զաչս
ձեր ընդ էր ոչ աստուածայք տեսանել զարտօրայսն
հասեալ, և զբազմութէն անթիւ մարդկան, հրէից,
և հեթանոսաց որք յօժար են, և պատրաստ ընդ-
ունել զվարդապետութէն փրկութէ? Պատրաստ լե-
ցուք ուրեմն և դուք, զմանգաղն բանին առաքել ի
հունձն, զի ի ժամանակին հասուցմանց, հասարակ
ցնծասցեն որ սերմանէ, և որ հնձէ. Լսեմանեցին
առաջ քան զձեզ Նահապետքն, և մարգարէքն, և

վաստակօք բաղմօք նախապատրաստեցին զսիրտս հրէից ; եսկ դուք ի վաստակս նոցա մտէք, և զոր ինչ նոքա սերմանեցին, զայն պարտ է ձեզ այժմ բռնաւին հնձել, և յամս աղագաց զհոգիս ժողովել ի շտեմարանս արքայութեանն.

ՀԱՄԱՐ. խե.

ԶՈՐ ԿՂ ՄԻՆՉ ՉԵՒ ՄԵՌԵԱԼ ԻՆՔ ՄԱՆՈՒՆԿՆ ԻՄ.

Խնդրէ նշանան ի քէն, զի ինձի ի տուն նոր, և բժշկեսցէ զորդին նոր, քանզի մերձ էր ի մեռանել. Ուստի նշանան այն զհաւատս ի քո ; քանզի ոչ խնդրէր ի նմանէ զբժշկութիւն, եթէ ոչ հաւատայր թէ նա կարօղ էր բժշկել. Բայց թերևս էր, և անկատար հաւատ նր, քանզի այսպէս դիտէր թէ կարօղ չէր քո բժշկել զհիւանդն, եթէ ոչ տեսանէր ինձ մարմնով աչօք, և զձեռն դնէր ի վր նր. Վա՛յ այսոցիկ յանդիմանէ զնա քո վա՛ Թերահաւատու՛թե ; և ի մեսանն կշռամբէ զայսոսիկ, որք դժնդակին հաւատալ, եթէ զնշանս ոչ տեսանեն. Ի սկսանել նոր օրինացն պարտ էր արդեօք լինել նշանաց, ի հաստատուածս նորածին, և դեռաբուսիկ եկեղեցւոյ բայց յորմէ հետէ օրէնքն մեր այնքան նշանօք յայտնեցաւ ; այնքան քարոզատո՛ւց տնեզերալուս որ բոտմամբն հռչակեցաւ ։ այնքան Համբերոսաց արեամբն ներբեցաւ ; այլ և ս չեն պէտք ինչ նշանաց, առ ի ճանաչել զշնորհսուն թի.

ԳԼՈՒԽ. Ե.

ՀԱՄԱՌՕՏ. Բ.

Էր յԵրուսաղէմ պրոբատիկէ աւազան.

Էր յԵրուսաղէմ դուռն մի անուանեալ Պրոբատիկէ, որ Տունագ բառբառովն կոչի ասել, դուռն ոչխարաց, զանգի ընդ դուռն ընդ այն ելանէին ոչխարք յարօտ. Եւ մերձ ի դուռն էր աւազանն, որ դրան անուանեալն անուանեալ էր Պրոբատիկէ. ունուանեալ և բեթհեղդայ, որ երբայեցերէն Թարգմանի տեղի հեղմանց, կամ տուն ողորմութեց; ի նմա անդ ջուր յորդառատ որոյ ջրոյ էր զատնալ յոյժ; զանգի հրեշտակ Տեառն աներևութաբար, և անկարծակի ի նմանէր երբեմն յաւազան, և ի նշան դալստեան նորոյ յուզէր զջուրսն, և ո՛ր հիւանդ, ի շարժելն ջուրց, նախ ի նմանէր յաւազան, բժշկիւր առ ժամայն ի հիւանդութենէ նորմէ: և մինչ բժշկութենէ սպառեալ կայր բժշկական զօրութեն ջուրց, և ոչ էր բժշկել և ս մեռոյն, մինչև ի միւսանգամ դալուստն հրեշտակին. Ոչ ասի ի սմահս աւազանին անկեալ միշտ դնելոյ բազմութենէ հիւանդաց, որք անկ ունէին ջրոց յուզելոյ.

Աւազան Պրոբատիկէ նշանակէր զխորհուրդս Եկեղեցւոյ, և զպաշխարութենէ. բազմութենէ հիւանդաց որք նստէին առ ջուրս աւազանին, նշանակէ զհաւատացեալսն մարդկան որք հիւանդք են ամենե-

քեան, և հիւանդք մահուչափ, ի ձեռն սկզբնական, կամ ներգործական մեղաց. Յաւադաւ հրէայքն ի բայց Թողեալ զբժիշկս, և զայլ ամ դեղորայսն, նա առեալ առ աւազանաւն սկիզն ունէին ջրոց յուզելոյ; որ նշանակէ Թէ մեղաւորաց անհնարին ինչ է այլով նուէք բժշկականութիւն կենալ, և քաւել ի մեղաց, բայց միայն կենդանարար աւազանաւ սկզբանաւ, կամ աշխարհի արտասուօք ապաշխարութիւն. Հրեշտակ էր ինչանէր ըստ ժամանակի յաւազան, տալ ջրոց դիրաշալն զօրութիւն բժշկելոյ; նոկ յաւազանն սկզբանաւ, և ապաշխարութիւն ինչանէ զօր հանապատ, ոչ մի ոք ի հրեշտակաց, բայց հրեշտակաց էր ինքնին որ հոգի, որ զկեցուցիչ շնորհն նոր սիրէ ի հոգիս ապաշխարելոյ, և սկզբանելոյ. Իւ բժշկին միոյ հիւանդին սպառնոր բժշկական զօրութիւն աւազանին; բայց աւազանին սկզբանաւ, և ապաշխարութիւն զօրութիւն անպակաս է, և անսպառ, կարօղ միշտ կենդանացուցանել զորքանս ի նա ինչեն.

ՀԱՐՑ. Յ Ե.

Հայր իմ մինչև ցայժմ գործէ, և ես գործեմ.

Ղ՞որ ասէք, ով փարիսեցիք, Թէ յաւուրս շաբաթուց, պարտ է հանդչիլ յամ գործոց, և զհիւանդս ևս ոչ բժշկել; վ՞ս այնորիկ զի զաւուրս վեց գործեաց Աստ զգործս նոր զամ, և ապա յաւուրն շաբաթու հանգեաւ յամ գործոց զորս արար. Ղո՞ւ անսիրաք և հեղգասիրտք առ ի նմանալ զգերան? Ղո՞ չառնուք ի միտս Թէ գերքն ոչ ասեն Թէ հանգեաւ

Աստ

աշխ յամ գործոց, բայց ասեն թէ հանգեաւ յամ գործոց ղոյս արար; որ կասի ասել, թէ յետ վերջոյ աւուրց արարչութեան, այլ եւս ոչ արար աշխ զինչ ինչ առեսակս երացն, որ ինկ է ձյնարեիս. Բայց վա այսորիկ ոչ լուեաց ի գործելոյ; նա եւ մինչեւ ցայժմ գործէ միշտ, եւ անդադար՝ քանզի զաշխարհս պահէ, եւ կառավարէ, եւ հայրական խնամութեամբ տա մադրէ զամ ինչ; եւ եթէ զմի եւ եթ կէտն ժամանակի լուեր ի գործելոյ, եւ ի կառավարելոյ, վերլուծանիւր առ ժամայն ամ ինչ, յոչ ինչ. Իսկ ղոյս օրինակ գործէ հայր իմ, գործեմ եւ ես, եւ ոչ հանդչիմ ի գործելոյ վա փրկութեան աշխարհին; ուսուցանելով զադեաս, բժշկելով զհիւանդս, եւ բարն առնելով ամենեցուն: եւ ոա հայր իմ գործելով անդադար վա պահպանութեան աշխարհիս, ոչ պիտի զշաբաթ; նոյնպա եւ ես զշաբաթ ոչ լուծանիմ, մինչ անդուլ գործեմ վա փրկութեան մարդկան.

ՀԱՄԱՐ. ԽԹ.

Ոչ կարէ որդի մարդոյ առնել յանձնէ եւ ոչ ինչ, եթէ ոչ տեսանիցէ զհայրն, զի առնէ.

Ոա է քնութեամբ, նոյնպա է կարողութեամբ, եւ գործ՝ նիկ ոչ զբնութեամբ ուրն, ոչ յանձնէ եւրմէ, բայց յանձնէ հօր յորմէ ծնաւ; ապա եւ զկարողութեամբ եւ գործ ուրն ի նմանէ. Ոասան հետեւի թէ, մի է եւ նոյն գործն հօր, եւ գործն որդւոյ, ոա երկոսեանց մի է, եւ նոյն բնութեամբ; եւ որդի ոչ կարէ առնել եւ ոչ ինչ յանձնէ եւրմէ, այսինքն, առանց արար

չակցութեամբ հօր; եւ հայր ոչ կարէ զգործ ինչ գործել

առ

առանց գործակցութեան Ղազարոսի ; քանզի երկոքին գործին անտրոշաբար , միաանաբար , յարաձոյգ ընդ միմեանս . Ղազարն զոր օրինակ գործէ հայր և ես ի շաբաթու , և զշաբաթն ոչ պղծէ ; նոյնպէս և ես զբժշկութիւնս առնեմ և ես ի շաբաթու , և զշաբաթ ոչ լուծանեմ .

ՀԱՄԱՐ. ԺԸ.

Հայր սիրէ զՂազարն , և զամ ինչ ցու- ցանէ նմա .

Բառն այն , ցուցանէ , կամի ասել , տայ ; և այս ի գործութեն բանից ՏՐՆ ; հայր տայ Ղազարոսն նուագում ինչիանութեն առնելոյ , զոր ինչ առնէ հայր ինքնին ; և ուստի Ղազարն զնոյն գործն , զոր ունի հայր ; և տայ հայր այսու հետև Ղազարոսն նուագում , առնել զգործս մեծամեծս յոյժ , քան զգործս զոսս ասացի , և ընդ որս զարմանայք դուք , ով փարիսեցիք ? քանզի եթէ զարմանայք թէ յաւուրն Շաբաթու բժշկեցի զանդամալոյծն ; որպիսիք եղիցին այսուհետև զարմանք ձեր , յորժամ զիս տեսանիցէք , զի այն իշխանութիւն զոր ունիմ ի հօրէ , ոչ միայն բժշկեմ զհիւանդս ; այլ և յարուցանեմ զմեռեալս , և դատաստան առնեմ ի վր կենդանեաց և մեռելոց .

ՀԱՄԱՐ. ԻԵ.

ՈՉ ԵԹԷ ՀԱՅՔ ԴԱՒԵ ՂՈՉ, ԱՅԼ ՂԱՄ ԴԱՒԱՍՏԱՆ ԵՒ ՈՐԴՒՈՅ.

Հայր ոչ առնէ զդաւաստան միայնակ, առանց որդւոյ: ոչ առնէ զդաւաստան երեւելաբար, ի լուր, և յականջս մարդկան; բայց եւ որդւոյն իբրու ի վերայ ամենեցուն առնել զդաւաստան, ոչ միայն յաւուրն, և առանձնական ի ժամու մահու իւրաքանչիւրոյ; այլ և հանդերձեալ, և ընդհանրական յաշխարհի, և լուելոյ ամ մարդկան.

ՀԱՄԱՐ. ԻԶ.

ՈՒՔ ԲԱՆԸ ԻՄ ԼՍԷ.....Ի ԴԱՒԱՍՏԱՆ ՈՉ ՄՏԱՆԷ.

Քս ոչ կամի ասել Թէ որ լսէ, և առնէ զբանն նր, ի դաւաստանէ նր ապրեսցի; քանզի վս ամենեցուն, Թէ մեղաւորացդ, Թէ արդարոց ասէ Պօղոս Թէ, աղմենեցուն մեզ յանդիման լինել հայ առաջի աւնին քի. ուրեմն, անուշամբն դաւաստանին, պատուէ ի համառել զդաւաստանէն; և քի եա Ե. դլ. Ե. նոյն զօրուԹի այս է, Թէ որ զբանն նր լսէ, և առնէ, նա ի դաւաստան ոչ մտանէ, այսինքն, նա դաւեսցի արդեօք, բայց ոչ դաւապարտեսցի; այլ փո խեսցի ի մահուընէ, ի կեանսն.

ՀԱՄԱՐ. ԽԵ.

Եթէ ժամանակ, և արդէն նոկ է յոր
ժամ մեռեալք լսէ ձեն Որդւոյն Աստ.
Որդւոյն ԱՍՏ.

Ոչ յամեաց ԱՏՐ կատարել զբանս նուբ զայսոսիկ. Տայրոսն դատերն ննջեցելոյ հրամայեաց, ԱՍՏ, կաց մանուկ դու? Լո՞ւաւ մեռեալն Հայնն նր, և յարեաւ վաղվաղակի. Որդւոյն այրուց Նայինացւոյ հրամայեաց, և ասաց Պատանի դու, քեզ ասեմ, արի. Եւ առ ժամայն մեռեալն դարձաւ ի կեանսն. Զո ընդօրինակ Ղազարոսն ասաց, Ղազարէ, արի, ելի արտաքս. Լո՞ւաւ Ղազարոս, և նոյնժամայն ել ի դերեզմանէն. Բայց յայտնագոյն և եղեալ զօրուԹի Հայնին քի, ի միւսանգամ գալստեան նր, յորժամ ահագին որոտասցէ, Յուտս կացէք մեռեալք, եկայք ի դատաստան! Եւ յարիցեն ամենեքեան, յանդիման կալ առաջի աստնի նր.

ՀԱՄԱՐ. ԼԱ.

Եթէ ես վկայեմ վ անձին իմոյ, վկայուԹի իմ չէ ճշմարիտ.

Յօհան. Ը. ԺԳ. Խնամ է բանն այն քի, որ յայլում ուրեք ասէ, Եթ-էպէտ ես վկայեմ վ անձին իմոյ, վկայուԹի իմ ճշմարիտ է. Իսկ Թերևս քի ինչպէս հակառակ?

Պատասխ. Օրո ինչ վկայէ քի, եԹէ վ անձին իւրոյ, կամ եԹէ վ այլոյ որ և իցէ երկնի, ճշմարիտ է, և անխարդախ վկայուԹի նր. Բայց նկատ-

մամբն

մանքն առ խաղաղութեին փարեսեցւոց, բարւոք ասէ, վկայութեին իմ չէ ճշմարիտ; այս ինքն, ճշմարիտ է արդեօք վկայութեին իմ ըստ ինքեան; բայց առ ձեզ, ով փարեսեցիք, և ըստ կարծեաց ձերոց, չէ ճշմարիտ: քանզի դուք կուրացեալք նախանձու խաղաղութեանայք չընդունիլ զբանս իմ, և համարելով զիս իբրև զլրկի ինչ մարդ, ասէք զինէն, զոր հասարակօրէն ասեն զայլոց, Թէ վկայութեին առնողին վասն ինքեան, ճշմարիտ չէ վկայութեին նր. բարւոք է. բայց ոչ ես միայնակ վկայեմ վասն իմ; վկայէ և ես հայր իմ երկնաւոր, և լուայք դուք ձայնն նր յաւուրն մկրտութեն իմոյ, զի ասէր, դա է որդի իմ սիրելի ընդոր հաճեցայ: և դուք ասէք եթէ ճշմարիտ է վկայութեին նր. հաւաւել այնքան աքանչելիք և նշանք, զորս հայր իմ ետայ ինձ առնել, և որոց ականատես վկայք էիք դուք, վկայեն վասն ճշմարտութեն վարդապետութեան իմոյ. զի՞նչ բաց ի վկայութէ հօր իմոյ, ունիք և ես զվկայութեին Յօհաննու մկրտչին, և լուայք յորժամ ասէր վասն իմ, հաւատասկ էր առն հաւ, որ բառնայ զմեղս աշխարհի; և բարւոք դնեիք զի դրեցաւ յօրէնս ձեր, Թէ ի բերանոյ երկուց, կամ երից վկայից հաստատեսցի ամ բան. ուրեմն Թէ և ոչ գոյր ձեր մեղն, Թէ ոչ ընդունիք զվկայութեին իմ; բայց մինչ հօր երկնաւորին, և Յօհաննու վկայութեին ոչ ընդունիք, չիք պատասխանն վասն Թէ քահանայութեն ձերոյ.

ղ. ուք ոչ զնայն նր երբեք լուսայք, և ոչ զտեսիլ նր տեսնք.

Ոմանք հետևելով բառական նշանակութե ասեն թէ, աչք անմարմին գոլով, աղատ, և մեկնեալ յամ նութեայ, բերան ոչ ունի, ոչ լեզու; և ապա ոչ ևս յն, զի նախ գործիքն են բերան, և լեզու. ղՀԼ ամ տեսին և կերպարանն է չափաւոր, և մարմնա նան նրին; իսկ աչք մարմին, և չափ ոչ գոյ: ապա ոչ կարէ լինել ըզդալն ինչ լսելն, կամ տեսին նր: ուստի հետևի, թէ ոչ միայն հրէայք, բայց այլ ոք որ և իցէ, զնայնն աչք ոչ լուսան երբեք մարմնոյ ականջօք, և զնա ոչ տեսին մարմնոյ աչօք. Սա կայն մարդկօրէն ասելով, ուստի աչք զնաւսին նր, որով զկամս նր ևս մեզ ծանուցանէ; երբեմն ի ձեռն նեղ ընդունելոյ նրոյ, որք լսելի են, ոչ մարմնոյ ականջաց, բայց սրտիկ մերոյ; ուստի ասէ, Սրտաբոյց զնա յանդագաստ, և խօսեցայց ի սրտի նր. Երբեմն խօսի սրտաբոյն նայնու զոր լսելի առնէ ականջաց մերոց, շարժելով զօդն ոտ և կամի. աչք կերպիւ լսելի առաւ աչք զնայնն նր ևս մօսեխն, և մարգարէից բազում անգամ.

Ղեվեայ. Ը. ԺԲ.

աղուարկեա. Ընդ եր ուրեմն ասէ քր Թէ հրէայք ոչ երբեք լուան զնայն նր?

Պատասխ. Նա աչք բանն ոչ լսէ, որ լսէ զնա, այլ ոչ կատարէ. Հրէայք աչք բանն լսէին, բայց ոչ լսէին, քանզի զնա ոչ կատարէին, այլ կային նմա հա

Եսայ. ԻՁ. Թ. կառակ. ՈՒստի ասէ զնոսն զնոյն, Թանձրացաւ սիրտ ժողովրդեան այսորիկ, և ականջօք նրբեանց ծանր լուան

լուան, և զաչս նըրեանց կախուցին, զի մի երբէք տեսանիցեն աչօք, և ականջօք լուիցեն.

ՀԱՄԱՌ. ԽԵ.

Եթէ այլ ոք եկեսցէ յիւր անուն, զնա ընդունիցիք.

ԱՅս էր կրկին մեղքն հրէից; զի ոչ ընդունէին զՔՍ, որ եկեալ էր յանուն հօր ԱՅ: և ընդունէին զմոլորեցուցիչս որք եկեալ չէին յանուն ԱՅ. Օայս ասէր ՔՍ յաղագս Նեռին, որ ի կատարած աշխարհի եկեսցէ յիւր անուն, և ոչ յանուն ԱՅ; և նշանօք և արուեստիւք սուտ մոլորեցուսցէ զբազումս, մանաւանդ ի հրէից, որք նըրբև զմեսիայ ընդունիցին զնա.

Բայց զբանն ՍՐՆ կարեմք նմանալ և ա՛լ հեղհեղուածողաց, որք Նեռին կարապետք են, և արբանեակք նը; որք զինսն մեհնելոյ ՔՆ յաշխարհէ ասան, նըրբև զդայլս յաւիշտակօղս, ի գաւթէ մտցեն, ոչ ընդդուրն ուղղափառ հաւատոյն, ցրուել, և կորուսանել զհօտն ՍՐՆ. Նեռինք այնոքիկ գան յանուն նըրեանց, և ոչ յանուն ՔՆ; զինսն ինչ ոչ առնեն; Թափուրք են ի գիտութէ; փոյթ ինչ ոչ է նց ա՛լ փրկութէ հոգւոց; օրինակօք չարութէ գայթադղութէն դնեն առաջի Ժողովրդեան; ինքնասիրք, արծաթասէրք, հոռետեսութէք, կեղծաւորք, փառասէրք, նախանձաւոր, շաղփաղփօղք: սակայն անմիտ և առյասիրտ Ժողովուրդ զինսն երթայ նց; և փոխանակ անսալոյ ողջմտիւ վարդապետութէն ՔՆ առաքեալ; ըստ մարգարէին ընկենայ նըրեանց կորուսանել զհոգիսն.

ծանին յառաջագիտ, և ընդ կոյր առաջնորդս, կոյրք
և խորխորատ անկանին.

ՀԱՄԱՐ. ԽԵ.

Ամն համարիք եթէ չարաչաւ ինչ ոչեմ
գնէնջ առ հօր ..... զոյ որ չարաչաւ
կայ գնէնջ, ասէս.

Թէպէտ հրէայք խաւսարտուէք, և առ նա՛
խանձու, հակառակ կային վարդապետուէն քի՛;
սակայն սուտ պատճառանօք խնդրէին արդարացու՛
ցանել զանձինս ուրեանց, և ասէին ցՅՆ, մէք գվար-
դապետուէն քո ի բաց մերժեմք, ոչ ոխակալուէք,
և հակառակասիրուէք, ոյզ կարծես դու; քայց գին
հակառակ կաս օրինացն որ առՀաւ մեզ ի Մօսիսէ,
և լուծանես գնա. ՀԱսէ ցնՅՆ Տ՛; կեղծաւորք,
գպատճառս գինչ յօդէք խաւսարտուէն ձերոյ? ոչ
տեսանէք գին Մօսէսի օրէնքն վկայեն վ՛ նմ? Եւ
եթէ Մօսէսի աշակերտք էք, գոր Մօսէս այնքան
արարողուէքք, և օրինակօք նախապատուեաց ձեզ,
ընդ էր ոչ ընդունիք զնա, գոդն մարդոյ որ ընդ
ձեզ խօսի? ՀԼ՛ այնորիկ, Թէպէտ ես շարաչաւ ինչ
ոչ ոչեմ գնէնջ առաջին հօր երկնաւորին, ահա չարա՛
չաւ լինիցի Մօսէս ինքնին, և ի բանիցն նակ օրի՛
նացն դատեսցէ զձեզ.

Հարցանես. ոՒր, և գին արդ վկայեաց Մօսէս
վ՛ ՅՀ?

Պատասխ. Ի գիրս Ծննդոց, ոչ. Գ. ասէ ՏՐՆ
ցԱբրահամ, Օրհնեսցին ի զաւակի քում ամ ազգք
երկրի: գՀԼ գլ ԽԵ. Ժ. մի պակասեսցի իշխան ի Յու-

դայ,

դայ, և մի պետ յերանայ նը, մինչ և եկեսցէ որ գալոցն է; նա է ակնկալութիւն հեթանոսաց: Տեը կրկ. Օրինաց, ԺԲ. ԺԵ. Մօսէս ասէ, Մարդարէ յեզբարց քոց եբրև զիս յարուսցէ քեզ Տէր Աստ քո, նմա լուիջիք. աղաւել ամ արարողութիւնք կարգելոյ է Մօսիսէ, նշանակութիւնք էին, որք եբրև ի հեռաստանէ նախացուցանէին զգալոց Քրիստոս; ուստի Պօղոս ասէ, Թէ աշխարհ ամ օրինակաւ անցանէք ընդ նա վիշ մեր: և դէպ, ըզատուէրս հանդերձելոյ բարեաց ունէին օրէնքն, և ոչ զնոյն կերպարանն ներացոյց. Եբրայ Ժ. ա. Կորնթ. ա. Ժ.

ԴԼՈՒԽ. Ը.

ՀԱՄԱՐ. ԽԷ.

Ստորեցեալք զներակուբ որ ճայ ի կեանս յաւիտենական, զոր որդի մարդոյ տացէ նեզ ; քանզի զնա հայր նշանեաց աշՃ.

ԱՅԼ ԵՐԵՔ ևառն Յս զԺողովուրդ բա-
զում, զին նկեալ էին ի Հաւատառաւմ,
և խնդրէին զնա, ասէ ցնոս ; վս այսո-
ւհետև զի յատկեսցուն զնեզ երկն յանապա-
տի հրաշալի հացիս, խնդրէք զնս և այս
օր, զին նոյնպէս յատկուրդ ուտիցէք = անմիտք, և վա-
տասիրտք ընդէր այնչափ հոգայք վս կորստական
նկերակրոյն, և ոչ առաւել խնդրէք զնկերակուրն որ
ճայ ի յաւիտեան, զոր այժմ նոկ պատրաստ եմ
ջամբել նեզ ? Եւ մի ասէք յանձինս ներ, Թէ զի արդ
հարկեցե սա, որ մեզ նման մարդ է, տալ մեզ զհայն
յաւիտենական կենաց ? Երկեմ նեզ մարդ, և եմ
նոկ ; բայց լոկ մարդ չեմ, այլ կարծեքդ դուք ; այլ
աշՃ ևս եմ ; քանզի կնքեաց աշՃ զմարդկութիւն իմ
կնքմամբն աշՃութեե, յորժամ անձնատոյց զնա ան-
համբն բանին ի ձեռն աշխնաւորական մեռա-
թեե ; ուստի եմ համանգամայն որդի մարդոյ, և որ
դի աշՃ ; և ապա կարող եմ տալ նեզ զկերակուր,

որ

որ տայցէ ձեզ կեալ ի յաւիտեան. Նա և ես ինչ
քէն եմ Հաց կենաց յերկնից ելեալ,
տալ կենդանս այսոցիկ որք հաւատով եկեսցեն առ
ես. Օտոյն բանն կրկնէ ստիւ Յն բազում անգամ,
մինչև ցհատար կբ. ի վկայութեի խորհրդոյն մար-
մոյ, և արեան Քրտոյ զոր առնոյց էր այսու հեռև
ի ներքոյ աեսակաց հացին և գինւոյ, ի աբ հաղոր-
դութե. տես Մատթ. գլ. ծզ. հատ. ծզ.

Հաւատար. Լէ.

ամէն զոր տայ ինձ հայր, առ ես եկեսցէ.

Հայր տայ զմեզ Որդւոյն, որժամ ուսուցանէ
մեզ Թէ զինչ պարտիմք հաւատալ ի Որդւոյն, և
հաւանեցուցանէ զմեզ ընդունել զբանն նր = ուսան
ի ներքոյ ասէ, ամէն որ լսէ ի հօրէ, և ուսանի ի
նմանէ, գայ առ ես, հաւատայ յիս, և ընկալցէ զկե-
անս յաւիտենականս. Հրէայք ուսեալ էին արդէօք
ի հօրէ, Թէ քր ամէն Որդի էր: զոյն և լուեալ
էր նց ի ձեռն օրինացն, և մարգարէից, և ի բերա-
նոյ Յօհաննու մկրտչին: սակայն նք ոչ հաւատային
զկայութե Յօհաննու, և մարգարէից, և ի բաց
մերժէին զբանն հօր: ուրեմն հայր ոչ տայր զնս
Որդւոյն; ուսան նք ոչ գային առ որդի; և եղև
անհաւատութե նց պատճառ կորստեան նց.

*ԵԹԷ տեսանիցէք զորդի մարդոյ, ընդ ելա-
նիցէ ուր էր առաջին?*

Օինչ տրտնջէք վասն սիրտք? Եւ ընդ էր դայ Քադրիք վ՚ր բանին զոր ասացի Ձեզ, Թէ տայ ես Ձեզ զմարմին իմ ուտել? Ա՚ր ինչան նշանք զորս արարն յաչս Ձեր, և մանաւանդ այն բազմացուցանել իմ զհինգ նկանակն, ինչէ յագեցուցանել ի նոյն զհինգ հազար մարդիկ, ոյք տեսեալ է Ձեր, և ի հրաշալի հացէ անտի յագեցայք; ոչ ապաքէն այն ամ նշանք վկայուԹի առնեն վ՚ր իմ, Թէ ոչ տկարանայ առ յինէն և ոչ ինչ, և Թէ կարեմ, եԹէ կամիմ, զմարմին իմ տալ Ձեզ ի կերակուր, Թէպէտ ոչ նմանայք Թէ այն զի արդ լինիցի? Իսկ եԹէ այժմ որ բերան ի բերան խօսիմ ընդ Ձեզ; այժմ որ զմարմին իմ աչօքդ տեսանէք, և Ձեռօքդ շօշափէք, խնամ Թո՚ի Ձեզ բանն այն զոր ասացի, Թէ տայ ես Ձեզ զմարմին իմ ուտել; զինչ լինիցի, եԹէ տեսանիցէք զիս զի նոյն մարմնով ելանիցեմ յերկինս, ուր էի առաջ? Օն արդ կարասցէք յայնժամ հաւատալ Թէ մարմին իմ ճշմարիտ կերակուր նոյ Ձեր ի վ՚ր երկրի, մինչ յերկինս համբարձեալ, եղիցի Ձեզ անտեսանելի, անշօշափելի, և անեղեռնի?

Իսկ զոր ասէ Քս՚ն, Թէ ելանիցէ ուր էր առաջ, բարւոք ցուցանէ Թէ ես ի նմա բնուԹիք երկու, աՀճային, և մարդկային: քանզի ելանիցէ արդեօք յերկինս ըստ մարդկային բնուԹե, ուր էր առաջ ըստ աՀճային բնուԹե.

Հոգին է կենդանարար ; մարմինն ինչ ոչ օգնէ .

Ամ հաւատքիդ եթէ զմարմին իմ տալոց եցեմ ձեզ ուտել , մարճասուր , և սովորական կերպիւ , զոր օրինակ զհանապազորդ հացին սովորիք ուտել , յօշելով զմարմին իմ անդամ անդամ , և զանդամս կտրելով պատառ պատառ : այնպիսին ուտելն ղղրնելի ինչ լինէր , և գարշելի ձեզ ; և ապա առ ոչ ինչ օգնէր . ուտիցէք արդեօք զմարմին իմ երապա՞ , և չլինաք տապա՞ ; բայց հոգևոր ինչ ձաշակմամբն ուտիցէք զնա ; քանզի աներևոյթ լինիցի ձեզ , և ի ներքոյ տեսակաց հացին ծածկեալ .

Ղ—Ի , մարմին իմ զոր ես տայ ձեզ ուտել , ոչ եղիցի լոկ մարմին , զատ և որպէս յաշխուէք , քանզի այնպիսին մարմինն ոչ ինչ օգնէր : բայց տայ ձեզ զմարմին իմ անբաժանապա՞ , և ան ի բացդրաբար միաւորեալ ընդ աշխուէք , յորմէ առնու մարմինս զի կեանքն է , և փրկուէք այսոցիկ որք ուտեն զնա . ուրեմն յորմամ ասէ քո՞ , Թէ հոգին է կենդանարար , անուշամբն հոգևոյն պարտ է խմանալ զաշխուէք քո՞ : ոչ եթէ չունիցի քո՞ զայլ ինչ հոգի , բայց յաշխուէք , կամ լինիցի նմա աշխուէք փոխանակ հոգևոյն , ոյք հայհոյեցին ի վարուց հետ ունանք հերձուածողք ; այլ աշխուէք ասէ հոգի , քանզի զոր օրինակ առ բնաւին կեանսն ոչ ինչ օգնէր մարմին միայն առանց հոգևոյն ; նոյնպա՞ առ ձերբնաւին կեանսն ոչ ինչ օգնէր մարմին քո՞ մեռնեալ , և որպէս յաշխուէք .

ԳԼՈՒԽ Ե.

ՀԱՄԱՐ Ա.

Ի ՄԵՐՆ ՄԵՕՆՆ ՀՐՀԵՑ ՏԱՌԱՔԱՐՈՒՀԱՐՈՑ.

ՅԱՌԱՔՈՒՈՆՆ առաղաւարտահարուց, կամ վկայեցան կատարէին հրեայք մերն ի սկիզբն Սեպտեմբերի ամսոյն. Յայնժամ պարտ էր նոցա կալ զաւուրս ուրն արտաքոյ տանց իւրեանց, ի տաղաւարս, և ի վրանս զրոս հարկէին հիւսանալ յոստոց ծառոց, ուստի՝ ամ՛ մեօնին անուն. Եւ առեալ էր հրէից զհրամանն յաշխ կատարել զմեօնն զայն, ի յաւիտենական յիշատակ նմին ինց յԵգիպտոսէ, յորժամ խաղացոյց զնս ձեռ և վրանս, զոմն ես. յանապատ. աշխ և նոցա ի խլատ, Թէ ըստ ասացելոյն Պօղոսի, ոչ ոք նմանէ ի կենցաղոյս յայսմիկ զմեացականն քաղաք, բայց զհանդերձեալն խնդրեմք, զնոր երուսաղէմ որ մեայ յաւիտեան.

ՀԱՄԱՐ Բ.

ՊՈՒՀ ԵՐԹԱՅՔ Ի ՄԵՕՆՆ ՅԱՅՆ; ԵՒ ՈՉ ՆՈՅՆ ԹԱՒՄ Ի ՄԵՕՆՆ ՅԱՅՆ.

Իբրև ելիցն եղբարք ՏՐՆ ի մեօնն առաքաւարտ հարցայ, ել և Յս ինքնին ի նոյն մեօնն, ուրեմն զի արդ

այդ ասէ, Թէ ես ոչ երթամ ի տօնն յայն?

Պատասխան. Եւ այդ ևօք քո՛ ի տօնն, բայց ոչ եւ եղբարբ նւրովք հանդերձ, այլ մեկուսի՛ ի նմ՛ն. ոչ եւ ի տօնն յայտնի, բայց եւ երբեւ ի ծածուկ. ոչ եւ ի տօնն յառաջնում աւուր տօնին, բայց ի չորրորդում. Եւթամ եւ այդ ևօք յառաջնում աւուր տօնին, ոչ հրամայէր օրէնքն; բայց զերկոս աւուրս տօնին պատաջինս ճշդեալ անյայտ, եւ ի ծածուկ; եւ երբեւ տօնն ընդմիջեցաւ, ի չորրորդում աւուր յայտնեաց զանձն ևւր, եւ հաւատրնակ եղ ի տաճարն ուսուցանել. Եղկ. Օրէն.ժգ

Ի տեղւոջէ ասեմ՛ ուսուցանեն ՀՁճաբանք, Թէ ի դիպուածս տնանս արժան է մեզ մտածական կեանաւրութիւն, որ է, մինչ դմտածմունս մեր ըստ մասին յայտնեմք, և ըստ մասին ծածկեմք; ուստի՛ ի միտս ըսղայ ծնանին կարծիք հակառակ մտաց մերոց, ոչ ի կեղծութիւն մերմէ; բայց յանզգոյշ դաստղութիւն նց. Եւ յորժամ ղբան ինչ առնեմք, որ լսողաց երեւի սուտ, ըստ որում հնչէ առ ականջս նց; բայց ճշմարիտ է ըստ որում նմանաւրէ զնա ի միտս մեր. Օր օրինակ, քո՛ մտածումն այս էր, Եւս ոչ երթամ ի տօնն յայն ընդ ձեզ, և յայտնի; բայց երթամ մեկուսի՛, և ի ծածուկ: այն մտածման կէս յայտնէ Տ՚ս; և կէսն ծածկէ. ուստի ի միտս եղբարց նց ծնանին կարծիք սուտ, Թէ քո՛ ի տօնն բնաւ ոչ երթայ. Օրինակիս մտածական կիսաւրութիւն է դաստնել ղբաղումս ի բանս քո՛, և ի բանս Աբող.

Իմ վարդապետութեն, չէ նմ.

Օարմացեալ փարիսեցիքն ի վր վարդապետութեն քո, ասէին ցմիմեանս ; զի արդ գիտէ սա զդիւրս, զորս ոչ ուսեալ է երբեք ? Օայն նակ ասելով ան միտք փարիսեցիքն, բազուզ վկայէին վս աշճութեն Քրիստոսի = քանզի որ գիտէ զդիւրս, զորս ուսեալ չիցէ երբեք, և լուեալ յայլմէ, նա նակ աշճ է ; զի մի և նթ աշճ ամենագիտ է, թէպէտ ուսեալ չիցէ և ոչ ինչ.

Օանապատնա ուրեմն զերկու կերպիւ գիտութեն ; միոն է ներհեղական ; միւսն է ստացական, կամ ուսումնական. Գիտութեն ուսումնական այն է զոր ի դպրատունս ստանալք ընթեռնլով զդիւրս, կամ աշակերտելով վարդապետաց, և կարդացողաց. Ներհեղական գիտութեն այն է զոր առանց ընթեռնլոյ զդիւրս, և թարց ուրուք ուսուցչի, ներհեղեալ ունինք յաշչ ի միտս մեր = այնպիսի էր ապառնեաց գիտութեն զոր ունէին համարկքն : այնպիսի էր

Գաղատ. գլ ա. գիտութեն Պօղոսի որ ասէ, ոչ ես ի մարդոյ առի, և ոչ ուսայ յուրմէք. Համարկութեն քի ունէր սմ նոցա գիտութեն, ոչ ուսումնական, բայց ներհեղական : քանզի ի ձեռն անձնաւորական միաւորութե ներհեղաւ ի միտս Յի ամենագիտութեն ; ուստի ասէ

Գողոս. գլ բ. Պօղոս թէ, ի քս սմ գանձք իմաստութե, և գիտութե ծածկեալ կան.

Պատասխանի եաս Յս, և ասէ ցփարիսեցիան, նմ վարդապետութեն, չէ նմ. Եթէ քո չէ, ասէ ոքն Օգոստինոս, զի արդ քո է ? Լիամ եթէ քո է, զի

արդ

ասդ քո չէ? Պատասխանեմ թէ, բառն այն, չէ, ոչ է բացասական; այլ կամ ասել թէ, իմ վարդապետութեն չէ իմ միայն, բայց է և այնպիսի որ առաքեաց զիս, հօր երկնաւորն, որում հակառակ էք դուք, յորժամ ինձ էք հակառակ. Ըստ նմին օրէնսդրին ասէ քո՝ յայլ ուրեք, ոչ դուք նցէք որ խօսիցիք, այս ինքն, ոչ դուք միայն, այլ և հոգին հօր ձերոյ. Եւ դէմ ոչ ես չարախօս ինչ եղէց զձէնջ, այս ինքն, ոչ ես միայն, այլ և Հօսէս: և դէմ, որ հաւատայ յիս, ոչ հաւատայ յիս, այսինքն, ոչ հաւատայ յիս միայն, այլ և հաւատայ յայն որ առաքեաց զիս. Եւ այլ.

Կայ քեզ և այլ մեկնութեն ած Օգոստինոսի. իմ վարդապետութեն իմ է ըստ որում ես աշճ եմ; չէ իմ ըստ որում մարդ եմ. իմ է զի ոչ ուսայ զնա ի մարդկանէ; չէ իմ, զի առի զնա ի հօրէ իմմէ. իմ է, զի ուսուցանեմ ես զնա ձեզ; չէ իմ, զի ինձէն ոչ ունիմ զնա, ըստ որում մարդ եմ; բայց վարդապետութեն է հօր, որոյ հրամանաւ ես խօսիմ.

Յասացելոց ցուցանի յայտնապէս թէ ես ի քնութենէ երկու, աշճային, և մարդկային. որ ասէ, իմ վարդապետութեն; առ բերի առ աշճային քնութեն: որ ասէ, չէ իմ, նշանակէ զքնութեն մարդկային. ըստ նմին օրինակի յայլ ուրեք ասէ, զամ զոր ուսոն հայր, իմ է ըստ քնութենէ իմում աշճայնոյ, բայց ըստ քնութենէ մարդկայնոյ, իմ չէ.

ՀԱՄԱՐ. ԽԵ.

ՔՈ ՅՈՐԺԱՄ ԳԱՅՑԵ, ՈՉ ՈՔ ԳԻՏԵ ՈՒՍՄՆ Է.

Օայն ասեն հրէայք ետուն պատասխան ցոյց յաղագ դու ՏՅՈ ոչ ընդունիմք զքոն. քո, ասեն, յորժամ գայցէ, ոչ ոք գիտէ ուսմն՝ է, և ոչք ինչ ծնօղք նը, և ազգակիցք նը: ոայ ասէ Եսայի մարգարէ, Օաղդատոհմն նը ո պատմեցի: նակ մեք զաղդատոհմն Տէր բարւոք գիտեմք, և ուսման ետուն մեզ առնել; և ծնօղս նը ճանաչեմք; զի է նա հիւսնան որդի; և մայր նը կոչի Մարիամ, և եղբարք նը, և քոյր նը առ մեզ են: ապա նա ոչ է քոյն. զի-ուեին արդեօք հրէայք, զի յաղագ Յաւուրն ծնանելոց էր քո; ուսման ասեն, հաւ. խբ. Յոչ գիրք ասեն եթէ ի զաւակէ Դաւթի, և ի Բեթղէհեմ գեղջէ գալոց է քոյն? Բայց կարծէին թէ ծնանելոց էր ի անյայտ, և յանծանօթ ծնողաց, ծուռ խնամալով զբանն Եսայեայ մարգարէին, զազգատոհմն նը ո պատմելոց է? Օոր ասէ, ոչ վն ժամանակեայ ծննդեան քո, մարմնով; բայց վն յաւիտենական ծննդեան նը ի հօրէ ՀՂՅ.

ղե. ծդ. ը.

ՀԱՄԱՐ. ԼԲ.

ԱՂՈՒԱՔԵՑԻՆ ՍՊԱՍԱՒՈՐՈՑ ՁԻՆ ԿԱԼՑԻՆ ՁՆԱ.

Երբեմն տեսին փարիսեցիքն զի բազումք ի ժողովրդենէն հաւատան ի Տն, առաքեցին զսպասաւորս, զի ուսնոցին զնա, և սպանցեն. բայց սպասաւորք առնեալ ի վր հոգեզմայլ վարդապետութե-

որ

որ բղխէր ի շրթանց Յիւ, անդրէն դարձեան առ միա-
բնեցեանն ասելով, ոչ երբեք այսպէս խօսեցաւ մարդ,
ոյք այդն այն. Լսէին զօր հանապատ միաբնեցեիքն
զմեղուցածորան բանս Յիւ, և ի խաւարէն սրտի չա-
րախօսէին ընդմանէ; ահաւասիկ դառնիկք, և սպա-
սաւորք միամիտք լինեն զնա մի անդամ, և յափշտա-
կել ի սէրն նր, փառաւորեն զնա. Ընչմարտութե
մատեանդ հնազանդեն ոչք հեղ են, և խոնարհ սրտիւ;
իսկ հպարտք և ամբարտաւանք ոչ հանդուրժեն
պայծառութե նր, և իւրանան ի լուսոյ.

ՀԱՄԱՐ. ԼԴ.

Չէս էր հոգի, քանզի Տէր չէս էր
փառաւորեալ.

Ձուտ է այս թարգմանութե որ ասէ, Թէ մինչ
չէր էր Տէր փառաւորեալ հաւատացմամբ նորով յեր-
կինս, չէր էր հոգի նր, որ է առաջ քան զյարու-
թեան. Յորելեան պարտ էր թարգմանել, չէր էր
առնեալ հոգի: քանզի Թէպէտ առաջ քան զդա-
լուսեան քրի յաշխարհ, տայր աշխ արդարոց հոգին
նր, որով ի հոգիս նց սփռէր զարդարացուցիչ շնոր-
հս; սակայն ոչ տայր աշխ հոգին այն առաւարութե,
և լրութե որով եւս զնա ընկալ հաւատացելոյն քրի
յերկինս.

ՊՀՈՒԽ. Ը.

ՀԱՄԱՐ Ը.

Իսկ Ցե խոնարհ նայելով գրէը մատամբն յերկրի.

ՓԱՐԻսեցիք այնքան անգամ յաղթահարեալք բանիւք էին, ոչ դադարին, բայց յաւէտ յանդգնին դնել նմա զիւր որոգայթ, և պատեր հարցանելով խորհուրդք խնդրին զսեղի զչարախօսելոյն յօդելոյ զնմանէ. ձնծեն առ նա զկին մի ընդառնալ ի պոռնկութենէ, և ասեն: Վարդապետ, յօրինաց հրամայեաց մեզ Մովսէս, զայնպիսիսն քարկոծ առնել, արդ դու զինչ ասես մեզ դը? ձնչպէս հաստատին կեղծաւորք, թէ ոչ կարէր Ցե խոյս տալ յորոգայթէ անտի: քանզի եթէ ասէր, զի քարկոծ լիցի պոռնկին; չարախօսէին զնմանէ, թէ անողորմ է և խստասիրտ: իսկ եթէ խնդրէր զերծանել զպոռնկին, դէզ չարախօսէին զնմանէ թէ օրինացն, և Մովսէսի հակառակ է. Բայց բարւոք ասէ Իսայաս, թէ ոչ է մարդոյ խնամատուութիւն, և ոչ խորհուրդ առ ձեզ, որ կորուսանէք զնմանատուութիւն նմ. ամանոց, և զնորհուրդս խորհրդադիւանաց արհամարհէք.

Պատասխանի ոչ ետ նմ Ցե, այլ խոնարհ նայէ լուռ, գրէը մատամբն յերկրի. Օրինչ գրէը? Դրէր, ասէ

ասէ սբն Յեր՛ոնիմոս, զծանրագոյն անիծաւութիս, և զծածկագոյն անառակութիս փարիսեցւոց; ուստի ասէ ցնա, հնամեղ ի հինջ նախ ընկեցէ գբար ի վը դը: եբր թէ ասէը, հմբաստանողաց պարտ է անարատ լինել և սբ ի մեղաց, վ՛ որոց ամբաստանեն գայլս; նսկ դուք, ով փարիսեցիք կեղծաւորք, պարտական էք զաղրագոյն մեղաց, և լի սո՛ւ անօրէնութիք քան զնա; ուրեմն զի արդ յանդգնիք խնդրել զնա ի սահ? Օամօթի հարան փարիսեցիքն, և յայտնել անիրաւութեց իւրեանց, և սկերեսք, զբ խակորք, պատկառեալ գիմօք սկսան խոյս տալ, և գլանել մի ըստ միոջէ.

Պոռնկութի մեղք է ծանրագոյն յոյժ, քան զլրկ չնութի: քանզի լրկ չնութե մեղք է ընդ դեմ ողջախոհութե; նսկ պոռնկութի իրաւութե և հակառակ. լրկ չնութի է ազատն ընդ ազատին, որք կապեալ չեն, ոչ այր, ի կին; և ոչ կին, յայր: նսկ պոռնկութի է ազատն ընդ կապելոյն, կամ և կապելոյ ընդ կապելոյն, որք ի մարմինս իւրեանց իշխանութի ոչ ունին. Ոևսան ասէ Պօղոս, կին մարմնոյ իւրում ոչ իշխէ, այլ այրն; նոյնպա՛ և այր իւրում մարմնոյն ոչ իշխէ, այլ կին. Զո՛ այնորիկ եդեալ եղև միշտ խստագոյն պատիժ պոռնկաց, քան շնացողաց.

Զո՛ղ, ծանր է պարտականութի պոռնկին, քան պարտականութի շնացողին. Շնացողին բաւական է զղջացեալ սրտիւ խոստովանիլ զշնութի իւր, և առաջադրել այլ ևս ոչ շնալ: նսկ պոռնկեալ կնոջն բաւական չէ խոստովանիլ զպոռնկութի իւր; առաւել, եթէ ի պոռնկութէ ծնեալ կոյ նմա զաւակ, պարտական է զրկանս հատուցանել հարազատ որդւոց, եթէ ի

ժառանգութիւնէ հասոյց զմարդ ինչ որդւոյն պոռնկութիւնէ ; քանզի միայն հարկաւոր որդի արժանանայ հաս ժառանգ է հայրական, և մայրական ընչից ; նակ որդի պոռնկութիւնէ, ոչ է ժառանգ, բայց դող է, և յաւիշտակող .

ՀԱՄԱՐ. Ի-Բ.

Ես եմ լոյս աշխարհի .

Հերձուածողք ոմանք, առ ի չիմանալոյ զբանս քո զայսոսիկ, ասացին ի վաղուց հետէ, թէ քո էր այն եղական լոյսն զոր արար աշխարհս ամենայն արարչութիւնէ ; որ բնական շարժմամբ երթայ, յարեւելից պատեալ ընդ արեւմուտս, և անդրէն դառնալ յարեւելս, զտիւն չափէր, և զգիշերն մինչև ցօրն չորսորդ : նակ ի չորրորդում առուրն ժողովեաց աշխ զլոյսն, և ամփոփեաց ինա ի գերագոյն գունտն որ կոչեցաւ արեգակն . Այլ առաւել քան զայդ անդն ի բաց հերքեն առնեքեան երբեւ զպատուական շաղափաղփութիւն . ոչ է քո արեգակն, բայց նոյնաւ արեգակն եղեւ ; որով եղեւ ամ ինչ, որ ինչ եղեն .

Այսկայն կոչէ քո լոյսն աշխարհի, և արեգակն արդարութիւնէ ; քանզի նա ընտրհօք զայն ներգործէ ի սիրտս մեղաւորաց, զոր արտաքսասցէ արեգակն առնէ յինս բնութիւնէ . արեգակն չերմութիւնէ նորով զպատղեալսն եղկայուցանէ ; նոյնպէս չնորհքն քո կանչ զայուցանէ զնաստասիրսս, և յաչաց նոց ինձուցանէ զհոսանս արտասուաց ապաշխարութիւնէ . արեգակն ցօրէ դամպս, և հալածէ զնաւարսն դիշերի ; չնորհքն քո և մտաց մերոց ընկէ զնաւարսն ապիտութիւնէ,

և

և մեղաց. լոյս արեգական տայ մեզ պարզապէս տեսանել, և մեհնել զառաջնիկայ առաքեալսն, և անդթութեամբ ոտիւք երթալ ճանապարհս մեր; չնորհքն քրիստոսաւոր առնէ զմիտս մեր, և տայ մեզ խնամալ գիտել երկնայինս, և առաջնորդէ մեզ ի շաւիղս փրկութեան.

Հաւատքեալքն, և սպասաւորք բանին կոչին և աշխարհի լոյս; քանզի լուսով վարդապետութեան բանից, և սքանչելեաց վարուց ցուսաւորչին, մկրտին, սբնին զամենեսեան: բայց բազում հնարք տարբերին ի քէ; զի քո է յաւիտենական լոյս ըստ էութեան; իսկ նոքա լոյս են ժամանակեայ ըստ հաղորդութեան. Նման է ուրեմն քո արեգական, որ ինքն ինքովքն լուսաւոր է, և զլոյսն իւր հաղորդէ աստեղաց, և լուսնին; իսկ հաւատքեալքն մկրտիչք նման են լուսնին և աստեղաց, որք զլոյսն իւրեանց առեալ ունին յարեգականէն արդարութեան Յիսուսէ քէ.

ՀԱՄԱՐ. Ի.Զ.

Զի հաւատ ոչառնի՛ եկն, և յո՛ երթայր.

Տէ՛ր, ով միտիսեցիք, ոչ ընդունիք զվկայութիւն իմ, զոր առնեմ վա՛ր անձին իմոյ, քանզի ասէք թէ վկայողին վա՛ր անձին իւրոյ, սուտ է վկայութիւն նո՛ր: բայց թէպէտ ես վկայեմ վա՛ր անձին իմոյ, վկայութիւն իմ է ճշմարիտ. Ընդէ՞ր է ճշմարիտ? վա՛ր այնորիկ զի գիտեմ ուստե՛ր եկն, և յո՛ երթայր: այսինքն, եկն յաշխ, ոչ միայն երբեք հրեշտակ նո՛ր առաքեալ ի նահանջ, ոչ եկին նաև սա՛ մարդարէքն; բայց եկն ի

նմանե, ոչ ձեզ յաշխ ; լոյս ի լուսոյ ; ձեզ ճշմարիտ յաշխ ճշմարտե : և դէմ երթայր առ նա յիսկիսնա, նասիլ ընդ ալմէ նէ , ոչ միայն երբեմն մարդ ընտրեալներ ձեզ ; այլ և երբեմն ոգիք դևոյականք , և ետուր ինեանակից հօր . ուրեմն ինչպէս վիայեմ վր իմ, վիայութիւն իմ է ճշմարիտ .

Դ—ուք ըստ մարմնոյ դատիք : այսինքն , դուք դատիք զիս , ըստ մարմնոյ իմոյ ; և քանզի առեալ նէք զիս արտաքսանաւք , զի ձեզ նման մարդ եմ ահաւ , աղքատ , խոնարհ ; այնպէս հասանիք թէ ոչ եմ ինչ առեալ քան զայլ մարդիկ առ հասարակ , ուստի՛ ոչ ընդունիք զվկայութիւն զոր առնեմ վր իմ : բայց եթէ կամիք դատել , ոչ ըստ երևելեաց , բայց յաւէտ ըստ աներևութից , գիտէիք արդեօք զի ճշմարիտ է զոր վկայեմ վր անձին իմոյ .

ՀԱՄԱՐ. ՅԵ.

Ես ոչ դատեմ ես ոչ զոք .

Ես ոչ դատեմ անպդուշաբար , և ըստ մարմնոյ , ոչ դատիմք զոք : զի ոչ եթէ ոչ առեամբեղէ մարդ, առեանեմ ես ; զի մարդ հայի յերեսս , և ես հայիմ ի սիրտս . Ես չդատեմ զոք , այսինքն , ոչնիմ արդեօք զընդարձակ եշխանութիւն դատաստան առնել ի վր ամենեցուն ; բայց ոչ կամիմ զայն եշխանութիւն հատարձակաւք ածել ի գործ մինչև ցկոմ միւսանգամ գալուստն : նոկ այժմ , ցորքան ժամանակ շրջիմ ի վր երկրի , ոչ դատեմ զոք , բայց առաւել յայլոց դատիմ , և խնդրեմ զմոլորեալսն դարձուցանել ի ճանապարհն փրկութեան .

Ես երթամ, և խնդրեցէք զիս, և ի մեղս
ձեր մեռանիցիք.

ձհաւասիկ ես մեռանիմ, և զինն ահռելեան իմոյ, յորոց եալ ի մեռելոց երթամ առ հայր իմ յերկինս ուստի՛ եկի: յայնժամ խնդրեսցէք զիս, և կամեսջիք գնել զիս; բայց ոչ կարասցէք, վասն մեղաց ձերոց յորս եւս մեռանիցիք. զի ասեն ցիս արդեօք, և զի՞ տեսիք, եթէ ուր ես երթամ, դուք կարէիք գալ; բայց ոչ կարէք, զի ես երթամ յերկինս, ուր թոյլ ոչ տայ ձեզ մտանել անհաւատութեն, և խաւսիցիս ձեր.

Ուրեմն ոմանք ոչ խնդրեն զքո, և գտանեն. և ոմանք խնդրեն, և ոչ գտանեն. զքո ոչ խնդրէք գայլ յաիշատակօղ յազգէ բէնեամինի Յահաղած Եղբոր, յորժամ լցեալ սպառնալեօք, և սպանմամբն աշակերտաց Տեն աճապարեալ գնդէր ի գաւառսն կոս; սակայն գտանէ զքո և ճանապարհին, և յափշտակեալ, յաղթեալ և չնորհաց նը ասէ ցնա, Տեր, զիս զինչ կամիս առնել? վասն այսպիսեաց ասէ Ես- ըն. կե.
այն մարգարէ, գտայ յայնցանէ որք զիս ոչ խնդրէին; յայտնի եղէ այնոցիկ որք զինեն ոչ հարցանէին.

Ոմանք խնդրեն զքո, և ոչ գտանեն, զի ոչ խնդրեն զնա միամտութեբ, և ուղղութեբ սրտի; այլ նենգութեբ, և կեղծաւորութեբ, որպիսիք էին դպիրք և փարիսեցիք, և սոցին նմանք առ հերձուածօղք: վասն այսպիսեաց ասէ տբ Գիտաս Թէ, յամ ժամ ուսա- Տիմոթ.
նին, և խնդրեն, և երբեք ի գիտութեն ճշմարտու- Գ. ՂԸ. ՃԵ.
Թէ ոչ հասանին. Ըստ արժանեաց նոյ լինի ընդ նմա,

Թէ

Թէ կամին դառնալ, և ոչ կարեն; զի յորժամ դառնալ կարէին, ոչ կամեցան խնդրել.

ՀԱՄԱՐ. ԽԵ.

ԱՍԱՆ ցնա, դու ով ես? ԱՍԱ ցնա Տ՚ն, նախ զի ես խօսիմ ընդ նմա.

Լաւ էր Թարգմանել, ԱՍԱ ցնա Տ՚ն, սկիզբն, որ խօսիմ ընդ նմա. քո՚ն, զինչն կոչելով սկիզբն, բարձրաբար յայտնէ զաստուածութիւն նորա, որով սկիզբն է ամենեցուն, ինքնին անսկիզբն = նախ ըստ մարդկութեան նորում, ոչ է սկիզբն, այլ ինքնին է սկիզբնաւորեալ հոգւով և մարմնով. Իդիոս հայոց դառնի երբեմն դրեալ յաղագս որդւոյն աստ՚ն, Թէ սկիզբնաւորեալ է ի հօրէ; և Թէպէտ կերպին այն խօսելոյ ծուռ ինչ է, և անուղիղ; սակայն պարտ չէ դիմայս բամբասել, երբ Թէ ասիցեն, Թէ ՈՐդի աստ՚ն սկիզբն ունի; Թէ ստեղծո՚ած է, և ոչ ստեղծիչ; արարած, և ոչ արարիչ: բայց սկիզբնաւորեալ առելով, կամին ասել, ի հօրէ ծնեալ. աստ՚ն անուղղութեի խօսելոյ անառուստ ծնանին, զի ոչ ունի հայ լեզու գյաւուկ ինչ բառն առ ի ասել, որ Լատինաբերքն ասի, Principium. բարձրաբար ասեմք Թէ ՈՐդի աստ՚ն ունի զPrincipium; Թէպէտ ոչ կարեմք ասել Թէ ունի Initium, որ է սկիզբն: իսկ հայք Principium, և, Initium նոյն բառս ասեն սկիզբն.

Լայ քեզ և զայլ մեկնութի: Դարձ հարցանէք, ով հրեայք Թէ ով իցեմ ես? Ես այն եմ զոր նախ, ի սկիզբանէ ձեզ ասացի այնքան անգամ; այս ինքն,

ես

ես եմ մեսիա; քան; ոդդե աշ, որ յերկնից եկի
ի փրկուքե աշխարհի.

ՀԱՄԱՐ. ԽԵ.

*Յորժամ բարձրացուցանիցէք զորդի մարդոյ,
յայնժամ գիտասջիք եթէ ես եմ.*

Բարձրացուցին հրէայք զորդի մարդոյ, յորժամ
գքս հանին ի խաչափայտն: յայնժամ ուսանելով զա-
յնքան նշանսն որք հանդիպեցան յորժամ մեռաւ քս
յորժամ յարեաւ, յորժամ համբարձաւ յերկինս, բա-
ղումք ի նմէ գիտացին և խոստովանեցան, եթէ նա Համր.
է քան; բայց ոչ ոք ի նոցանէ համարձակեցաւ ասել Մատթէ-
ոս, և ասէին, արդարև աշ ոդդի էր սա. Ցետոյ ԵՆ. Ծղ.
եբրև լուան հրէայքն զպիետոս, զի քարոզէր զհա-
չեալ քան; բազումք յօժարուքե ընկալան զբանն,
և մկրտեցան; և յաւելան յաւուր միում հոգիք եբրև
երիք հազար: կրկնեաց պիետրոս զբարոզուքե, և եղև
թիւն մարդկան որք հաւատացին, եբրև հայրապետ
հնդից. աշխոքնկ էին առաքաւորք սրտոյց խաչին
լոե.

ՀԱՄԱՐ. ԼՂ.

*Ոչ ումեք ծառայեցաք: զի արդ ասես
եթէ ազատք լինիցիք?*

Ծառայեցին հրէայք նախ Եգիպտացւոց. յետոյ
Ծառայեցին բաբելացւոց, և այլազգեացն բազում
անգամ: նա և յաւուրս հոկ քն ծառայէին հռո-

մա-

մայելսոց. ուրեմն սուտ ասեն, յորժամ ասեն թէ, ոչ ունիք ծառայեցաք. քայց առաւել ևս ողալին, և ի միտս ոչ առնուն զբանն քրիստոսի, որ ոչ խօսէր վասն մարմնաւոր ծառայութեանէ, այլ վասն ծառայութեան մեղաց: ուստի ասէ, որ առնէ զմեղս, ծառայ է մեղաց; և նոքաձեալ էք դուք, ով հրեայք, ընդ լծով այն ծառայութեան: քայց եթէ հաւատայք ի բանս իմ, ծանիջիք զշնորհսն զշնորհսն ազատեսցէ զձեզ ի դերութենէ անտի ձերմէ.

ՀԱՄԱՐ. խդ.

Նա մարդասպան էր ի սկզբանէ.

Հրամայէ Յաւետարանչ ի սկզբանէ զմարդասպանութենէն երկուս: զինքն հոգևոր, յորժամ հրապուրեաց զԱդամ, և զԵւայ զանոյ առնել զհրամանսն աշխ, և եղան զհոգիս նոցա; նա և եղև մարմնաւոր մահուն հաւատացուցիչ, և սպատիճ մեղաց նոցա; ուստի՛ ասէ պօղոս թէ, ի միոջէ մարդոյ մեղք յաշխարհ մտին, և ի մեղաց անտի՛ մահ ամենայն եղև մարմնաւոր մարդասպանութենէ, յորժամ դրդեաց Յաւետարանչ զիմայինն հատել զհատել զեղբայր նոր. քանզի դուք, ով հրեայք, առնէք զգործս Յաւետարանչին հօր ձերոյ; քան զի ոչ եղև նա մարդասպան ի սկզբանէ, նոյնպէս և դուք խնդրէք սպանանել զիս.

Հռոմ. ե. ժբ.

Սուտ է, և հայր նր. Յաւետարանչն, ոչ և այլ ամ արարած հայրն, և արարիչն է ամ ձեզ մեր; զի արդ ուրեմն սուտ ասի Յաւետարանչին հայրն? Պատասխան. Քառն այն, նր, ոչ առաքելոն առ Յաւետարանչ, քայց առաքելոն առ սատանայ զոր խօսի Յաւետարանչ.

Նր

նոյնպէս բառն այն, հայր, ոչ առբերի առ ձէ, բայց առ Յաստանայ; և քէն բանիցն զօրութեի այս է, թէ Յաստանայ ոչ միայն խօսէ զսուտ, բայց և հայր է սուտին. Օսուտ խօսեցաւ նախ առ Ադամ և Եւայ, յորժամ ասաց ցնոսա, թէ մահու ոչ մեռա նիցին, եթէ ի պտղոյ ծառոյն ուտիցեն, բայց յա էտ լինիցին երբեք զձէն: և ի նախ սուտէն անտի Յաստանայի ծնան այլ ամ սուտիքն, զրախօսութիքն, նենգութիքն, բամբասանք; զաւակ անիծելն, և հօրէ անիծելոյ.

ՀԱՄԱՐ. ԽԱ.

Աբրահամ հայր Ձեր ցանկացաւ տեսանել զօր իմ; ետես, և ուրախ եղև.

Այսոքիկ էին մեծամեծ պարծանք հրէից, թէ զաւակ էին Աբրահամու զոր նախամեծարէին Աս, քան զինքեանն քոյն. Իսկ քո ցուցանէ նոցա, թէ ենքեանն մեծ է քան զԱբրահամ; քանզի մեծաւանչ փափագանօք ցանկացաւ Աբրահամ տեսանել զօրն քէ; և ուրախացաւ զի ետես զնա. Յուղեն Աձ աբանք զհնդերս երկուս: Աղաչեն, զինչ ունէ Օրն քէ? Երկիր զի արդ ետես Աբրահամ զօրն զայն?

Աղ առաջինն պատասխանեմ, թէ Օրն քէ է օր դալստեան Նր յաշխարհ. Աղաւօտ աւուրն այնորիկ եղև ժամանակ մարդացման բանին Այ. Աւուրն երկարութի եղև ժամանակ երեսուն երից ամաց զորս ելեաց ՄՐ Յն ի վր երկրի. Իսկ երեկոյ աւուրն այնորիկ եղև ժամանակ մահուընան Յի. Այն էր օրն փափուկ զոր տեսանել ցանկայր ի վա-

ղուց հետէ, ոչ միայն Աբրահամ, բայց և այլ ամ-
նահաւատքն և մարգարէքն, մանաւանդ այնոքիկ
առ որս եղեալ էր խոստումն յԱՅ, թէ յաղգէ նո՛ր
ծնանիլ Քրիստոս. ուստի յայլում ուրեք ասէր Տ՚ն, թէ
բազումք մարգարէք, և թագաւորք կամեցան տես-
նել զոր դուքդ տեսանէք, և ոչ տեսին; և լսել
ղուկ. զոր լսէքդ, և ոչ լո՛ան = ոչ տեսին մարմնով աչօք;
Ժ. ին. բայց տեսին աչօք մտաց, և հաւատոց զոր ունէին
ի գալոց Քրիստոս.

Աբ երկիր. Աբրահամ զօրն Քի եառնէս, ոչ միայն
աչօք մտաց, և հաւատոյ, այլ տեսին զնա այլք ևս
նահատակեալքն, և մարգարէքն; բայց զօրն Քի եառնէս
այն իսկ կերպիւ, որով կերպիւ ցանկանայր տեսանել
զնա. Իսկ Աբրահամ ցանկանայր զօրն Քի տեսանել,
ոչ հաւատով միայն, (քանզի այնպէս իսկ տեսանէր
զնա) այլ ցանկանայր զօրն այն տեսանել ըստ նիւթն,
և յինքեան; և այնպէս եառնէս զնա: ոչ եառնէս ար-
դեօք միանգ դեռ կենդանի էր; բայց եառնէս զկնի վաղ-
ճանելոյն նորոյ: քանզի նորին լցան աւուրք ի
ստորս էր ՊՂՏՈՅՆ ԱՅ-ի կնոջէ ծնանիլ մարմնով,
զոյն եառնէս Աբրահամ, և լուսով Աճմային յայտ-
նուԹԷ ծանեաւ Թէ, ահա ապրդէն իսկ եկեալ է որ
գալոցն էր. ՊՂՏԻՆ ասել Թէ ցանկացաւ Աբրա-
համ տեսանել զօրն Քի, և եառնէս; է ասել Թէ ցան-
կացաւ ի նկեսցէ օրն մարդացման բանին; ենէ
այն օրն, և յայտնեցաւ Աբրահամու, և ի նմա
ենէ ուրախ եղև.

ՀԱՄԱՐ. Ծ Ը.

ԱՂՈԱՉ ՔԱՆ ՂԼԻՆԵԼ ԱԲԲԱՀԱՄՈՒ, ԵՒ ԵՄ.

Իբրև ասաց Տ՚ն Թէ, տեսեալ է Աբբահամ զօր իմ, զայթադղեցան հրէայք, քանզի զայն նմացան յաղագս աեսուԹե՚ որ լինին մարմնոյ աչօք; ուստի՛ ասէն ցՅ՚ն; ԵԹէ տեսեալ է Աբբահամ զօրն քո, տեսեր ուրեմն և դու զօրն Աբբահամու: նակ զի արդ մարԹ եղե այն, զի քո չիսուն ամ չէ և ես է, նակ ամք են երբէք երկու հազար յոյմէ հետէ Աբբահամ մեռաւ. Աղե՛ ցՅ՚ն; Բարւոք ասացիք: բայց որով հետև մարԹ չէ զի տեսեալ եղե զիս Աբբահամ մարմնոյ աչօք; յորժամ ասեմ Թէ, առաջ քան ղլինել Աբբահամու ես եմ, պարտ է ձեզ զայն նմանալ յաղագս աՀՃուԹե՚ նմոյ, որով եմ, ոչ միայն նախ քան ղլինել Աբբահամու, այլ և նախ քան ղլինել աշխարհիս, զի և յաւիտենից անատն եմ. Իբրև լուա՛ն հրէայքն զՅ՚ն, զի հանդարձակապ զանձն իւր առնէր զԱՀ՚ն, առաւել և դայԹադղեալ առին զվէմս, քարկոծ առնել զնա: բայց Տ՚ն, զի չէս հասանելոյ ժամանակին նորոյ, խոյս ետ, և արարեալ զինքն անհետ, և տաճարէն անտի՛ գնաց.

ԳԼՈՒԽ. Թ.

ՀԱՄԱՌ. Ղ.

Ինչ պարտ է գործել զգործս այնորիկ որ առաքեաց զինս, մինչ օր կայ : գայ գիշեր յորում ոչ ոք կարէ գործել.

ԱՅՍ ասէ քր̄ս, ըստ որում առաքեալ է ի հօրէ ծանուցանել մարդկան, թէ ինքնին է որդի ՀՀ եկեալ վ̄ փրկուԹԵ աշխարհի. Իսկ առաքելոյն պարտ է կատարել զկամս այնորիկ որ առաքեաց զնա. ՈՒրեմն, ասէ ՏՐ̄Ն, և ինձ պարտ է զբանն չելիս առնել, ուսուցանել զոգեաս, և ոչ հանդչել ի գործելոյ զգործս պաշտամանն հոգւոյ, մինչ օր կայ, այս ինքն, մինչդեռ կենդանի եմ. Նման և որչափ առաւել աստղաժամեալ է օրն կենաց հոգւոյ, և մերձ ժամանակ մահուՀան հոգւոյ; այնչափ առաւել պարտ է ինձ պարապիլ ի գործս յայնոսիկ, վ̄ որոց առաքեցայ ի հօրէ յաշխարհ. Եթէ գիշեր մահուՀան հոգւոյ, և մերձ եսկ է; յորժամ այլ ևս ոչ կարացից խրատել զմեղաւորս; բերան առ բերան խօսիլ ընդ նս; զինչան առնել; զմոլորեալսն ածել ի հաւատ; և զայլս գործել զգործս որք յատկացեալ պատկանին առ պաշտաւնէս իմ.

*Եթուք ի դեսեն, և արար կաւ ի թքոյն;
և ծեփեաց զկաւն ի վր աչացն
կուրին.*

Ի վր այս հրաշագործութեանն Տեր քրիստոս եղեւ. Մինն, առ ի բանալ զաչս կուրին ծնեալ, ընդ որ քրիստոս զկնի գնացեալ զաշխարհս բաւորագոյն առ ի կուրացուցանել զաչսն, քան թէ առ ի բանալ կուրացեալսն ? Միւսն, ընդ որ քրիստոս արար զկաւ, ոչ ի ջրոյ, այլ ի թքոյ եւրմէ ?

Առ առաջինն, պատասխանեմ թէ աշխ, ի դոյ ծնել եւրուայ զսքանչելիս մեծամեծս, ի յայտնագոյն նշան ամենակարողութեանն եւրոյ, սովորէ ի գործ ածել զիրս որք յանձնէ եւրեանց տկարագոյնք, և անշարժարագոյնք են, նա և ներհակագոյնք գործոց զրոս կամի առնել նոցօք. Օր օրինակ, առ ի քաղցրացուցանել զդառնութեն աղտաղտուկ ջրոյն, զինչ է անյարմարագոյն քան զաղն որ առաւել առնէ զջուր դառն, ժանտահամ, և անըմպելի ? Սակայն տեսանեմ եղեսէէ մարգարէ զաղն արկանել ի ջուրս եղիշէի, որք դառնաձաշակ էին յոյժ ; և բժշկեցան ջուրքն ի դառնութենէ եւրեանց անտի. զի, ի հարկանել մեւս ի մարգարէից զփայտն առ ակն ոդոնանու, պատառեցին երկաթն անկաւ ի ջուր : Նակ առ յայտահանել զերկաթն ի ջրոյ անտի, զինչ էր անպիտանագոյն քան զկտոր փայտին ընկէցեալ ի ջուր ? Սակայն նբրև ձեղքեաց եղիսէէ զփայտն, և հարկ զնա ի ջուր, նկեր երկաթն ի վր ջրոյ. Նոյնպէս քրիստոս

Դ. Թագ. Բ. նա.

Դ. Թագ. Զ. Ձ.

միով և եթ բանիւ կարէր լուսաւորել զաչս կուրին, առաւել կամեցաւ զայն նշան առնել ծնիելով կաւն ի վր աչաց նր, զի յայտնագոյն լինիցի հրաշագործ ծուԹիւն, և մի ասիցեն փարիսեցիք Թէ բնական ինչ բժշկականուԹիւ եղեալ էր նշանն.

Ոմանք ասեն Թէ քո գիտող ծնիելով ի վր աչաց կուրին, լուսաւորել զնա, կամէր ցուցանել, Թէ ինքնին նախ էր որ ի սկզբանէ արար զմարդ հող յերկրէ; քանզի նոյն արհեստաւորին է, ի նոյն նիւԹոյ վերստին ազմել զգործն իւր, յորմէ առաջագոյն շինեաց զնա.

ՀՂՈ ԵՐԿՐԻ. Պատասխանեն ոմանք Թէ առ ի չգոյէ անդր ջրոյն արար քո զկաւ և Թգոյ նմա. ՀՅԼԼ ասեն ընդ Օգոստինոսի Թէ զայն արար քո ի նշանակուԹիւն մարդացման իւրոյ: քանզի կաւով նշանակին մարդկայինք բնուԹիւն; և նախ Թգով, բնուԹիւն ՀՃայնոյ յերկնից ինքեալ, երբև Թուքն ի բերանոյ; և յերկուց բնուԹեանց անտի միաւորելոյ ի մի Տն. եղև բժշկականուԹիւն մարդոյ, որ կուրացեալ էր ի բնէ, ի ձեռն մեղաց ՀԴամայ. ՀՅԼԼ ասեն Թէ կաւով նշանակին մարմինն զոր ի սկզբանէ արար ՀՃ գիտող յերկրէ; և Թգով նշանակին հոգին, զոր երբև Թուք ի բերանոյ փչեաց ՀՃ յերեսս ՀԴամայ. Տես Մարկ. Է. ԼԲ.

ՀԱՄԱՐ. Է.

ՀԱՍԷ ՅՆԱ, ԵՐԹ, ԼՈՒԱ ՅԱՒԱՂԱՆԻՆ ՍԼՈՂՄԱՅ.

ՍԲՆ ՉԵՐՈՆԻՄՈՍ ԱՍԷ ԹԷ ԷՐ ՍԼՈՂՄ ԱՂԲԻՒՐ ՄԻ,

որ

որ ի Սիոն լեառնէ անձնակեալ խաղայր ընդ ապաւա-
ժուս առնոյս, և զկուռս նոր Ժողովէր ի մի յաւազան
զոր յանուն անդ աղբերն կոչէին աւազան Սեղովամ,
որ Թարգմանի, ձգուածքեալ. Այլն ամ խորհրդաբար
մեկնեն ասբ հարքն, և ասեն Թէ Սեղովամ աղբիւրն
նշանակէր զՏ՚ն Քս՚, որ առաքեալ յերկնից, զկուռս
չնորհաց հոգւոյ արձակէ յաւազանաժուռս սիրտս մեղա-
ւորաց, և ի նոյն պատրաստեաց մեզ զաւազանն
միաւորեալ ի լուացումն հոգւոյ մերոյ,

Հարցանես. Եթէ Թշոմ Տ՚ն բացան աչք կու-
րին, զինչ և սա պիտոյ էր նմա երթալ, և լուանալ
յաւազանն Սեղովամ?

Պատասխ. Զի ի ցուցանել Թէ մարդ կուրացեալ
սկզբնական մեղօք, Թէպէտ արդարանայ և բժշկի
ի Հեռն չնորհացդ Հ՚Ս՚, զոր օրինակ լուսաւորեցաւ
կոյրն ի Հեռն Թշոյն Քի; սակայն պարտ է նմա
երթալ, և լուանալ յաւազանին միաւորեալ, տե որ
առաքէ զմեզ Ստ՚ն, մինչ ասէ, եթէ ոք ոչ ծնանիցի ի
ջրոյ, և ի հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւն
Հ՚Ս՚. Այլ և սա դիւրաբար համեմատեսցես աւազանին
ապաշխարութիւն տե որ երթալ, և լուանալ պարտ
է այնմ, որ զկնի միաւորեալ նորոյ, կուրացեալ եցէ
կրկին անդամ ի Հեռն ներգործականս մեղաց.

ՀԱՄԱՐ. ԼԶ.

ԶՀՈԳՈՒՆ ՄԵՂԱՒՈՐԱՑ ՈՉ ԼՍԵ.

Թ-ուէն բանք այնոքիկ հակառակ գրոց սբոց,
որք ի հաղար տեղիս զարթուցանեն զմեղաւորս կատ-
դալ առ Հ՚Ց; զի նա մարդասէր է, և բաղում ող-
որմ,

որմ; յօժար միշտ, և պատրաստ խոնարհեցուցանել զանձն իւր յաղօթս մեղաւորաց.

Պատասխանեն ոմանք Թէ բանք այսոքիկ, աւետարանչին բանք չեն, այլ կուրծին որ անհմուտ էր և անփորձ ձեռացն. Քանզի ինդ ինդբադրյն մեկնուԹե. Պատրաստ է արդեօք ձեռ յամ ժամ լսել զկանդրուածս մեղաւորաց: սակայն եԹէ ամբարիշտ ոք և հերձուածօղ խնդրեսցէ յաշ զիշխանուԹե զիշատս առնելոյ, որովք հաստատեալ լինի ամբարշտուԹե, և հերձուածողուԹե նորա, ուղղորդէ Թէ այնպիսին մեղաւորաց ձեռ ոչ լսէ, այլ և ոչ կարէ լսել: ապա Թէ ոչ, ինքնին ձեռ լինէր մեղաց ստեղ. Ուրեմն մինչ առնէ քրս զիշատս մեծամեծս, և վկայուԹե Թէ ինքնին է որդի աշ; ոչ երբեք տայր նմա ձեռ զիշխանուԹե այն նշանս առնելոյ, ԵԹէ ոչ էր ճշմարտապէս որդի աշ.

ՀԱՒԱՐԱՐ. ԼԹ.

Եւ դատաստան եկին յաշխարհս յայս, զի որք ոչ տեսանեն, տեսցեն; և որք տեսա՛ նեն, կուրասցին.

Բառնալ զայս կուրծին և ծնեալ մեծամեծ սքանչելի էր, և ոչ՝ ասէ կոյրն ինքնին, և յաւիտենից չէր եղեալ այնպիսին նշան. Ձառաւել զայն նշան ասաւ քրս, ոչ և ծածուկ, այլ յայտնապէս, և յառն ինքեանց խոկ ժարխսեցուց: սակայն նք առ նախանձու խաստանան ընդ դէմ ճշմարտուԹե, և ոչ կամին տեսանել զնշան որ պայծառագոյն էր քան զճառագայԹս արեգական, զի ու բռնադատեսցեն խոստովանել, Թէ արարիչն այն

այսպիսեր նշանեն Տ՚ք՚, աՀ է, և աշխարհի փո-
փիչ: ուստի եղև, զի հոյլն որ ոչ տեսանէր, եռես,
զի բացան աչք նր; և փարիսեցիք որք զնշանն տե-
սին, կուրացան, զի կուիուղին զաչս նուրբանց, մի
տեսանել զՀչմարտուրեն.

ՌՀԼ. ՈՐՔ ոչ տեսանեն, մարդիկք են խոնարհք,
միամիտք, անմեղք, որք համարեալ են ոչ տեսանել,
սակայն տեսանեն; քանզի այսպիսեաց յայտնե ՏՐ
ՀչմարտուրեՆ: իսկ որք տեսանեն, են հպարտք, ամ-
բարտաւանք, և հեղծաւորք, որք համարեալ են Թէ
տեսանեն; սակայն կոյրք են, զի հակառակ կան Հչ-
մարտուրեՆ. ՈՒՔ յայլ ուրեք ասե ՏՐ Տ՚; զի՞
հանամ զբէն հայր, զի ծածկեցեր զայս յիմաստնոց,
և ի դիտնոց, և յայտնեցեր տղայոց. Եւ զդոյշ լեր
Թէ յորժամ ասե ՔՐ՚, եկն զի որք տեսանեն, կու-
բասցին; բառն այն (ՕՀ) ոչ է պատՀառական,
եբր Թէ ենեալ եցէ ՔՐ՚ յաշխարհ, վ՚ կուրուրեՆ,
և կորստեան մեղաւորաց; բայց կամի ասել Թէ,
Թէպէտ ենեալ եցէ վ՚ փրկուրեՆ ամենեցուն; սա-
կայն բազումք ի գալստենէ, և ի վարդապետուրեՆ,
և ի սքանչելիսցն նր, առնուցուն զպատՀառ կու-
բանալոյ, և վ՚ խստասրտուրեՆ նուրբանց չարուչարք
կորնչեցին.

ՀԱՄԱՐ. ԽԱ.

ԵԹԷ կոյրք էիք, ոչ էր Հնր մեղք.

ԽՏՈՍ ՔՐ՚ յատկապե՚ յաղագս մեղայ անհաւատ-
ուրեՆ, և ՀակառակուրեՆ, որով խստանայ ոք ընդ-
դէմ ՀչմարտուրեՆ ճանաչեցելոյ. ՈՐ կոյր է, և

ղՀշմարտութեի բնաւ ոչ ճանաչէ, մեղք ոչ գոյ նմ, և անհաւատութեի նք ոչ հաւատն նմա ի մեղք ; ոյզ
Յօհան. ասէ Տէր յայլ ուրեք, իմ եթէ չէր եկեալ, և խօ-
ԺԵ. հիւ. սեցեալ ընդ նս, մեղք ինչ ոչ գոյինչ. ձայժ և փա-
րիսեցիք, եթէ կոյրք էին ; եթէ լուեալ չէր նց ղբանս քի ; եթէ չէր տեսեալ նց զնշանս նր, ոչ էր մեղք նց, ոչ հաւատիւր նց ի մեղք թէ հակառակ կան ճշմարտութեի ղոր ոչ ծանեան : բայց տեսին, և լուան, և ծանեան, և առ նախանձու հակառակ կան, այն իսկ է մեղք նց, և նոցին նման աւմ հերձուած ծոլոց ; և վն մեղաց նց չէք պատասխանի.

ՊԼՈՒԽ Ի.

ՀԱՄԱՐ. Ա.

ՈՐ ՈՉ ՄՈՌԱՆԻ ԸՆԴ ԴՈՒՆՆ Ե ՊԱՏԻՒ ՈՉ ԽՈՏԱՑ, ԱՅԼ ԸՆԴ ԱՅԼ ԵԼԱՆԻ, ԴՈՂ Է, ԵՒ ԱՒԱՂԱԿ.

ՅԱՂԱԳԱՆԴԱՒՏԻՆ փարիսեցիքն յանձինս նորա խնդրանց, Թէ ինչքանաք եւ եթ էին քաղ վարդապետաք, եւ հովիւք ժողովրդեան: ուստի զայրացեալ ղչարչին յոյժ, տեսանելով զժողովուրդսն, զին ամբոխեալ դայնո առ Տ՚ն, եբրև ոչխարք, առ հովիւս նորին: եսկ Ք՚ս, առակաւ հովուի, եւ ոչխարաց ցուցանէ Թէ ո եցէ հովիւքաղ, եւ ո եցէ դող եւ աւաղակ.

Դաւեթ ոչխարաց, է ՟ր եկեղեցի. ոչխարք, են որդիք եկեղեցւոյ, հաւատացեալք ամենեքեան. Հովիւքաղ, է Տ՚ն Ք՚ս; եւ վարդապետք, եւ առաքելոցք ժողովրդեան, որք բանիւողջամիտ վարդապետութեամբ արածեն զոչխարսն, որոց հոգն հաւատացաւ նոյ յԱՀ. Դող եւ աւաղակ, են փարիսեցիք, եւ սոցին նմանք սուտ վարդապետք, որք օտար ուսմամբքն, եւ հոգեկորոյս վարդապետութեամբ մոլորեցուցանեն զժողովուրդն. Դուռն, է Տ՚ն Ք՚ս, ոյր ինքնին ասէ, ես եմ դուռն ոչխարաց. Դռնապան, է հայր ամ՚ն, որ

քանայ հովիւ, մինչ տայ նոյ հաւատալ ի քեզ, և յայնժամ զվաստակս նոյ.

Աղաւարկեա. Հովիւ այն է որ ընդ դուռն մտանէ, ասէ Տէր ինքնին; ուրեմն եթէ դուռն է քեզ, հետեւի թէ քեզ եմուտ ընդ նմա, որ անհնարին ինչ երեւի.

Պատասխա. Դուռն ասի երկու կերպիւ; կամ նկատմամբն առ հովիւն որ մտանէ, կամ նկատմամբն առ ոչխարսն որք մտանեն. Նկատմամբն առ հովիւ որ մտանէ, դուռն են նոքա ընդ որոց; և որում վկայեն նոքա ընդ որոց, թէ նա է հովիւ առաքեալ յաշխ, նա ասի ընդ դուռն մտանել. Իսկ վասն քեզ վկայեն ընդ որոց, Օրինքն, և մարգարէքն, թէ նա է վարդապետ, հովիւ, անկակաղուածի ազգաց, առաքեալ յաշխարհս, վասն որոյ եթէ մարդկան; ապա քեզ եմուտ ընդ դուռն. Նկատմամբն առ ոչխարսն դուռն ասի քեզ ինքնին, քանզի ոչխարք, որք են հաւատացեալք, ոչ կարեն մտանել ի գաւթն երկնից, եթէ ոչ հաւատամիս ի քեզ, որ է ընդ դուռն մտանել. Զի կարեմք և սակ թէ քեզ ընդ նա մտանէ, յորժամ հաւատացեալքն, որք անդամք են քո, ընդ քեզ մտանեն.

Աղաւարկեա. Եթէ այն միայն հովիւ ընդ դուռն մտանէ, որում վկայեն նոքա ընդ որոց, ոչ ի վերոյ ասացաւ; հետեւի թէ ոմն և եթ քեզ եմուտ ընդ դուռն; և այլ ամ հովիւք և առաքեալք դողք են, և աւազակք: զի ընդ դուռն դրոյ ոչ մտանեն.

Պատասխա. Աշխ ամ հովիւք, և առաքեալք, նկատմամբն առ քեզ, ոչխարք են, և մտանեն ընդ դուռն, հաւատամիս ի քեզ: Իսկ նկատմամբն առ ոչխարսն, հովիւք են, զի հանեն զնոսա, և արածեն

զնոսա

զնա բանիս, և զանձինս դնեն ի վէր նց.

ՀԱՒ ՄԱՂ. ԸԼ.

ԱՄԵՆԵՔԵԱՆ ՈՐՔ ԱՌԱՔ ՔԱՆ ԶԵՍ ԵԿԵՆ, ԴՈՂՔ ԵՆ, և ԱՒԱԶԱԿՔ.

ՀԱՌԱՐԿԵՍ. ԴՈՂՔ ԵՆ ուրեմն, և ԱՒԱԶԱԿՔ ՆՔ ՄԱՐԴԱՐԷՔՆ, զի ԵԿԵՆ ՆՔ ԱՌԱՔ ՔԱՆ ԶՔՈ.

ՊԱՏԱՍԽ. ՄԱՐԴԱՐԷՔՆ ԵԿԵՆ ԱՌԱՔԵԱԼՔ ՅԱՂՈ; և ՈՒՆԷԻՆ ԶԻՀԱՒԱՍՏ ի ՔՐՈ որ գալոցն էր, ապա՛ մտանէին ընդ դուռն; ապա՛ հովիւք էին, ոչ ԱՒԱԶԱԿՔ. Իսկ այլք ամենեքեան, զորս ՀՀՃ ոչ ԱՌԱՔԷՐ, և Զիհաւաստ ոչ ՈՒՆԷԻՆ ի ՔՐՈ, ԱՒԱԶԱԿՔ ԷԻՆ, զի ոչ մտանէին ընդ դուռն: ԱՅՆպիսիք ԷԻՆ ԼԹ-ԼԴԱՍՈՒՆ, և ՅԱՏ ՆՈՐ, ՅՈՒԴԱՅ ՀՀ-ԱԼՒԼԵԱՑԻ, որք զաւուրս ինչ ԱՌԱՔ ՔԱՆ ԶՔՈ ՅԱՐԵԱՆ ի ՄԵՂ ՀՐԷԱՅ, և զանձինս ԽԸՐԵԱՆՑ ԱՌՆԵԼՈՎ ԶՔՈՆ, ՄՈԼՈՐԵՑՈՒՑԱՆԷԻՆ ՂԵԱՂՈՒՄ.

ՀԱՒ ՄԱՂ. ԽԲ.

ԱՂԱՐԿԱՆԱՆ, որ ոչ է հովիւ, և այլ .....

Իւ ՆՇԱՆԱՑ ԵՐԿՈՒՑ ՀԱՆԱՑԷ ՀՈՎԻՒ ՍՈՒՏ, և ՎԱՐԿԱՆ: ՀՈՌԱՑԻՆ ՆՇԱՆ, է ԵԹԷ ՆՈՐ ՉԷՆ ոչԽԱՐՔ. ԵՐԿԻՒ ՆՇԱՆ է, ԵԹԷ ի գալն գայլոյն Թողու զոչխարսն, և ՓԱԽՉԻ.

ՀՈՌԱՐԿԵՍ. Իւ ՆՇԱՆԱՑ ԵՐԿՈՒՑ ՅԱՅՆՑԱՆԷ ՀԵԱՒԷ ԹԷ ի ՄԵՂ ՍԱՏԱՍԱՒՈՐԱՑ ԲԱՆԻՆ, և ԱՌԱՔԻՆՈՐԴԱՑ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ, ՆԱ և ի ՄԵՂ ՄԱՐԴԱՐԷԻՑ, և ՀՈՌԱ-

ՔԷ

քելոց ոչ եղև երբեք ոք հովիւ ճշմարիտ, բայց վարձկանք ամենեքեան; քանզի նոքա հովիւք են ոչխարացդ, որք իւրեանց չէին, այլ քո; և բազում է նոցա է դալոց, այսինքն, ի հանդիպել փոխանորդեց, և հալածանաց, Թողին զոչխարսն, և փախեան.

Պատասխան. ուղղորդ է թէ ձուաբեալքն, և առաջնորդ ժողովրդեանն արուածն զոչխարսն որք իւրեանց ոչխարք չեն, այլ քո: ուստի ասէ ցՊետրոս, ձուածեա զոչխարս իմ; զնմա ասէ, և ոչ զոչխարսդ. այսակայն նոքա ոչ են վարձկանք, բայց հովիւք ճշմարիտ; քանզի Թէպէտ քո են ոչխարքն զորս արուածեն; սակայն յանձնեցեալք են նոցա ի քէ: և Թէպէտ ընկալչուն ի նմանէ զվարձն վաստակոց իւրեանց, սակայն զվարձն ոչ խնդրեն, բայց յաւէտ զփառս քո, և զփրկուԹիւն ոչխարացդ, մինչ և ի վերջ նոցա դնել զանձինս իւրեանց: ուրեմն են հովիւք քաջ, քանզի հովիւ քաջ, ասէ Տէր, այն է որ զանձն իւր դնէ ի վերջ ոչխարաց. իսկ վարձկան, որ ոչ է հովիւ, զնեբսն խնդրէ, և ոչ քո, կամ զոչխարաց; բանաւաճառս, շահատուս, զօշաքաղ; որ եԹէ տեսանեցէ գորձուԹիւն, և հալածուածս, խոյս առնեալ փախչի; և անփոյԹ զփրկուԹիւն ոչխարացդ, Թողու զնոսա դալոյ ի կեր. ևայց այսպիսեացդ, ասէ Տէր, ի ձեռն Ճղեկնկիլն մարգարէին; որք զանձինս արուածեն, զոչխարացդ կաԹն ուտեն, զաստղ ագանին, զալարսոտսն զենուն; զանկարացեալն ոչ զօրացուցանեն; զհիւանդացեալն ոչ բժշկեն; զչարչարեալն ոչ յանձանձեն; զբեկեալն ոչ պատեն; զմոլորեալն ոչ դարձուցանեն; զկորուսեալն ոչ խնդրեն; ուստի անօգնական ցգորՃ հօտն Տէր, և դազանացդ լինին ի կերակուր.

ՂԼ.

ղՀՂ. ՀՂՕԺԱՆ Է ԵՐԲԵՄՆ ՔԱՋ ՀՈՎՈՒՆ ԹՈՂՈՒԼ ղՀՂԱՏՍՆ, ԵՒ ՓԱԽՉԻԼ, ՅՈՐԺԱՄ Է ՎՐ ԿԱՅ ՀԱԼԱԾՈՒՄՆ, ԿԱՄ ԱՅԼ ԻՆՉ ՓՈՐՁՈՒԹԻՒՆ ՄԵԾ. ԻՍԿ ՂԻՆ ԱՐԴ, ԵՒ ԵՐԲ ԱՅՆ ԱՐԺԱՆ ԼԻՆԻ, ԿԱԼ ՔԵՂ Է ՀԱՐՑ ՍԲՈՑ ՂՍԱՀՄԱՆԱՆ ՂԱՅՍՈՍՆԿ.

ՀՈՎՈՒՆ ՕՐՆ ՉԷ ՓԱԽՉԻԼ, ՅՈՐԺԱՄ ՓՈԽԱՆԱԿ ԻՒՐ ՈՉ ԴԱՅ ԱՅԼ ՈՔ ՀԱՒԼԻՒ ՈՐ ՂՀՂԱՏՍՆ ՊԱՀԵՑԵ. ԿԱՄ ՅՈՐԺԱՄ Է ՓԱԽՍՏԱՆԵԼ ՆՈՐԱ ԼԻՆԵՑԻ ԴԱՅԹԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԵԾ, ԵՒ ԿՈՐԾԱՆՈՒՄՆ ՀԱՒԱՏՈՑ, ԵՒ ՅԱՅՏՆԻ ՎԱՏՆԴ ԹԷ ԳՈՒՑԷ ՈՉՆԱՐՔ ԵՂԵՑԻՆ ԴԱՅԼՈՑ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆ. ԿԻ ԴԻՊՈՒՀԱԾՈ ՅԱՅՏՈՍՆԿ ՊԱՐԱՏ Է ՔԱՋ ՀՈՎՈՒՆ ՂԱՆԱՆ ԻՒՐ ԴՆԵԼ Ի ՎՐ ՈՉՆԱՐԱՑՑ, ԵՒ ՊԱՀԵԼ ՉՆԱ ԱՐԵԱՆ ՉԱՓ. ԲԱՅՑ ԵԹԷ ՀԱԼԱԾՕՂ Է ՄԱՀ ԽՆԴՐԵՑԵ, ՈՉ ՂՀՂԱՏՍՆ, ԱՅԼ ՂԻՆ ԵՒ ԵԹ ՀՈՎԻՒ; ԵԹԷ ՓԱԽՉԻՆ ՆՐ ԼԻՆԵՑԻ ԱՌ ԴՈՅՂ ԻՆՉ ԺԱՄԱՆԱԿ; ԵԹԷ Ի ՓԱԽՍՏԱՆԵ ՆՐ ՈՉ ՀԱՍԱՆԵԼՈՑ Է ՈՉՆԱՐԱՑՑ ՁԱՍ ԻՆՉ, ՅԱՅՆԺԱՄ ՀՈՎՈՒՆ ԱՐԺԱՆ Է ՓԱԽՉԻԼ. ՀՂՅՍՊ ՊԱՐԱՏ Է ԻՆՁ ՆԱԼ ՂԷԱՆԱՑ ՓՐԿՉԻՆ ՈՐ ԱՍԷ, ՅՈՐԺԱՄ ՀԱԼԱԾԵՑԻՆ ՁՆԵԼ Ի ՔԱՂԱՔԻՆ ՅԱՅՍՄԱՆ, ՓԱԽԱՆՁԻՔ ՅԱՅԼ. ԱՐԱՑ Ի ՎԵՐՈՑ, ԱՄԱՐՏ. Ժ. ՆԴ.

ՀՂԱՄԱՂՐ. Ժ–Օ.

ՀՂՅԼ ՆԱ ՈՉՆԱՐՔ ԵՍ ԻՄ ՄԱՐՔ ՈՉ ԵՍ ՅԱՅՍՄ
ԴԱՒԹԷ, ԵՒ ՂԱՅՆ ՆԱ ՊԱՐԱՏ Է ԻՆՁ
ԱԾԵԼ ԱՅՍՐ, ԵՒ ԵՂԻՑԻՆ ՄԻ ՀՕԱՏ,
ԵՒ ՄԻ ՀՈՎԻՒ.

ՄԻ ՀԱՒԱՏԱՑՔ, ՈՎ ՀՐԵԱՅՔ ԴՈՒՔ, ԵԹԷ ՁԱՅՆ ՈՉ ԽԱՏԱ ՈՉ ՈՒՆԿՆԻՄ, ԲԱՅ Ի ՆՒՆՉ; ՈՉ ՊԱԿԱՍԵՑԻՆ ԵՐԲԵՔ ՈՉՆԱՐՔ Ի ԴԱՒԹԷ ԵԿԵՂԵՑՒՈՑ ԻՄՈՑ; ԵՒ ԵԹԷ

խաւսանայք դուք ոչ մտանել, և յիս ոչ հաւատալոյ
և զբան իմ ոչ ընդունել, ահաւասիկ փոխանակ ձեր
մտցեն այսու հետև հեթանոսաց բազմութիւն անթիւ
որք յիս հաւատասցեն. Կատարի յաւուրս մեր բանն
այն ԱՏՈՒ, և ձեռն նախանձաբորբոք միակաց, որպս
հուսայ ՈՐ եկեղեցի առաքէ զօր հանապազ մինչև ի
ծագս երկրի և խնդիր կորուսեալ ոչխարաց, որպս
բանիւ ողջմտիւ վարդապետութիւն ածեն և տիրու-
նական դաւթին; և ի բազմութիւն անուն հեթանո-
սաց լցուցանեն զպակասութիւն խաւսասիրտ հրէից; և
եղև ժամանակ ըղ քարոզութիւն, և վաստակօք միա-
կաց այսոցիկ բակեսցի մինչսորմն ցանդոյն, և ի բաց
բարձցի անջրպետն որ մեկնէր ի մէջ հրէից, և ի
մէջ հեթանոսաց; և այլ ևս ոչ եղիցի խտիր հրէի,
և հեթանոսի; ծառայի, և ազատի; արուի, և
նդի; զի ամենեքեան մի հօտ եղիցին ի քՍ. Կա-
նուխ զբանդ քո ԱՏՈՒ կատարեա.

Հաւատաբ. իւթ.

Հայր իմ որ ետ ինձ զնա, մեծ է քան
զիմ: և ոչ կարէ ոք յափշտակել ի
ձեռաց հօր իմոյ.

Պարտ էր, ընդ լատինացիսն Քարոզմանել, զոր
ինչ ետ ինձ հայր իմ, մեծ է քան զիմ; զբառն այս
(ՄԵԾ) առբերելով, ոչ առ հայր, (քանզի յայ-
դպս մեծութիւն հօր ոչ էր աստ խնդիր ինչ) այլ
զբառն (ՄԵԾ) առբերելով առ այն որ առնաւ
քին ի հօրէ, այսինքն առ ձշմարիտն էութիւն, և բն-
րութիւն, և աստնականութիւն.

էր

որ է մեծ քան զամ; որով յաղագաւ, ասէ Տէր, զոչխարս իմ պահեցեք անձնաս ընդ դէմ ամ ընթաց եմոց; և ոչ կարասցէ ոք յափշտակել զնա ի ձեռաց եմոց, քանզի ոչ եմ ես լոկ մարդ· այլ հասարակ դուք; բայց աստուածք եմ ես, էուք, կատարեալք ի ընդ հօր.

ՀԱՄԱՐ. Լ.

Ես և հայր մի եմք.

աստուածանալ հերձուածողք, զին մի բռնադատանին զմարդին խոստովանել զաստուած, եթէ խոստովանէին զնա էուք, և բնուք ի ընդ հօր; զբառն այն (մի) մեկնէին յաղագս վարդապետական միութեան, և ասէին; որպէս մի է ընդ հօր, ոչ միութեամբ էուք, և բնուք, բայց միութեամբ սիրոյն, որ կերպիւ և մեք ընդ իրեարս զմի առնեմք զայնոսիկ, որք զմիմեանս սիրեն: ուստի ոչ հետևի թէ աստուածն եղէ մարդն. Օայն մեկնութեան հաստատեին աստուածանալք վկայութեամբ ինքեան նոքա մարդոյն, որ յայլ ուրեք խնդրէ ի հօրէ զաստուածելոյ իւրոյ, զի երկոցունց մի, ոչ և մեք մի եմք: ուր բառն այն, մի, ոչ նշանակէ յաստուածեալսն զմիութեան էուք և բնուք, այլ նշանակէ զմիութեան վարդապետական, զմիութեան սիրոյն. Նոյնպէս հայր և մարդն ասեն մի, ոչ թէ հօր, և մարդոյ մի եղէ էութեամբ, և բնութեամբ; բայց ասեն մի, քանզի գոյ ի մէջ նց սէր կատարեալ. աստ նոքա էր մեկնութեամբ աստուածանալոց.

Պատասխ. Եթէ բառն այն (մի) նշանակէ զմիութեան բնութեամբ հօր, և մարդոյ, ոչ յայտնի լինիցի, եթէ

մատուցաբար քննելիք զբանս սիրկչին, որոց բուն զօ-
րութիւն այս է ; հայր նմ մեծ է և կատօղ քան զամ ;
ուստի ոչ կարէ ոք զոչխարս նմ յափշտակել ի ձեռաց
նր : նոկ արդ նմանապէս ոչ կարէ ոք զոչխարս նմ
յափշտակել ի ձեռաց նմոց ; ապա ես եմ, ունդ հայր,
մեծ և կատօղ քան զամ ; ապա եմ ես ի ընդ նմա
էութիւն, և կատողութիւն .

ՊՀՂ. Իբրև լուան հրէայքն զբանս քի զայ-
սոսիկ, դայթագղեցան յոյժ ; քանզի այնպէս նմացան
թէ զանձն նւր առնէր զԱծ, էութիւն, և բնութիւն
մի ընդ հօր ; ուստի առնին զվէմս, զի քարկոծ ար-
արցեն զնա ; և ասէին, վն բարւոյ դործոյ ոչ առնեմք
զքեզ քարկոծ ; այլ վն հայհոյութիւն ; և զի դու մարդ
ես, և զանձն քո Ած առնես . Եթէ քրս զին-
քն ասէր մի ընդ հօր միութիւն սիրոյն միայն, այնու
նոկ ոչ հայհոյէր, և զանձն նւր Ած ոչ առնէր .
ՊՀՂ. Եբրեցիս զինքն ասէր մի ընդ հօր էութիւն, և բն-
ութիւն, ուստի դայթագղէին հրէայք, որք ունէին
զնա, նբրև զլոկ ինչ մարդ .

ՊՀՂ, Եթէ քրս զինքն ասէր մի ընդ հօր, միու-
թեբ սիրոյն միայն, պարտ էր նմա ունկնել զբանս նւր,
և ի սրտից հրէից բառնալ զդայթագղութիւն, ասելով
ցնս, յոյժ աւր զնս ասեմ մի ընդ հօր, մի նմանապէ
զմիութիւն էութիւն, և բնութիւն, բայց միայն միութիւն
սիրոյն ; և այն ունկնութիւն բառնայր առ ժամայն
զդայթագղութիւն ի մտաց հրէից . բայց զայն ոչ ա-
աց ԼՏԲ Յս, այլ առաւել եթող զհրէայս ի կարծիս
նբրեանց, թէ քրս զանձն նւր առնէր Ած, և զին-
քն ասէր էութիւն, և բնութիւն մի ընդ հօր,

ՀՂՈՒԱՐԿԵՍ . Յոհաննու ԺԴ. ՆԲ. Քրս ասէ, հայր
նմ մեծ է քան զնս ; ապա զի արդ ասէ ասա, ես և
հայր մի եմք ?

Զա-

Պատասխ. Հայր դժուարութիւն անուանանելի է արդեօք միաբնակաց: բայց երկաբնակք դիւրաւ լուծանեն զնա ասելով թէ, զոր ասէ Քր, հայր մեծ է քան զիս, զայն ասէ ըստ մարդկայնն բնութեանն իւր: իսկ զոր ասէ, Ես, և հայր մի եմք, զայն ասէ ըստ բնութեան հաճայնոյ.

ՀԱՐՑ. ԼԱ.

ՈՂՋ յօրինս ձեր գրեալ է, ես առայն եմ ձեզ: ձեզ ի՞նչ է ?

Օ՞րինէ դայթագղիք, ով հրեայք դուք, զի զանձն իմ Հաճ առնեմ? ՈՂՋ ապաքէն յօրինս ձեր Հաճ կոչին այնոքիկ որք կարգեալք են յաշխ առաքնորդք, և վերակացու ժողովրդեան, Թէպէտ նք զՀաճային ինչ ոչ ուրեք յանձինս նուրեանց? ՈՐՉափ առաւել և ս կարեմ կոչիլ Հաճ, որ եմ բնական որդի Հաճ?

Հրաւիրեաս. Հայր վկայութիւն զոր Քր առբերէ ի ղաւթէ ամարդարէ, ոչ հասատառէ զի վերոյ առաջեալ բանն նր, Թէ էութիւք մի ինչ ընդ հօր; բայց յաւետ անդօրացուցանէ զնա; քանզի ի վկայութէ անտի հետևի Թէ Քր այնպիսի Հաճ է, և կոչի, ոչ մարդարէքն, քահանայքն, և դատաւորքն կոչին և ևս Հաճք, ոչ էութիք, բայց միայն սիրով, և միաբանութիք.

Պատասխ. Քր ի պատճէն Թերահաւատութէ հրէից, երկդիմի և խրթնաճաճուկ բանիւք զայն յուցանէ, զոր առաքեալն ասացեալ էր յայտնապէս, և պարզապէս, Թէ ինքն էութիք Հաճ էր, և մի ընդ հօր. Յորժամ Քր զայն ասէր յայտնապէս, և զբան

ինչ հաստատէր անթիւ արուեստիւք և նշանօք, հրէայք խաւսանային ոչ հաւաստալ բանից նմա : այլ ժամն է ուրեմն զի անյայտ բանիւք խօսիցի այսու հետև ընդ նմա ; և Տողին և խաւարն, որք զաչս ինչեանց խլին չտեսանել զլոյսն.

ԳԼՈՒԽ Ի.Ա.

ՀԱՄԱՌ. Ղ.

Եկն հիւանդութեն չէ ի մահ.

ԵՏ սակաւ մինչ մեռաւ Ղազարոս ի հիւանդութենէ անտի ; ապա զի արդ ասէ քրս թէ այն հիւանդութեն ոչ է ի մահ ?

Պատասխ. ոչ է ի մահ ; այսինքն, առ հնդ ի մահ է արդեօք, զի կարողութեն ոչ ունիք յարուցանել զմեռեալն ; բայց առ նս ոչ է ի մահ, զի կարօղ եմ մինչ և նմ բանիւ զմեռեալն առնել կենդանի . Նոյնպէս մեկնեցեալ զհատսալ Ժ՚. ուր ասէ Տ՚ , Ղազարոս նմնչէ : և հատսալ Ժդ. ուր ասէ, Ղազարոս մեռաւ . Համառաւ առ հնդ , զի հշխանութենէ ոչ ունիք ի մահուընէ անտի դարձուցանել զնա ի կենդանն ; բայց առ նս նմնչէ ; քանզի դնըրադոյն եւս է նմն յարուցանել զնա ի գնոյ անտի մահու, քան հնդ զննչեալն զարթնուցանել ի գնոյ . Բարուք ասաց աճն թէ մեք այն ոչ նմք , ոս արդէն նսկ նմք , բայց այն

այն եմք, որ ինչ առաջադոյն էաք, և որ առ սուրբ լինելոց եմք. Եւակ մեռեալն ղազարոս սակաւ ինչ առաջ էր կենդանի, և յետ սակաւու միոյ դառնալոց էր ի կեանսն, ուրեմն մեռեալ ղազարոս կենդանի էր, ոչ մեռեալ.

ՀԱՄԱՐ. Թ.

ՈՉ երկոտասան ժամ է աւուր? Եթէ ոք գնայ ի տուընջեան, ոչ գայթագղի.

Իբրև լուան աշակերտացն Թէ կաս քո միւս անգամ երթալ ի հրէաստան, ի տես ղազարոսի հիւանդացելոյ, ասեն ցնա; Ո՞րաբըն, այժմ ևս խնդրէին հրեայք քարկոծ առնել զքեզ, և դէմ երթաս անդրէն? Ասէ ցնոսա Յի, ոչ երկոտասան ժամ է աւուր? Եթէ ոք գնայ ի տուընջեան, կաւիղն ոտք-եօք հրէայք սպանանել զիս, և մինչև ցայսօր խաւարան ոչ ընդունել զվարդապետութիւն իմ: բայց երկոտասան են ժամք աւուրն, և որ ոչ եղև ի միում ժամու, եղիցի Թերևս ի միւսում. փոխեսցին Թերևս հրէայք զիտաս եւբեանց; և որք առաջադոյն ոչ կաւիղն ընդունել զիս, ընկալցեն Թերևս այժմ զբարն իմ. Կրկալ քեզ զայլ մեկնութիւն, որ Թուի ևս քան զառաջինն: Երկոտասան ժամք աւուր նշանակին զժամանակ կենաց Տի, յորմէ ժամանակէ ոչ կարեն հրէայք հասանել զժամն և ոչ մի, և սպանանել զքեզ կանխադոյն քան զոր ինքնին սահմանեաց նախ քան զյաւիտեանս. Ուրեմն զոր օրինակ որ գնայ ի տուընջեան ոչ գայթագղի, և զոտն զվէմ ոչ հարկէ, բայց առանց ինասուշելոյն, զի առեալ զլոյսն; նոյնպէս և

և ես, ասէ Տէր, մինչև ի տուընջեան գնամ, մինչ չև սպառեալ է սահմանեցեալ ժամանակ կենաց իմոց, երթայց անշնաս, և անկասկած յոր վայր և կամիցիմ; և ոչ գայթագղեցայց; և ոչ սպանցեն զիս հրեայք, բայց միայն յորժամ գնացից ի գիշերի, յորժամ կատարեալ իցէ և սպառեալ ժամանակ կենաց իմոց: երթիցուք ուրեմն, և ամ ինչ երևիցէ ի նոյն:

ՀԱՄԱՐ. ԺԱ.

Աստ Մարթա ցՅՈ, Տէր եթէ աստ լեալ էիր, եղբայրն իմ չէր մեռեալ.

Իբր թէ ասէր; եթէ կանուխ եկեալ էիր Տէր, մինչ դեռ և կենդանի էր եղբայրն իմ, չէր մեռեալ, քանզի բժշկէիր դու զհիւանդն: իսկ այժմ որ մեռաւ, հատաւ ի մէնջ յոյս ամ. Աստուածատեսն նոյնպէս երևի թէ Մարթա չէս հաւատայր զքո Աստուծոյ; քանզի եթէ հաւատայր թէ քո Աստուծոյ էր, գիտէր արդեօք թէ որչափ դիւրին էր նմա բժշկել զհիւանդն, այնչափ դիւրին և էր նմա յարուցանել զմեռեալն. Յաւելու Մարթա և ասէ; ես եմ եթէ դու ինչ խնդրեսցես յԱստուծոյ, տացէ քեզ Աստուծ; իբր թէ ասիցէ, Թէպէտ կարօղ չես յաւուրս եղիայնս զոյ յարուցանել զմեռեալն, (քանզի զմեռեալս յարուցանել կարէ մի և եթ Աստուծ) սակայն զի առեմ զքեզ զոբ, և Աստուծոյ ընդունելի յոյժ; և զոր ինչ խնդրեսցես ի նմանէ, տացէ քեզ անվրէպ, թէ և զյարութեն եղբօր նոյ.

ՀԱՄԱՐ. ԼԴ.

Երբեմն եառնէ Տէր զմարեսամ զին լայր, խոռվեցաւ ի հոգին նորա.

Լաւ էր թարգմանել ընդ լատինացին, խոռվեցոյց զանձն նորա. քանզի, ոչ ի վերոյ ասացաւ, Համար. նէ լըռ. ախտք, և կնիք ի քէն, ոչ էին բռնակիք, ոչ անկարծաղարթք, ոչ ի մէջ; բայց հնազանդք էին ուղղն բանին; և ասէր Տէր շարժէր և զարթուցանէր զնա, և շարժեալն դադարեցուցանէր ոչ, և յորժամ, և որչափ և կամէր. վասն այսորիկ ոչ ասէ Աւետարանիչն Թէ խոռվեցաւ ոգին քէն, բայց ասէ Թէ ինքնին Տէր խոռվեցոյց զոգին նորա. զոր որով հնարս ոչ կարեն ախտակրութիք մեր անկանիլ ի բնութիւն աշճային որ է անընդունակ խոռվութեան, երկիւղի, տրտմութեան, և այլոց ախտից մերոց; պարտ է ասել Թէ խոռվեցաւ քէն ըստ մարդկայնոյ բնութեան զոր առեալ էր նորովք ախտիւք և տկարութեաբ հանդերձ, բայց ի տգիտութիւն և ի մեղայ.

Հարցանես. Բարւոք գիտէք քէն Թէ ուր եդեալ էին զմարմին մեռելոյն: զի արդ ուրեմն հարցանէ, և ասէ, ուր եդիք զնա?

Պատասխան. Տէր ըստ հաւատոյ և կարծեաց հրէից, այսպէս խօսի ընդ նմա: ուանէին նոքք զՅն երբեմն զրկի մարդ, ուստի՝ մարդկօրէն խօսի, և հարցանէ. Նոյն կերպիւ ասէր աշճ ցաղդաս ի սկզբանէ, աղդաս ուր ես? Եւ ցկային, ուր է հաբէլ եղբայր քո?

ՀԱՒԱՏԱՐ. ԽԴ.

Եւ եկ մեռեալն ոտնաք կապելոյ.

Քանզի՝ Յն որ յարոյց զմեռեալն, զկապուցեալն ոչ լուծանէ, զի հրեայքն շօշափելով գնան, և զպատուանս, և զվարշամակն լուծանելով ի նմանէ բռնադատեցին խոստովանիլ Թէ զաղաւթս ՃՀարուցեալն էր մեռեալ, և Թէ Յեսուս յարուցիչ մեռելոյն ՃՀարուցեալն աՀՃ էր. զի արձակել ասէ Յն զկապուցեալն քեալս նէր, լուծէք զդա; նշանակելով զիշխանութիւն կապելոյ և արձակելոյ զոր այսու հետև տալոյ էր նոցա, և քահանայից նորոյ ուխտի. քանզի որ ինչ է զաղաւթս մեռեալ, այն նոքա է մարդ մեղուցեալ զմեղս որ առ ի մահ. մեռեալ էր զաղաւթս, զի բաժանեալ էր հոգի նր ի մարմնոյ նէրմէ; նոյնպէս մեռեալ է մեղաւորն, զի ի հեռն մահուընէ մեղաց բաժանեցաւ ի հոգւոյ նր ՀՅորհրդն աՀՅ. Յն զմեռեալ զաղաւթս յարուցանէ արդեօք, բայց զկապուցեալն տայ լուծանիլ յաշակերտաց նէրոց; նոյնպէս յարուցանէ և զմեղաւորն, զարթուցանելով զնա ի սէրն, և ի զղջումն; սակայն տայ նմա հրամանս գալ յանդիման առաքելոց քահանայից, զի ի կապոց մեղաց լուծցեն, և արձակեսցեն զզղջացեալն. այսպէս զգոյշ լեր Թէ իշխանութիւն կապելոյ, և արձակելոյ զոր ետ Տէր Յն աՀաքելոց, և քահանայից նոր օրինացն, բնաւ ոչ է հաստատեալ ի վր բանից այնոցիկ, լուծէք զդա; բայց հաստատեալ է ի վր բանից զորս ասէ Յն, ևմատթ. ԺԸ. աՀՄն ամէն ասեմ ձեզ, զոր կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս

կինս ..... և Յօհաննու Ե. Եթէ ումեք Թողուցուք
ղեղս, Թողեալ լինի նմ: և այլ.

ՀԱՄԱՌ. ԽԹ.

*Լաւ է մեղ զի այր մի մեռանիցի ի վր
ժողովրդեան, և մի ամ ազգս
կորնչէ.*

Օրր ասէ Կայափայ, զայն ըստ մասին ինչ ասէ յանձնէ իւրմէ, և ոչ է մարգարէութիւն; և ըստ մասին ինչ ասէ յազդմանէն ԱՀՅ, և է մարգարէութիւն. Օրր ասէ Թէ լաւ է զի մեռանիցի այր մի, այս ինքն քր, և մի գայցեն հռոմք, և բառնայցեն զազգս մեր; զայն ասէր յանձնէ իւրմէ, և ոչ էր մարգարէութիւն, քայց յաւէտ էր ստուգիւթիւն; քանզի մեռաւ քր; և փոխանակ զի մեռաւ, եկեղն հռոմք, և զազգն հրէից բարձին ի միջոյ. Իսկ զոր ասէ, լաւ է զի այր մի մեռանիցի ի վր ժողովրդեան, զայն ասէ յազդմանէն ԱՀՅ, և է մարգարէութիւն; քանզի նշանակէ Թէ ի մահ՝ անտի քր եղիցի փրկութիւն, ոչ միայն հրէից, այլ ամ ազգի մարդկան. Ուրեմն մարգարէանայր կայափայ, և ոչ նմանայր զոր ինչ մարգարէանայր. այլ ինչ էր որ խօսէր, և այլ ինչ որ խօսէր հոգին ՍՔ բերանով նր: խօսէր հոգին ՍՔ հայելով ի հոգևոր փրկութիւն ազգի մարդկան; և խօսէր կայափայ հայելով ի մարմնաւոր փրկութիւն ազգին իւր.

ՊԼՈՒԽՍ. ԺԲ.

ՀԱՄԱՐ. Ի.

Էին անդ ոմանք և հեթանոսք յելելոց անդր ընդ երկիրպագանիցեն և տօնին.

ԵՒ ԵԲՐ Եհ ել համբաւն ՅԻ ընդ երկիր ընդ ամ, եկին և ի հեթանոսաց ոմանք ուսանել զինս. սբն կիւրեղ ասէ Թէ էին այնոքիկ յաշակերտաց Պղատոնի, որք խոստովանէին զմն և ևթ աշխ, և հետևէին բնական օրինացն: որոց լուեալ Թէ հաւատային նմա հրեայքն ի մի աշխ, և ի տաճարին նը բեանց նմա և ևթ մատուցանէին երկիրպադուԹիւն պաշտուածն, զայն երբեմն յերուսաղէմ երկիրպադանել աշխ; որոյ յաղագաւ գոյր ի տաճարին մեղօնն յատուկ մի տեղի, որ կոչիւր գաւիԹ հեԹանոսաց. մին էր ի նոցն այնոցիկ եԹիոպացին նեբքենն հզօր կանդակայ տիկնոջ, զորմէ գրեալ է ի գործս գործոց աշխ. ը. ևէ.

աշխ ասեն Թէ հեԹանոսք այնոքիկ, հայք էին ազգաւ, զորս աշխբեամ հայոց արքայ առաքեալ էր առ Տն ի քաղաքին ՅուբհայՅ, որ է եդեսիայ; խնդրելով ի նմանէ զի արժանի արասցէ գալ, և ուսուցանել ազգն նոյսւմ զհաւատս ճշմարիտ: ՅորսւմՅ և գրեաց վրկիչն զպատասխանին, և յետոյ առաքեաց

այ ի հայս զսբն Թադէոս ի բժշկութիւն աղբատու
արբոյն, և ի լուսաւորութիւն նահատակաւ ապրէն
հայոց. Օնէսէ և եղե, ածեն փիլիպպոս, և աշնո
բեաս զհնեթանոսս առ Տն: և ասէ ցնա Տն, աշհ
աւասիկ էհաս ժամ զի փառաւորեսցի որդի մարդոյ:
այս ինքն, հնեթանոսաց անձանօթ էր մինչև ցայժմ
փրկութիւնն Քրիստոսին, և փակեալ նց դուռն ար
քայութիւն; զարշութիւն էր նձղ խառնել ընդ նս, և
տոհմեալ էին նձղ հրաւանն, ի քաղաքս նց մի մտա
նել: բայց ահա էհաս ժամանակ զի և նս հնեթանո
սաց յայտնեսցի աշմարտութիւն, և բացցի արքայու
թիւն դուռն; և նց պատճառ է առ նս գալ, զի հրէից,
և հնեթանոսաց լինի այսու հնաւանի մի հօտ, և մի
հովիւ, և ես փառաւորեցայց ի նս.

ՀԱՄԱՐ. ԻԲ.

ԵԹԷ ՈՉ ՀԱՏԱՆ ՑՈՐԵՆՈՅ ԱՆԿԵԱԼ ՅԵՐԿՆՔ
ՄԵՌԱՆԻՑԷ, ԻՆՔՆ ՄԻԱՅՆ ԿԵՑ�Ի.

Յաւանակ փառաւորելոյն որդւոյ մարդոյ, է ժա
մանակ չարչարանաց, և մահուանն նր. Իսկ զի արդ
փառաւորեալ նցէ քրս մահուամբ խորհի ինքն ցու
ցանէ առաւել հատին ցորենոյ որ անկեալ յերկիր,
ԵԹԷ ՈՉ ՄԵՌԱՆԻՑԷ, և երկրի ջերմութիւբ լուծցի,
ինքն միայն կայ, և ոչ առնէ զպտուղ ինչ. Իսկ
ԵԹԷ ԼՈՒԾԵԱԼ ՄԵՌԱՆԻՑԷ, առնէ զարդիւնս բազումս,
և զպտուղ տայ մինչև ցհարիւրապատուն. Հատն ցո
րենոյ է ասր մեր Տն քրս: յերկիր անկաւ, յորժամ
յերկնից ելեալ ի հրաւական արդանան աշճածնին
զմարմին եառ. Լուծաւ, յորժամ մեռաւ, և մնծա

ձեզ փառքն ինքեան մերկչէն, այն է զի ի ձեռն մա-
հուանն Քրոջ կոչի և խակ է աշխարհն մերկչէ; ոչ ասէ
ղրուկ. յայլ ուրեք, թէ պարտ էր չարչարիլ քրիստոս, և այնպէս
գլ. ինչ. մտանել ի փառս նորա.

ՀԱՄԱՐ. ԽԷ.

Աղանդ իմ խռովեալ է; և զինչ ասացից?
Հայր սաղեցոյց զիս.

Այս աղօթք ՅԻ նման է աղօթից զորս յետոյ
արար ի պարտիզին Գեթսեմանէայ, և գիշերին աւադ
հինգ շաբթի. Աղանդ ասէր, որպէս իմ հոգի նմ
մինչև ի մահ; ասա ասէ, այժմ անդն իմ խռովեալ
է. Աղանդ ասէր, հայր, եթէ հնար է, անցցէ բա-
ժակս այս յինէն; ասա ասէ, հայր, սաղեցոյց զիս.
Աղանդ ասէր, ոչ ոյզ ես կամիմ, այլ ոյզ դու; ասա
ասէ, վա՛ այնորիկ եկն ի ժամ յայս, զի մեռանիցիմ.
Աղանդ էջ հրեշտակ յերկնից մխիթարել զտրտմեալն;
ասա ենէն բարբառ յերկնից որ ասէ, փառաւոր ար-
արեր, և դէմ փառաւոր արարից. փառաւոր արար
հայր զՈրդին նոր տալով նմա առաջ քան զյաւի-
տեանս զԱՃային էութեն; մինչ զի փառօք, նշնա-
նութեք, կարողութեք հաւասար է Որդին հօր նո-
րում: փառաւորեաց և զնա յաւուրն Ծննդեան,
մկրտութեն, և այլակերպութեն նր, երկնառաք հայ-
նոնք վկայելով վա՛ Աղծութեն նր: փառաւորեաց զնա,
տալով նմա զայնքան սքանչելիս և զնշանս առնել:
Խակ դէմ փառաւորեացե զնա, քանզի յարուցե զնա
ի մահուընէ; և զյարուցեալն առջե առ նոր կեր-
դնոս, և նստուցե ընդ աջմէ նորմէ ի նոյն փառս

զոր

զոր ունէը ի սկզբանէ ; և մեռանել զինդանիս , և զմեռեալս ; և առնել նմա զամ եչխատուԹիւն յերկինս , և յերկրի ; և ԹադաւորուԹեանն չը ոչ եղիցի վաղճան .

ՀԱՄԱՐ. ԼԱ.

Ալյմիկ դատաստան է աշխարհիս այսոր-
բիկ ; այժմիկ իշխան աշխարհիս այսո-
բիկ ընկեցեալ արտաքս .

Պարտ է ինձ մեկնել , նախ , զինչ եցէ դատաստան աշխարհիս ? Եւ ապա , աշխարհիս իշխան զի արդ արտաքս ընկեցեալ ?

Առ առաջին . Յայնմանէ առեն Թէ աշխարհիս դատաստան , է պատիժ , և դատապարտուԹիւն որով դատեցան այսու հետե աշխարհս փոխանակ զի անարդեցաք զորդի մարդոյ , և ոչ ընկալաւ զնա . Ալյլ առեն Թէ աշխարհիս դատաստան , է աշխարհիս փրկուԹիւն ; զոր օրինակ Եսայ. ա. ԺԹ. ասէ Տէր , Դարարէք որբոյն , և տուք նուաւոնս այրւոյն , այսինքն , զորբան , և զայրիս փրկեցէք և Հետաց այնոցիկ որք առաւաքեցուցանեն զնա . Եւ Դանիէլ , Հռչակէ Տէր զդատաստան աղքատաց , ասէ ԴաւիԹ մարգարէ ; այս ինքն , Տէր զաղքատան փրկէ , և նեղեցեալ նման օձնական . Ցուբեմն քէն բանիցն զօրուԹիւն այս է ; մինչև ցայժմ տառապեալ էր աշխարհս , և նուաճեալ ընդ չ֊ոմ Սատանային , և մեղաց , բայց այսու հետե , ի Հետ մահուանն որդւոյ մարդոյ փրկեցաւն մարդիկ ի գերուԹէ անտի մեղաց ; և ի Սատանայի բռնուԹենէն ապրեցաւն .

Սաղմ. ՃԼ. Թ.

Հռ

աղա երկի. աշխարհիս իշխան է Սատանայ, որ արտաքս ընկեցին, քանզի և ձեռն մահուընն քին խորտակեցին զօրութիւն նր, և եղիցի նա այսու հետև երբև զշուն կապեալ, որ հաղել կարէ արդեօք, ասէ սբն Օգոստինոս; այլ խածանել ոչ կարէ, բայց միայն զայնոսիկ որք անմտութիւբ մերձենան առ նա. աշխ է զոր ասէ Յօհաննէս թէ էզ հրեշտակ յերկինից; և ունէր զփականս դժոխոց; և շղթայս մեծ ի ձեռին նորում; և ըմբռնեաց զվիշապն զօձն առաջինն, որ է բանսարկու և Սատանայ; և կապեաց զնա հազար ամ; և էարկ զնա յանդունդս դժոխոց; և փակեաց, և ինքեան զնա, զի այլ ևս մոլորեցուցէ զազգս, մինչև կատարեսցին հազար ամք, (այսինքն ի մահուընէ անտի՝ փրկչին Ցի, մինչև զգալուստն Ներոնի) և յետ այնորիկ պարտ է լուծանիլ նմա սակաւ ժամանակս, (այսինքն զերկոս ամ և կէս զորս նեռն Թագաւորեցէ.

Յայտն. ի. ա.

ՀԱՄԱՐ. ԼԲ.

Եւ ես յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսեան ձգեցից առ ես.

Յերկրէ բարձրացաւ ՍՏՐ Ցս, յորժամ երբև զօձն պղնձի եդաւ ի վր նշանակի խաչափայտին. Յայժամ զամենեսեան ձգեաց առ ինքն; քանզի ի ձեռն մահուընէ խորոյ էհան ի դժոխոց զհոգիս արդարոց որք ակն ունէին գալստեան նր; և դարձոյց ի քրիստոնէական հաւատոն զհրէայս ի Գլխաւորէ, և ի կռապաշտութէ զհեթանոսս.

ոչ կարէին հաւատալ ի նա, զի միւս անդամ
ասէ Եսայի Թէ կուրացոյց զաչս նոցա, և
ապիեցոյց զսիրտս նոցա, զի մի տեսցեն
աչօք, և խմացեն սրտիւք, և
դարձցին .....

Իսիաստ են բանք այսոքիկ ; և ի վեր նոցա յուզին
ընծաբանք զոհաբերելոյն խնդիրս երկուս. ազա-
չին, զի արդ հրէայք ոչ կարէին հաւատալ ի քե՞ :
և եթէ ոչ կարէին հաւատալ, զի արդ դատապար-
տեցան վա՞ն անհաւատութե՞ն ելբեանց : Երկրդ, զի
արդ կուրացուցանէ աչս մեղաւորաց, զի մի
տեսցեն ; և զի արդ ապիեցուցանէ զսիրտս նոցա, զի և
մեղաց մի դարձցին : Չիցեն Թելեա կամք աղ զի
առնեն քեզա կեցցեն :

Աղ առաջին, պատասխանեմ Թէ հրէայք հաւա-
տալ ոչ կարէին, քանզի ոչ կամէին ; և ի չկամելոյ
նոցա էր անկարողութի՞ն նոցա. Լսարէին որպէս Յակո- Յհնդ.
բայ սիրել զՅովսէփ զեղբայրն իւրեանց, և քաղ- Լ. Բ.
ցրութե՞ խօսիլ ընդ նմա ; բայց ոչ կամէին, այլ առե-
ին զնա . աղ՞ այսորիկ առէ գերն Թէ ոչ կարէին
խօսիլ ինչ ընդ նմա խաղաղութե՞ . Նոյնպե՞ կարէին
հրէայք, եթէ կամէին հաւատալ ի քե՞ ; բայց ոչ
կամէին ; և վա՞ն այսորիկ զի ոչ կամէին, բարւոք առն
Թէ ոչ կարէին .

Դ՞ն. Նախատեսեալ աղ զհաստատութի՞ հրէ-
նոց, ասացեալ էր ի ձեռն Եսայեայ մարգարէին Թէ
հրէայք ոչ տեսցեն ; Թէ ի մեղաց իւրեանց ոչ դար-
ձցին : նսկ զոր առաջադոյն նառես աղ՞, և զոր առ-

աջագոյն ասաց ի ձեռն մարգարէից, այն ամենևին պարտ է լինել; քանզի անվրէպ են բանք մարգարէից, և անսղալ նախատեսութիւն ՀՈՒ: ոչ թէ նախադուշակութիւնք մարգարէից, կամ նախատեսութիւն ՀՈՒ պատճառ եղեն խստասրտութեանն հրէից; բայց յաւէտ խստասրտութիւն հրէից առյ ապա լինելոց պատճառ էր ներգործ եւնք նախատեսութեանն ՀՈՒ, և նախագուշակութեանն մարգարէից. Օր օրինակ յորժամ տեսանեմ զոք զի ի բարձրաբերձ աշտարակէ զինքն հոսէ գահավէժ ի վայր, տեսութիւն իմ ոչ է պատճառ անկմանն նր; բայց յաւէտ անկումն նր պատճառ է տեսութեանն իմոյ.

ՀՈՒ երկիր. Պատասխանեմ ընդ Պօղոսի թէ կամի ՀՈՒ զի ամենեքեան կեցցեն, և ի գիտութիւն ճշմարտութեանն եկեսցեն. Եւ քանզի ոչ կարէ ոք ի գիտութիւն ճշմարտութեանն գալ, և ի մեղաց իւրոց դառնալ առանց օգնութեան շնորհացն ՀՈՒ; ապա ՀՈՒ ամենեցուն զերկնածադ լոյսն, և զշնորհն բաւական, որով կարէ իւրաքանչիւր ոք, եթէ կամի, ճանաչել զճշմարտութիւն, և ի մեղաց դառնալ. Լուսաւոր առնէ զամենայն մարդ ոք գայ յաշխարհ, ասէ սբն Յօհաննէս. Բայց լինի բազում անգամ զի խստանայ մեղաւորն ընդ դէմ ՀՈՒ, և զայս իւր կամութեամբ, մի առնել զլոյսն; և զանկնձն ծանրացուցանէ չլսել հայհոյին նր: և այնպէս լինի կուրութիւն, և խստասրտութիւն մեղաւորին, մինչ զի Աստուած կերպիւ ինչ թէ զլոյսն իւր զամենայն կալաւ ՀՈՒ յաչաց նր; և զամենայն շնորհս իւր ի բաց եբարձ ի նմանէ.

ԴԵՐՈՒ ԽՍ ԺԴ.

ՀԱՄԱՐ. Ը.

ԵԹԷ ՈՉ ԼՐԱՑԱԾՔ ՊՂԵՂ, ՈՉ ՈՒՆԱՅ ԸՆԴ ԻՍ ՄԱՆՆ.

ԵՐԲԵՔ կատարեալ Յն զընթերս երկուս առաքինս, զօրնականն, և դհանապազ զորդն, զաշխատեալս նոր պատրաստ ուսել արժանապէս պնդութիւն ոչ ձայ խորհրդական մարմնոյ և արեան նորոյ. Եւ քանզի արժան չէ մեզաւորի հաղորդիլ մարմնոյ Տեառն, ԵԹԷ դառն չիցէ ընբեալ և մաքրեալ ի մեղաց, վն այնորիկ ասէ Յն ցպնեատոս, ԵԹԷ ոչ լրացաք պղեղ, ոչ ունայնս ընդ իս մանն: Եթէ ասէր, անլուա՛յ ձեռօք և ոտիւք ուսել զսովորականն հացն, ոչ է ինչ; բայց ի հացէ առաւել կենաց զոր այժմ նակ ձեղ տալոց եմ, ուսել անմաքուր և անլուա՛յ սրտիւ, մահ է և կորուստ. Թ-ոյլ տուր ուրեմն ինձ լրա՛նալ զոտս քո, և անտուստ ունիմ զի արդ պարտ է զսերան լրա՛նալ արտասո՛ք ապաշխարութեա՛ն, նախ քան զուսուել զմարմնին իմ.

ՀԱՄԱՐ. Ի.

Լուացելոյն չէ ինչ պետոյ, բայց զի զոտս լուանայցէ.

Լուեալ Պետրոսի զայսպէսն ասելիս Տէր, յաւելուածոյ սիրոյն ասէ ցնա, քաւ և մի լինի ինձ Տէր մանն ընդ քեզ ոչ ունել; առաւել լուա ոչ միայն զոտս նմ, այլ և զգլուխ, և զմարմին ամբողջ, և զոր ինչ և կամիս արա ընդ նս, միայն Թէ զնս և քէն և բայ մի մերժեցես. Ասէ ցնա Տէր, Լուացելոյն չէ ինչ պետոյ, բայց զի զոտսն լուանայցէ; այսինքն, սէր և լուացեալք արդեօք էք դուք, բայց ոչ ամենեքեան, զի դիտեմ զայն որ մատնելոց է զնս, և նմա պարտ էր լուանալ, ոչ միայն զոտս, այլ և զգլուխ, և զսիրտ մաքրել և ծանրագոյն մեղայ. Իսկ ձեր լուացեալ է, և մաքուր սիրտն; և ձեզ չէ ինչ պետոյ, բայց միայն լուանալ զոտս, և զսիրտս ձեր աբել և ԹէՔնադոյն և փոշեառեսակ մեղայ, որք դեռ ևս կռուիլ են ի հոգիս ձեր, զոր օրինակ փոշի ինուն յոտս.

ՀԱՄԱՐ. Ի.Ը.

Եմս դիտեմ զոր ընտրեցի.

Իբր Թէ ասիցէ, որդեակք, ընտրեցի արդեօք զձեզ մեռաւանս; այլ զմատնիչն Յուդայ ոչ ընտրեցի. Բայց զյուդայ զի արդ Տէր ոչ ընտրեաց, զոր ընդ այլ մեռաւանսն կոչեաց յաշակերտական պաշ-

պաշտուն՞ : Ոյ՞ ասէ յայլ ուրեք, ոչ ես ձեզ զնը-
կոտասանող ընտրեցի :

Պատասխանին ոմանք Թէ խօսի առա՛ք յաղագս
ընտրութե՛ ոչ առ աշակերտական պաշտուն, բայց
առ փառս արքայութե՛, առ որ մատնիչն յուդայ կո-
չեալ էր արդեօք, այլ չէր ընտրեալ. Օայն մեկ-
նութի՛ ոչ ընդունիմ; քանզի Թէպետ ընտրութի՛ առ
փառս արքայութե՛ լինին համանգամայն և անբաժա-
նապէս, ոյ՞ և հօրէ, նոյնպէս և յՈրդւոյ; սակայն և
աբ գերծն յատուկ ինչ կերպիւ առընձեռն հօր, և
ոչ Որդւոյ : Ուստի ցսրդինն Օնբեդեայ ասէ Տ՚ս,
նատուցանել զձեզ ընդ աչմէ, և ընդ ահեկէ իմմէ,
ոչ է իմ տալ ձեզ, այլ որոց տուեալ է ի հօրէ իմ-
մէ : և Պօղոս ասէ, Թէ աշՃ զորս յառաչն ճանա-
չէր, յառաչափոյն և հրաշիրեաց կերպարանակից
լինել պատկերին որդւոյն նորոյ. Ուրեմն զբանս ՏՐՆ
զայսոսիկ պարտ է նմանալ յաղագս արտաքինութե՛
սիրելին, որով գիտէր և ճանաչէր զնորին մտաց, և
զդաղտնիս սրտից աշակերտից նորոց : ես գիտեմ զորս
ընտրեցի, այսինքն, գիտեմ զձեզ որդեաւկ, զի աբ
է : գիտեմ և զՅուդայ, զի մատնիչ է, և անի-
բաւ : վ՚ս այնորիկ ասացի ձեզ Թէ դուք աբ էք, այլ
ոչ ամենեքեան .

*Յորդեանք, խնդրեսցէք զիս, և ոչ առացէ
ցհրէայսն, ուր ես երթամ, դուք
ոչ կարէք գալ.*

Օբանս զայնոսիկ ասաց Տ՚ն երկու ժամուամ; մին անգամ հրէից, միւս անգամ աշակերտաց ներոց: բայց նոյն բանիցն ոչ էր մի և նոյն զօրութիւն. Յորժամ զայս ասէր հրէից, կշտամբելով ասէր, և սպառնալով թէ վն խոստանալոցն ներանց ոչ կարասցեն երթալ ընդ Տի յարքայութիւն, այլ ի մեղս ներանց մեռանիցեն: նոկ զնոյն բանսն ասէ ցաշակերտս ներս սիրելով զնս, և երբեմն սիրելեաց ներոց տալով զհրաժարական ողջոյն. Յորդեանք, ասէ, ահաւասիկ ես երթամ ի չարչարանս, և ի մահ: գիտեմ զի յօժար էք և դուք ընդ ինս մեռանիլ, բայց ձեր չէս հասեալ է ժամանակ: Եկեսցէ նախ ի վն ձեր զօրացուցիչ հոգին, և զդեցուսցէ զձեզ զօրութիւն ի բարձանց; յայնժամ ընկալեսցէք և դուք զբաժանն իմ, և եկեսցէք ընդ ինս յարքայութիւն.

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՕՀԱՆՆՈՒ.

ՀԱՄԱՐ Ա.

Ի տան հօր նմոյ օթեւանք բազումք են.

ԵՐԷք Յոհան աշակերտացն Թէ հասեալ է ժամանակ, որ յաշխարհէ ասաի փոխեսցի Տ̄ն, խոստացան յոյժ, և ելից տրտմութիւն սիրտս նց̄. աշակերտել յոհաւել էր նց̄ Թէ, ուր երթայր Ք̄ն, նք ոչ կարէին երթալ: անտի կասկած, անտի երկիւղ մի դուցէ տարապիսի լինիցին յարբայութենէն երկնից. բայց մխիթարէ զնս Տ̄ն, և ասէ; քաջ լերուք որ դեամբ, և մի խռովիցին սիրտք ձեր. Թէպէտ ոչ կարէք այժմ գալ ընդ ես յարբայութիւն, բայց յետոյ եկեսցէք: և մի երկնչիք Թէ դուցէ մի լինիցի անդառնդի վա ձեր: ի տան յայնմիկ հօր նմոյ օթեւանք բազումք են, և ես երթամ չինել տեղի, պատրաստեցից ես տեղին նր.

Ուրեմն հաւատան վարդապետութեն է, Թէ զոր օրինակ մինչ կենդանի են մարդիկ ի վր երկրի, է մինն արդար և սր քան զմիւսն; նոյնպէս և յարքայութենէ այլ է դերազանց ի փառս քան զայլն. աշխ փառք արեգական; ասէ Պօղոս, և այլ փառք լուսնին; և այլ փառք աստեղաց; և աստղ քան զաստղ առաւել է փառօք. նոյնպէս է յարութիւն մեռելոց; նոյնպէս եղիցի յարբայութենէ երկնից: այլ երբեմն զա-

Կորնթ. ա. գլ. ԺԵ.

րե

ընդակն փառօք դերափայլե : այլ երբե զլուսինն՝ այլ երբե զաստեղս . ոչով չափով եղիցի արդեւնք , չնորհք , և գործք բարիք ի կենցաղոյս յայսմիկ ; նոյն չափով եղիցին վարձք , և փառք ի հանդերձեալսն. Ձայս սերմանեմք : անդ հնձեմք : որ սերմանէ աստ ղբարն առաստապն , անդ եւս առաստապն զփառս հնձեսցէ ; և որ սերմանէ ձգնելով , ձգնելով և հնձեսցէ . Մարագիրք մի առներ զիս , մարդասէր Յն , ի փառաց քոց , և ինձ անարժան մեզաւորիս պատրաստեա ի տան հօր քո զփոքրիկ ինչ օթևանիկ ուր ապրեցայց , ձմին .

ՀԱՄԱՐ . Բ.

Ձպա թէ ոչ ասացեալ էր իմ Ձեզ թէ Ես Երթամ և պատրաստեմ Ձեզ տեղի ?

Քնի բանիցս այսոցիկ այլք և այլք մեկնութիւնք են : քանզի ոմանք զինն բառին (ապա թէ ոչ) ասեն դնեն , ուստի՝ այս լինի զօրութիւն բանից Տեառն ; որ դեակք , եթէ ի տան հօր նոյ օթևանք բազումք չէին ; եթէ ոչ երթայի պատրաստել Ձեզ տեղի , զայն իսկ ասէն Ձեզ . Ձայլք զինն բառին (ապա թէ ոչ) ասեն ոչ դնեն , ուստի լինի այս բուն և պարզ մեկնութիւն ; որովհետև , զինչ և խոտվեալք են սիրտք Ձեր ? Ձեզ ասացի թէ առ փոքր ինչ ժամանակ է իմ հրաժարիլ ի Ձէնջ : Թէ Թէպէտ ոչ կարէք այժմ զինն նմ գալ ի տունն հօր նոյ , սակայն ետևցէք յետ ասելոյս մինչ : Թէ ի տանն յայնմիկ պատրաստեցից Ձեզ տեղի : Թէ ոչ կարէ ոք առարգիր առնել զՁեզ ի տանէ անտի ; զայն իսկ ասացի Ձեզ ; և պարտ էր այն

մինչ

մխիթարական խոստմամբք քաջալերիլ սկսաք ձեր, և տրտմութիւն ձեր փարատել: սակայն դեռ ևս խոռվեալ էք, և անմխիթար է տրտմութիւն ձեր: ապա ինչ լինէր եթէ ոչ ասացեալ էր իմ ձեզ զքաջալերութիւն բանս զայսոսիկ?

ՀԱՄԱՐ. Ց.

Էջս եմ Ճանապարհ, ճշմարտութիւն, և կեանք.

Քո Ճանապարհ է, նախ վարդապետութիւք խրատ, զի նա ուսոյց մեզ զօրինս չարչհաց որ տանի զմեզ յարքայութիւն. բ. Ճանապարհ է հաւատով, քանզի նա միայն կերցէ, որ ի քո հաւատասցի. գ. Ճանապարհ է օրինակօք; քանզի եառ նա մեզ օրինակ զի ըստ սորա նա, նմայնպէս և մեք արասցուք; և ոչ կարեմք յարքայութիւն հասանել, բայց միայն երթալով զհետ նո՛ր: ուսան Պօղոս ասէ, Թէ զոմն աշակերտ առաքինն Ճանաչէր, առաքեալդ և հրաւիրեցաց կնոջ պարանակից լինել պատուհասին որդւոյն նորա. դ. Ճանապարհ է արդեամբք և արժանաւորութիւք; քանզի զիարակեալ դրուն արքայութիւն նա եբաց մեզ և ձեռն մահուա՛ն նորա; ուսան ասէ, ոչ ոք գայ առ հայր, եթէ ոչ ինձ.

Քո Ճշմարտութիւն է, զի ճշմարիտ ևս և անսուտ բանք նո՛ր, իսկ ամ մարդ սուտ է, ասէ մարգարէն. ոչ՝ի՛ ճշմարտութիւն է, զի զոր ինչ օրինակօք և առակօք ցուցանէին հին օրէնքն, քո գայն ամ ելից և կատարեաց անձամբ նորա: ուսան Աղուաքեան ասէ, Թէ ստո՛ւեր հանդերձելոց բարեաց ունէին օր-

Հռոմ. ը. ին.

Եբրայ. Ժ. ա.

օրէնքն, և ոչ միոյն կերպարանն նոցին.

Քո՛ կեանք է, դի և Հեռն չնորհաց եւրոց կեցուցանէ, և յարուցանէ զմեղ ի մահուանէ մեղաց.

ՀԱՄԱՐ. ԺԲ.

Որ հաւատոյ չիս, զգործսն զորս ես գործեմ, և նա գործեսցէ; և մեծամեծս և քան զնոսին գործեսցէ.

Ի զուր բարբանջին հերձուածողք, Թէ ի բաց եբարձ Տէր յեկեղեցւոյ եւրմէ զիշխանութիւն առնել միանան, և Թէ այժմ ի մէջ հաւատացելոց, հրաշագործ մարդ այլ և ոչ գոյ. Թէ ի մէջ հերձուածողաց ոչ գտաւ, և ոչ գտանիցի երբեք ոք որ զինքեան առնիցէ, ոչ են ինչ զարմանք; քանզի զիշխանութիւն առնելոյ ոչ խոստացաւ Տէր Ցո՛, բայց միայն այնոցիկ որք խոնարհ սրտիւ, և ուղղափառ հաւատով հաւատացին ի նա. ձայն է յաւուրս ընդ որս հռօմայ ոք եկեղեցւոյն, Թէ ոչ պակասեցան երբեք հաւատք նր; ուստի և հրաշագործք մարդիկք ոչ երբեք պակասեցան, և ոչ պակասեցին երբեք ի նմանէ. Քանզի զի արդ առնել կոչէ հաւատացելոց ի քէն, իշխանութիւն զնշանս առնելոյ, առեալ Մարկոսի դլ. ԺԶ. ՃԷ.

Հարցանեմ. Որպիսիք են նշանք զոր գործեցին հաւատացեալք, մեծս քան զոր գործեաց Քո՛ ինքեանն?

Պատասխանեմ. Լիալ քեզ զայսոսիկ: որում և հիւանդին հասանէր հովանի Պետրոսի, բժշկիւք

նա

նա առ ժամայն ի հիւանդութիւնէ նորմէ ; զոր ոչ ընդ- Գ-որդ.
թեռնութիւ զքէ . Գ-ՆՂ. քո զիմ և եթ լեզուսաց- աշակ.
սէր , նոկ աշակերտքն , և զինն նոյ այլ սբքէ բա- գլ. Ե.
զումք խօսէին զազգի ազգի լեզուս , զորս ուսեալ
չէր նոյ երբէք . Գ-ՆՂ. քո ոչ արար երբէք զնշան
ինչ բայց միայն ի բարին մեղաւորայ ; նոկ հաւա-
տացեալքն զնշանս և արարին ի պատիժ , և ի սա-
տակումն ամբարշտաց զոր օրինակ , Պետրոս միով
և եթ բանիւ սատակեաց զԱնանիայ , և զՍափի-
րայ . Պօղոս կուրութիւ էհար զԵղիմաս մոգ ; և
զպոռնիկն երիտասարդ մահանեաց Լատտանայն ի սա-
տակումն մարմնոյն . Գ-ՆՂ ի միւմ և եթ հրէաստա-
նին արար քո զնշանս ; նոկ աշակերտքն զնշանս
արարին ընդ ամ երկնէն .

ՀԱՄԱՐ. Ի-Ը.

Գ-ամ առ ձեզ զոգբ միւս և ս .

աշխ ինքն, աշհաւատիկ մեռանիմ ; և յերկր աւուբ
յետ մահուանն իմոյ յառնեմ ի մեռելոց : յայնժամ յա-
յտնեցից ձեզ զանձն իմ բոզում անգամ . Գ-ՆՂ. զոգբ
միւս և գամ առ ձեզ , այս ինքն ի կատարած աշ-
խարհն , յորժամ ընկալայց զձեզ առ ես մարմնով .
Իսկ եթէ զոգբ ինչ ձեզ ոչ թուի ժամանակ , ի մա-
հուանէ անտի զրկիլն , մինչև ի միւս անգամ գա-
լուստ նո ; պատասխանեն տայ Պետրոս աշակերտ ,
Թէ մի օր ստոյ երբեւ գհազար ամ է ; և հազար ամ Թ-ուղ.
երբեւ միմ օր . Ե. գլ. Գ.

ՀԱՄԱՐ. ԻԸ.

Հայր իմ մեծ է քան զիս.

Բարձոք ասէ Տէր Տ՚ , Թէ բանք նը հոգի , և կեանք են ; այնոցիկ արդեօք որք նմանան զնա ; եսկ այնոցիկ որք ոչ առնուն ի միտս մահ են , և կորուստ . Կալ քեզ զօրինակ զՀՀրիստոս , որոյ ընթերցեալ զբանս Տէր զայսոսիկ , հայր իմ մեծ է քան զիս , և ոչ առեալ զնա ի միտս , ասէր ; եԹէ հայր մեծ է քան զորդի , ապա որդի փոքր է քան զհայր ; եսկ եԹէ որդի փոքր է քան զհայր , ուրեմն որդի ոչ է աՀՀ , քանզի ոչ կարէ գոլ աՀՀ մի փոքր , կամ մեծ քան զմիւսն . Սմով և եԹ բանիւ զՀՀրիստոսի բերանն նոցին որ հարք ասելով , Թէ որդի ըստ մարդկային բնութեանէ փոքր է արդեօք քան զհայր ; բայց ըստ բնութեանէ աՀՀծախոյ հաւասար է որդին հօր հետուստ , ուստի ասէ , ես և հայր մի եմք : որ պատասխանեն նոցին և զբերանն միաբանակաց , հաստատեալով զերկուս բնութիսն ի քրս .

ՀԱՄԱՐ. Լ.

Ո՞վ իշխան աշխարհիս այսորիկ , և յինս ոչ ինչ գտանէ .

Ստեսեալ Տէր զի աՀՀակերտքն դեռ ևս ի միտս ոչ առնուն զբանս նորա , ասէ ցնս ; պարտ էր ինՀ մեկնել Հեզ զբանս իմ զայսոսիկ ; մեկնեցից յետոյ ; այժմ ոչ է ժամանակ ; քանզի ահաւասիկ գայ իշխան աշխարհիս սատանայ , և զբանեակ նը Յուդայ մատնել

զնս հրէից և մահ ; այլ յնս ոչ գտանէ ենչ ; և ոչ կարէ նոճաձել զնս ընդ իշխանութիւբ նորով : քանզի Թէպէտ մեռանիմ, սակայն ոչ բռնութիւբ նր մեռանիմ, այլ կամաւ նմով ; և և մահ ոչ ճնացից , այլ յետ երից աւուրց յարուցից զնս .

ԳԼՈՒԽ. Ժ-Ե.

ՀԱՄԱՌ. Ա.

Ես եմ ոտն , և հայր իմ մշակ է . ամէն ուռ ոտ յիս է , և ոչ բերէ զպտուղ , կտրէ զնա .

ԱՌՔԱԼՈՒ ոտն , և ուռոյն խոսաւէ զմեզ աստ , Թէ պարտ է մեզ , ոչ հաւատով միայն , բայց յաւէտ սիրով , և բարւոյ գործովք հաստատեալ կալ ի նա . ուրեմն , ոտն է քս ուռն է և մարդ հաւատացեալ . մշակ կամ այգեգործ է հայր ամէն ուրեմն զոր օրինակ այգեգործ զուռն անպտուղ կտրէ , Թէպէտ հաստատեալ իցէ յոտն , և ի հուր արկանէ : նոյնպէս հայր ամէն եԹէ տեսանիցէ զոք , զի հաւատով միայն հաստատեալ կայ ի քս , և զպտուղս հաւատոց նորոց արժանիս ոչ ունի , ի բայ կտրէ զնա , և ի հուր դժոխոց առ կանէ .

Կարէր քս յայլմէ , որ և իցէ ծառոյ զնոյն առ

անկ բերել : քանզի միակ եթէ տեսանիցէ զոսկեայ ծառոյն զի անպտուղ է, և անպիտան, կարէ գնալ նոյնպէս բայց Թողեալ քէն զայլ ամ ծառան, ուրոյն և եթ առբերէ գնմանութեն ; վ՚ այնորիկ զի ի մէջ ուրոյ որթոյն, ասէ ՅԲՆ Օգոստինոս, և ի մէջ ոստոց այլ ծառոց կայ այս զանազանութեն, Թէ այլ ծառոց ոստքն Թեպէտ և ծառոյ և բայց կարեալք, սակայն առ բազում ինչ են օգտակարք, և առ գործս բազումս հնարանութեն յարմար է միայն նց ; ուստի և հուր ոչ ապականին . բայց ուրն որթոյն եթէ յորթոյ մի անգամ նցէ կարեալ, առ ոչ ինչ օգտակար է, և ոչ կարէ հնարն զգործ ինչ առնել ի նմանէ, ուստի երբեմն զփայտ անպիտան և հուր ապականն . ոչդի մարդոյ, ասէ ՏՐՆ և ձեռն էզեկիելի մարգարէին, զինչ լինիցի փայտ որթոյն, քան փայտոց ոստից որք են ի փայտս անտառի ? մի Թէ առնուցուն և նմանէ փայտ մի առնել զգործ ինչ? պէ. ՀԻ. Քան առնուցուն և նմանէ ցից մի կախել ի նմանէ զանօթ ինչ? մի Թէ պիտանացու նցէ և գործ ? վ՚ այնորիկ և հրոյ ծախ տուեալ է . Ընպիտանագոյն ևս ես քան զնա, եթէ հաւատով և եթ հաստատեալ ես ի քն, և զսէր ոչ ունիս, և զգործս հաւատոյ քոց հատեսատս .

Տեսեալ քն և ասէ, Ընդ որ բերէ զպտուղ, նբէ գնա, զի առաւել ևս պտղաբեր լինիցի . ուրն պտղաբեր է մարդ հաւատացեալ, որ հաստատեալ է ի քն, ոչ հաւատով միայն, այլ ևս սիրով, և բարի գործովք . Քարէ գնա ընդ և նբէ ի ձեռն նեղութեց, և փորձութեց, զի համբերութբ կրելով գնն, արժանագոյն լինիցի վարձու, և փառաց արքայութեն . Ոչ փորձն ի բովս ոսկի և արծաթ, ասէ

Իմաստ

իմաստուն, նոյնպէս ընտրէ զսիրտս աշխ և հրով աշուակ. ԺԵ. ՅԲ.
փորձութեամբ տեսէ զնա.

ՀԱՄԱՌ. ՃԲ.

աշուանդ իմ ոչ ինչ կարէք առնել.

Երկու կերպիւ են գործք մարդոյ: այլ է գործ բնական; այլ է գործ դերբնական. բնական գործն այն է, զոր Թէ մարմնով Թէ հոգւով առնեմք յանձնէ մերմէ, և բուն զօրութեամբ բնութեամբ մերոյ: որ պիտիք են իմանալ, ճանաչել, կամիլ, լսել, խօսիլ, և այլք սոցին նմանք որք ոչ են ի վեր քան զկարողն բնութեամբ: ուստի ոչ ունին զարժանաւորութիւն ինչ առաջի աշխ, և ոչ կարէ մարդ փրկիլ նոքօք. իսկ Թէպէտ բնականք են; սակայն ոչ կարեմք առնել զնա առանց բնական, և հասարակ օգնութեամբ աշխ, որ երբեք հասարակ պատճառ աւի էնց, հաւանականապէս միշտ, և զկնի առ պահանջութիւն իւրաքանչիւրոյ բնին, և օգնական լինին նմա, զի կարիցէ առնել զգործս սեպհականս իւրոյ բնութեամբ; ուստի ասէ Պօղոս Թէ ի նա, և նովաւ, այսինքն յաշխ, և աշխ կեամք, շարժիմք, և եմք; և եԹէ առնուցու մի անգամ աշխ ի մէնջ զայն բնական, և հասարակ օգ- եր. ԺԷ. ՃԲ.
նութեան իւր, այլ ևս ոչ կարեմք առնել ինչ, բայց աշուաք. ելեալք յոչընչէ, առաքեալքն պաւռնամք միւսանգամ ԺԸ. յոչինչ.

Գործ դերբնական այն է զոր ոչ կարեմք առնել յանձնէ մերմէ, և բուն զօրութեամբ մերոյ բնութեան, առանց յատուկ, և դերբնական օգնութեան, և շնորհացն աշխ, որ տուեալ մեզ ի ձեռն արդեանց, և արա-

յա-

ժանաւորութեց Տի քի ; և է գործն այն պիտա՝
նացու ի փրկութի հոգւոյն , և արժանի արքայութե ;
այսպիսիք են սիրել զՀՇ ; յուսալ ի նա ; հաւատալ
ի նա և այլք . Իսկ թէ չնորհօքն քի , ունիցի մարդ
ղկարողութի առնել զդերբնական գործսն , բարւոք
ցուցանէ ԱՏԲ օրինակաւ ուրոյն : քանզի ոչ ուն
ոչ կարէ պատուղ բերել յանձնէ ևրմէ , եթէ ոչ եղէ
հաստատեալ յորթն ; նսկ եթէ յորթն եղէ հաստա՝
տեալ , կարէ պտուղ բերել զօրութե որթոյն ; Նման՝
նապէս ոչ կարէ ածդեօք մարդ գործել յանձնէ ևրմէ
զբարի ինչ գործն արժանի արքայութե , եթէ ոչ եղէ
հաստատեալ ի քի ; բայց եթէ և քի եղէ հաստա՝
տեալ , կարէ չնորհօք նր առնել զգործս արքայութե
արժանիս . ՈՉ մինակ ՀՇ ; և ոչ մինակ մարդ ;
բայց մարդ ՀՇ : և ոչ ասէ ՏԲՆ Օգոստինոս , ՀՇ
որ արար զքեզ առանց քո , ոչ փրկեսցէ զքեզ առ՝
անց քո .

ՀԱՄԱՐ. Ժ-Ը.

Մեծ և ս քան զայս սէր ոչ ոք ունի , եթէ
զանձն իւր դնէ ի վր բարեկա՝
մաց իւրոց .

Հասոյ թերևս ոք , թէ ի վր Թշնամեաց զանձն
դնել , մեծ և ս սէրն է քան զանձն դնել ի վր բա՝
րեկամաց : ուստի ասէ ՏԲՆ , եթէ սիրիցէք զայնո՝
սիկ որք սիրեն զձեզ , զինչ վարձք եցին ? Յետոյ
զարթուցանէ զմեզ առ մեծադոյն սէրն , ասելով ,
սիրեցէք զթշնամիս ձեր ; բարւոյ արարէք առելեաց
ձերոց : ապա դն ասէ , Թէ մեծ և ս քան զայս

սէր

սէր ոչ ոք ունի, եթէ զանձն նա՛ւ դնէ ի վե՛ր բարե-
կամաց նորոց :

Պատասխա՛ն . Օձանձն ոչ դնէ ոք ի վե՛ր Քրիստոսէ ,
բայց միայն ի վե՛ր բարեկամաց : քանզի ոք զանձն
դնէ ի վե՛ր Քրիստոսէ , այնու եւս ցուցանէ թէ նո՛ք
նո՛ւ բարեկամք են , եւ նա բարեկամ նո՛ց , զի սիրէ զնո՛ս
մինչ եւ ի մահ .

Հռաւսկես . Քո՛ զանձն նո՛ւ եդ ի վե՛ր մեղաւո-
րաց , որք են Քրիստոսի նո՛ւ : ուստի ասէ Պօղոս , թէ
յայնմհետէ Հ-Ե զսէրն նո՛ւ առ մեզ , զի մինչեւ մեղա- Հռօմ.
ւորք էաք , Քրիստո՛ս մե՛ռաւ : ապա՛ կարի ոչ վա՛ր ե.է.
Քրիստոսէ զանձն դնել .

Պատասխա՛ն . Մեղաւորք Քրիստոսի են քո՛ւք , զի նո՛ք
զքո՛ւ ոչ սիրեն . բայց քո՛ւ բարեկամ է նո՛ց , քանզի
սիրէ զնո՛ս ; եւ եբրեւ ի վե՛ր սիրելեաց նորոց , զանձն
նո՛ւ եդ ի վե՛ր նո՛ց . ո՞վ քո՛ւ կարող ասել թէ ոչ կա-
րէ ոք զմեծագոյն սէրն ցուցանել առ բարեկամս
նո՛ւ , քան եթէ վա՛ր նո՛ց մեռանիցի , որ ճշմարիտ
նոսկ է .

Հ ա ւ ա ր ա ր . Ժ-Ո .

Օձնէ կոչեցի բարեկամս , զի զամ ղոբ լո՛ւայ
ի հօրէ նմանէ , ծանուցի նո՛ց .

Ի հաւատ ժ-Բ. հետեւեալ դլխոյն քո՛ւ ասէ ցաշա-
կերտս նո՛ւ , եւս բազում ինչ ունիմ ասել նո՛ց , այլ
ոչ կարէք հանդուրժել այժմիկ : յորժամ եկեսցէ նա ,
հոգի ճշմարտութե՛ն , ուսուսցէ նո՛ց զամ ճշմարտու-
թի՛ն : զի արդ ուրեմն ասէ թէ զամ ղոբ լո՛ւաւ ի
հօրէ նո՛ւմանէ , ծանոյց նո՛ց ?

Պա-

Պատասխան. Քո բազում ինչ ոչ յայտնեաց աշա-
կերտաց նորոց, զոր յետոյ հոգին սբ յայտնեաց նոյ-
ին առեալ չէր ի հօրէ հրամանն յայտնել նոյ-
ին. Իսկ զոր ինչ լուեալ էր նոր ի հօրէ, այսինքն, զոր ինչ
հրամանն ունէր ի հօրէ ծանուցանել նոյ-
ին, ծանոյց իսկ;
զոր օրինակ գիտորհուրդս մահուանն, և յարու-
թեանն նորոյ: զմիւս անգամ գալուստն նոր և այլն. Գի-
տել ծանուցին, ասէ, այսինքն, ծանուցին, անցեալ կա-
տարեալ, փոխանակ ապառնւոյն; ոյր է գոհանալ ի
դիմս սբ բազում անգամ.

Հաւատաց. իւր.

Իմ եթէ չէր եկեալ, և խօսեցեալ ընդ
նա, մեղք ինչ ոչ ունէր նոյ-
ին.

Թէ և չէր երբեք առեալ հրէից գիշանաս մա-
թէ և չէր լուեալ նոյ-
ին գիմարդապետութեն նր; սա-
կայն ունէին նք գմեղս բազումս: քանզի հպարտաց
էին; արծաթասիրաց; կեղծաւորք; փառասիրք.
Բայց ոչ խօսի առաւ քո յաղագս մեղաց հրէից առ
հաստատակ, այլ միւս յաղագս անհաւատութե
նոյ-
ին: գի գիկն առնելոյ նոյ-
ին գայնքան սքանչելիս
մա; և գիկն լսելոյ նոյ-
ին գայնքան քարոզութիս նր;
սակայն խստացուցանէին զսիրտս նորա ոչ հա-
ւատալ ի նա: զոր մեղն անհաւատութե չունէին
արդեօք հրէայք, եթէ քո եկեալ չէր առ նա: քանզի
գի կարէին յօդել գպատճառս, և գանկինս արդա-
րացուցանել առելով, ոչ հաւատացաք ի քեզ, քանզի
գի գքեզ ոչ առեաք, և նայնպէս քում ոչ լուաք.

Բայց

քայց տեսին, և լուան, և ոչ հաւատացին; ու-
րեմն մեղայ նո՛ չէք պատասխանեն.

ղՀԼ. Թէ և չէր եկեալ քո՛ւ առ հրեայսն, դոյր
արդեօք մեղք նո՛ ; քայց մեղքն այն այնչափ ծանր
չէր, որչափ ծանր է զինն տեսանելոյ նո՛ զՔՆ, և
զինն լսելոյ զմարդապետութի՛ն նո՛. Լո՛ւեցին Թոյլք,
և խաւսախրոք ընթատունեայք, Լո՛ւեցին, և դողա-
ցին; զի յետ լսելոյ զայնքան խրատս, և քարոզու-
Թիս, յանդուեալ, այնդեալ, անդարձ կան և ճնան
ի մեղս իւրեանց. Հ՚նտեն, և ոչ առնեն; ուսան՛
ծանրանան մեղք նո՛, և արժանի լինին սաստկագոյն ղուկ
պատժոյ. Ծառայ որ գիտեցէ զկամս ՏՐՈՆ իւրոյ, ԺԲ. ԽԵ.
առէ ՏՐՈ՛Ն, և ոչ պատրաստեցէ ըստ կամաց նո՛,
արբցէ դան բազում: և որ ոչն գիտեցէ, և արժա-
նի ինչ դանի գործեցէ, արբցէ դան սակաւ. Եւ
ղՀԼ, որում շատ տուաւ, շատ խնդրեսցի ի նմանէ;
և որում բազում աւանդեցաւ, առաւե՛լ ևս պա-
հանջեսցին ի նմանէ. Վա՛յ մեզ, և վա՛յ վատաս-
բառութե՛ մերում! Ողորմածաւս փրկութե՛ դարձու-
ցանեմք ի դատապարտութե՛ պատճառն: Եբբև
զդիշերահաւս կուրանամք ի լուսոյ: և նմանք սար-
դից, և այլ Թունաւոր ժըժմանց, որք զծծեալ ի
ծաղկաց զանուշագոյն մեղր դարձուցանեն ի մահա-
բեր Թոյնն; ի մահահալած խրատուց, և քարոզու-
Թեց, պատրաստեմք մեզ զխաստագոյն դատաստան,
և զանդառնալի կորուստ.

Տոյժամ եկեսցէ մսխնաարնչն ..... որ ի հօրէ ելանէ .

Տաղաւար բղխման Հոգւոյն սբոյ , ի հօրէ և յորդւոյ .

աշհաւասնիկ ասէ յորդին թէ հոգի սբ ելանէ ի հօրէ ; ոչ ասէ թէ ելանէ և յորդւոյ : ապա ի զուր յանդիմանեմք զյոյնս վասն հերձուածողութեան , զի ասեն թէ հոգի սուրբ բղխեալ է ի հօրէ միայն , և ոչ յորդւոյ .

Պատասխան . քանզ այսոքիկ (որ ելանէ ի հօրէ) ոչ են բացորոշականք յորդւոյն , եթէ թէ հոգի սբ ոչ ելանիցէ և յորդւոյ . Օր օրինակ , յոյժամ ասէ քն՝ Տօհան. ԺԴ. Ե. ես ի հայր , և հայր յիս : քանզ այսոքիկ ոչ են բացորոշականք հոգւոյն սբոյ ; եթէ թէ հոգի սբ ոչ ունի և ես ի հայր , և յորդւոյ . Նոյնպէս յոյժամ ասէ յորդին յաղագս հոգւոյն սբոյ , թէ յինմէ առնու , քանզ այսոքիկ ոչ են բացորոշականք հօր , Տօհան. ԺԶ. ԺԴ. եթէ թէ հոգի սբ ոչ առնուցու և ի հօրէ .

Իսկ յաղագս հոգւոյն սբոյ , և բղխման նր ի հօրէ , և յորդւոյ , գիտելի է , թէ սբ աշակերտք և հաւատացեալքն իբրեանց ; և զինն նց , Նախկին սբ ժողովն ի դաւանութեանէ հաւատոյ զոր աւանդեաց մեզ Տէրն , զայլ ինչ ոչ ասացին յաղագս հոգւոյն սբոյ , բայց զայս միայն , Հաւատամ ի Հոգի սբ , ոչ ինչ սահմանելով վասն աճման նր ; կամ վասն բղխման նր ի հօրէ , և յորդւոյ . Յետոյ յոյժամ հոդեւորքս ամբարձոն սկսաւ հայհոյել , թէ հոգի

սբ

